This project is funded by the European Union

HEINRICH BÖLL STIFTUNG SOUTH CAUCASUS

Pink Armenia

CRRC ARMENIA

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն

ISBN 978-9939-1-0381-5

9 789939 103815

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԱՐԻՔ ՀԿ
(ՓԻՆՔ ԱՐՄԵՆԻԱ)
ԵՐԵՎԱՆ, 2016

«Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն» հետազոտությունը իրականացրել է Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն՝ Եվրամիությունից ֆինանսավորվող «Համերաշխության ցանց ԼԳԲՏԻ մարդկանց համար Հայաստանում և Վրաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է Հենրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակը:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ն 230

Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց
Ն 230 նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն.-
Եր.: <<Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք>> ՀԿ, 2016.- 149 էջ:

© Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ (Փինք Արմենիա)
Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) - Հայաստան, 2016
www.pinkarmenia.org
ISBN 978-9939-1-0381-5

Այս աշխատությունը պատրաստվել է Եվրոմիության աջակցությամբ: Հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն, և այն չի արտացոլում Եվրոմիության կարծիքը:

Սույն հրատարակությունն օգտագործելիս Փինք Արմենիայի և/կամ ՀՌԿԿ Հայաստանի փորձագետներին հղում կատարելը պարտադիր է ՝ քննադատական հոդվածներում կամ գրախոսականներում կարճ մեջբերումների դեպքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
Հապավումների ցանկ 8
Հիմնական հասկացություններ 9

Մաս 1. Որակական հետազոտություն. գրականության վերլուծություն 11
Ներածություն 12
Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը 14
Ընդհանուր իրավական դրությունը 15
Կարճ պատմական ակնարկ 17
ԼԳԲՏԻ անձանց դե ֆակտո/իրական վիճակը երկրում 18
Գիտելիք 18
Վերաբերմունք և ընկալումներ 19
Դիրքորոշում և գործողություններ 20
Ատելության խոսք 20
Հավասարություն և խտրականություն բացառում 21
Արտահայտվելու և հավաքների ազատություն 22
Ատելության հիմքով հանցագործություններ և դրանց հետևանքները 22
ԼԳԲՏԻ ակտիվիստներ և իրավապաշտպաններ 23
Սեքսիզմի մակարդակը երկրում 24
Ավանդական գաղափարախոսությունների բնույթը 26

Մաս 2. Քանակական հետազոտություն. սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփում 29
Ներածություն 30
Հետազոտության մեթոդաբանություն 31
Նպատակը և խնդիրները 31
Ընտրանքի ձևավորման մեթոդաբանությունը 31
Հետազոտության գործիքը 32
Դաշտային աշխատանքների նկարագրությունը 34
Հարցվածների ընդհանուր բնութագիրը 35
Վերլուծության մեթոդաբանություն 36
Հետազոտության հիմնական արդյունքները 37

Հարցվածների արժեքային կողմնորոշումներն ու դրանց վրա ազդող գործոնները 37
ԼԳԲՏԻ մասին տեղեկատվության ստացման աղբյուրներն ու դրանց նկատմամբ վստահությունը 37
Ընտանիքը՝ որպես գերազանցապես առաջնային արժեք 39
Արժեքային կողմնորոշումները պայմանավորող աշխարհաքաղաքական նախապատվությունները 39
Արժեքային կողմնորոշումներ 40
Աջակողմյան ավտորիտարիզմ 40
Սոցիալական գերիշխանություն 41
Կրոնական արմատականություն 42
Աշխարհաքաղաքական նախապատվությունը՝ որպես արժեքային կողմնորոշման գործոն 43
ԼԳԲՏԻ մասին գիտելիքի և կարծրատիպերի ու առասպելների փոխկապվածությունը 45
ՍԿԳԻ ձևավորման հիմքերը 45
Նույնասեռական անձանց մասին կարծրատիպերը 46
Շփումը ԼԳԲՏԻ անձանց հետ 49
ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դիրքորոշումները 51
Նույնասեռական անձանց նկատմամբ դիրքորոշումները 51
Բիսեքսուալ անձանց նկատմամբ դիրքորոշումները 53
Տրանսգենդեր անձանց նկատմամբ դիրքորոշումները 54
ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները և առասպելները 55
Սեռականության դրսևորման արժեքային սահմանները 56
ԼԳԲՏԻ անձանց իրավունքների սահմանները 57
ԼԳԲՏԻ անձանց իրավունքների մասին ընկալումները 57
Երեխաները՝ որպես հասարակության խոցելի խումբ 59
ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները և իրավունքների սահմանները 60
Եզրակացություն 61
Առաջարկություններ 62
Համառոտագիր 64
Հավելվածներ 67
Հավելված 1. Որակական հետազոտությունը վերանայած փորձագետների ցանկ 67
Հավելված 2. Աղյուսակներ և գծապատկերներ 67
Օգտագործված գրականության ցանկ 78

ՆԱԽԱԲԱՆ

Որպես պատմականորեն ավանդական հասարակություններ՝զարգացման որոշ ոլորտներում Հայաստանն ու Վրաստանը երկար ճանապարհ են անցել Սովետական Միության անկումից հետո: Սակայն բազմաթիվ մարտահրավերներ կան մարդու իրավունքների համատեքստում, որոնք բոլոր խմբերի համար դեպի հավասար իրավունքներ տանող երկար, դժվարին և խոչընդոտներով լի ճանապարհ են կանխատեսում:

Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) մարդիկ ամենամեկուսացված, անտեսանելի և խտրականության ենթարկվող խմբերն են Հայաստանում և Վրաստանում: Չնայած վերջին տարիների ձեռքբերումներին՝(հատկապես Վրաստանում 2014 թ-ին «Բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին» օրենքի ընդունմանը) խմբի անդամները շարունակում են ենթարկվել բռնության, ճնշումների և ոտնձգությունների հասարակության, ինչպես նաև կոնկրետ հաստատությունների կողմից, ներառյալ բժշկական հաստատությունները և աշխատավայրը:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (ՍԿԳԻ) հիմքով կատարված ատելության հանցագործությունները հաճախ չեն բարձրաձայնվում՝ մնալով առանց քննության և հատուցման: Խորն արմատացած հոմո/բի/տրանսֆոբիան, տարածվելով հասարակության գրեթե բոլոր շերտերի վրա, ամրապնդվում է ավանդական արժեքներով, ինչպես նաև երկակի, հետերոնորմատիվ գենդերային դերերով, որոնք իրենց հերթին խթանում են այս երկու երկրներում առկա խտրական մշակույթը՝ խոչընդոտելով ԼԳԲՏԻ մարդկանց իրացնել իրենց իրավունքները և ազատությունները: Ժողովրդավարական արժեքների և փոքրամասնությունների իրավունքների մասին թերի պատկերացումները նույնպես Սովետական Միության ժառանգությունն են և հատուկ են չլուծված կոնֆլիկտներով և գոյատևելու գաղափարախոսությամբ ապրող փոքր ազգերին, որտեղ ԼԳԲՏԻ մարդիկ դիտվում են որպես վտանգ տեղական սովորույթների և ավանդույթների պահպանման համար[1]:

Երկու երկրներում ԼԳԲՏԻ մարդկանց նկատմամբ խտրականության դեմ պայքարելու նպատակով Հայնրիխ Բյոլ Հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակը իրականացնում է ԵՄ-ի ֆինանսավորմամբ «Համերաշխության ցանց ԼԳԲՏԻ մարդկանց համար Հայաստանում և Վրաստանում» ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է Վրաստանում Կանանց նախաձեռնությունների աջակցման խումբ (WISG) և Մարդու իրավունքների կրթություն և մշտադիտարկման կենտրոն (EMC) ՀԿ-ների, իսկ Հայաստանում՝ Հասարակություն առանց բռնության (SWV) և Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք (PINK Armenia) ՀԿ-ների հետ համատեղ:

Ծրագրի հիմնական նպատակներն են բարձրացնել պաշտպանությունն ու հարգանքը ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքների նկատմամբ, պայքարել հոմոֆոբիայի դեմ և աջակցել ԼԳԲՏԻ մարդկանց ներառմանը հայաստանյան և վրաստանյան հասարակությունների մեջ: Ծրագրի կոնկրետ նպատակներն են օգնել ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքների լիակատար իրականացմանը՝ ապահովելով ԼԳԲՏԻ-բարեհաճ միջավայր Վրաստանում ու Հայաստանում և խթանելով քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը ՍԿԳԻ հարցերում:

Սույն տպագրությունը ծրագրի գործընկերների կողմից համակարգված միամյա ջանքերի արդյունք

1 Սիլվիա Շտոբեր, ԼԳԲՏ իրավունքները հարավային Կովկասում, Հայնրիխ Բյոլ Հինադրամի հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակ. https://ge.boell.org/en/2013/05/30/lgbt-rights-south-caucasus

է, որ նախատեսում էր հետևյալ երկու հետազոտությունների ստեղծումն ու իրականացումը. հոմո/բի/տրանսֆոբիայի նկատմամբ հասարակական վերաբերմունքի լայնածավալ ուսումնասիրություն և ԼԳԲՏԻ մարդկանց իրավական և ֆիզիկական իրավիճակի գնահատում երկու երկրներում:

Հասարակական վերաբերմունքի լայնածավալ ուսումնասիրությունն իր մեջ ներառում է նաև հասարակական նախապաշարումների և կարծրատիպերի խորքային ուսումնասիրություն, որ նպատակ ունի հեշտացնել հոմո/բի/տրանսֆոբիայի չափերի և տեսակների ուսումնասիրումը Հայաստանում և Վրաստանում: Չնայած նույնասեռականության նկատմամբ հասարակական վերաբերմունքի չափման մի քանի ուսումնասիրություններ անցկացվել են երկու երկրներում էլ՝ (օր.՝2011 ՀՌԿԿ Կովկասյան բարոմետր[2]) այս հետազոտության մասշտաբները աննախադեպ են՝ հնարավորություն տալով ունենալ ինտեգրված տեսակետ ԼԳԲՏԻ մարդկանց վերաբերյալ գերիշխող վերաբերմունքի և գիտելիքի մասին: Գրեթե նույնական մեթոդաբանություն է օգտագործվել Հայաստանի և Վրաստանի համար, որը հետագայում տվյալները համեմատելու հնարավորություն կտա:

Հայաստանում և Վրաստանում ԼԳԲՏԻ մարդկանց իրավական և ֆիզիկական պայմանների իրավիճակի գնահատումը իրավական ստանդարտների խորքային վերլուծություն է, որն իր մեջ ներառում է առկա միջազգային և տեղական օրենսդրությունը, տարբեր ոլորտներում խտրականության դեպքերի ուսումնասիրումը, ԼԳԲՏԻ մարդկանց նկատմամբ պետության պատասխանատվությունը, ինչպես նաև համապատասխան ծառայություններից օգտվելու նրանց հնարավորություններն առողջապահության, կրթության և այլ ոլորտներում:

Երկու ուսումնասիրությունները և դրանցում տեղ գտած կոնկրետ թեմաները հիմք կծառայեն երկու երկրներին համապատասխան երկարաժամկետ և փաստարկված ռազմավարություն մշակելու, ինչպես նաև կոնկրետ դերակատարներին ուղղված առաջարկությունների փաթեթ ստեղծելու համար՝ բարձրաձայնելու ԼԳԲՏԻ մարդկանց խնդիրները: Ռազմավարական փաստաթուղթը և երկու ուսումնասիրությունների արդյունքները որպես հիմք կօգտագործվեն ծրագրի շրջանակներում իրազեկման բարձրացման տարատեսակ միջոցառումների, քաղաքացիական հասարակության, ԼԳԲՏԻ կազմակերպությունների, ակտիվիստների և նախաձեռնող խմբերի կարողությունների զարգացման համար:

Հայնրիխ Բյոլ Հիմնադրամը հիրհատուկ շնորհակալությունն է հայտնում ծրագրի վերոնշյալ չորս գործընկերներին մեթոդաբանությունը մշակելու իրենց բծախնդիր աշխատանքի և ուղղորդված ջանքերի, հետազոտության գործիքների ստեղծման, խորքային վերլուծություններ պատրաստելու և երկու ուսումնասիրությունների տպագրումն ապահովելու համար: Շնորհակալ ենք նաև Վրաստանում Սոցիալական ոսումնասիրությունների և վերլուծությունների ինստիտուտին և Հայաստանում Կովկասյան հետազոտությունների ռեսուրսային կենտրոն (ՀՌԿԿ) - Հայաստան հիմնադրամին և Լուսինե Սաղումյանին իրենց մատչելի դաշտային աշխատանքների, տվյալների հավաքագրման և վերլուծության համար, փորձագետներ Էկատերինե Աղդգոմելաշվիլիին, ով գրեթե միայնակ ապահովեց յուրաքանչյուր հարաբերակցության վավերականությունը և ներդրեց անհամար ժամեր որակյալ, բազմակողմանի և լավ հիմնավորված զեկույց պատրաստելու համար, ինչպես նաև Էլմիրա Բախշինյանին, Ջեք Վահան Բուռնազյանին և Մարիամ Օսիպյանին իրենց արժեքավոր և ծավալուն աշխատանքի համար: Հայնրիխ Բյոլ Հիմնադրամի աշխատակիցներ Էկա Ծերեթելին նույնպես արժանի է գովասանքի հոմոֆոբիկ վերաբերմունքի մասին ուսումնասիրության գրաֆիկ դիզայնի համար, ինչպես նաև

2 Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ), Նույնասեռականության նկատմամբ վերաբերմունքը Հարավային Կովկասում http://crrc-caucasus.blogspot.com/2013/07/attitudes-towards-homosexuality-in.html

Ան Նեմսիցվերիձե-Դանիելսը՝ իրավիճակի գնահատման մասին ուսումնասիրության թարգմանության և խմբագրության համար և Հասմիկ Հայրապետյանը՝ քանակական գործիքների թարգմանության համար:

Մենք հուսով ենք, որ մանրամասն կատարված այս երկու հետազոտություններն ավելի հասկանալի կդարձնեն ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքների իրադրությունը Հայաստանում և Վրաստանում և երկարաժամկետ ռազմավարության ճանապարհ կհարթեն, որ կապահովի նրանց պաշտանությունն ու կյանքի բոլոր բնագավառներում ամբողջական ներգրավվածությունը, ինչն ավելի կամրապնդի ժողովրդավարական զարգացումն ու կտանի դեպի ներառական ու հանդուրժող, խտրականությունից զերծ հասարակություն:

Թբիլիսի, 23 Մարտի, 2016թ.

Նինո Լեժավա

Տնօրեն

Հայնրիխ Բյոլ Հիմնադրամ

Հարավային Կովկասի գրասենյակ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԳԱԻ Գենդերային անհավասարության ինդեքս

ԵԱՀԿ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵԽ Եվրոխորհուրդ

ԵՄ Եվրոմիություն

ԵՏՄ Եվրասիական տնտեսական միություն

ԼԳԲՏԻ Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս

ԿԱՀ Կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության

ՀԿ Հասարակական կազմակերպություն

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՀՆԱ Համախառն ներքին արդյունք

ՀՌԿԿ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն

ՄԱԶԾ Միավորված Ազգերի (ՄԱԿ-ի) Զարգացման Ծրագիր

ՄԶԻ Մարդկային զարգացման ինդեքս

ՌԴ Ռուսաստանի Դաշնություն

ՍԿԳԻ Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիսեքսուալ – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակում ունի և՛ նույն, և՛ հակառակ սեռի անձանց նկատմամբ:

Գեյ – (նույնասեռական տղամարդ) տղամարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի այլ տղամարդու նկատմամբ:

Գենդեր – վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից: Գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ:

Գենդերային ինքնություն – վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելաձևը:

Գենդերիզմ – մշակութային համոզմունք, ըստ որի գենդերը երկբևեռ է, կա կամ պետք է լինի միայն երկու գենդեր:

Ինտերսեքս – մարդ, որը կենսաբանորեն ունի և՛ արական, և՛ իգական սեռերին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններ՝ ինչպես քրոմոսոմային կամ հորմոնալ, այնպես էլ սեռական օրգանների ձևով, ինչի արդյունքում չի կարողանում իրեն լիարժեքորեն նույնականացնել ոչ տղամարդու, ոչ էլ կնոջ հետ:

ԼԳԲՏԻ համայնք – լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից:

Լեսբի – (նույնասեռական կին) կին, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի այլ կնոջ նկատմամբ:

Հետերոսեքսուալ – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի հակառակ սեռի ներկայացուցչի նկատմամբ:

Հոմոսեքսուալ (լեսբի կամ գեյ) – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ:

Հոմոֆոբիա – երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող մարդկանց և նույնասեռականության նկատմամբ:

Սեռական կողմնորոշում – անհատի ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հրապուրանքը նույն կամ հակառակ սեռի անձի հանդեպ:

Սեռականություն – յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունը, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ:

Տրանսգենդեր – ընդհանրական տերմին, որն օգտագործվում է այն մարդկանց համար, որոնց գենդերային ինքնությունը, արտահայտումը և վարքագիծը տարբերվում են նրանց կենսաբանական սեռի բնութագրական հատկանիշներից:

Տրանսգենդեր կին – արական սեռով ծնված մարդ, որն իրեն համարում է կին:

Տրանսգենդեր տղամարդ – իգական սեռով ծնված մարդ, որն իրեն համարում է տղամարդ:

Տրանսֆոբիա – երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք տրանսգենդեր անձանց նկատմամբ:

ՄԱՍ 1.

ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ուսումնասիրությունն ուղղված է վերլուծելու սոցիալական, մշակութային, քաղաքական և այլ մակրոսոցիալական գործոնների ազդեցությունը հայ հասարակության հոմոֆոբիկ և տրանսֆոբիկ միջավայրի վրա: Հաշվետվությունը կարող է օգտագործվել առաջարկությունների և հատուկ ռազմավարությունների մշակման համար, որոնք կոչված են հաղթահարելու հոմոֆոբիան Հայաստանում:

Ավելի քան 30 հաշվետվություններ և հրապարակումներ (ներառյալ տարբեր կանոնակարգեր, ռազմավարություններ և ծրագրային փաստաթղթեր) են վերլուծվել, որպեսզի հնարավոր լինի ամփոփել ԼԳԲՏԻ անձանց հանդեպ գերիշխող սոցիալական նախապաշարումները, կարծրատիպերը, դիրքորոշումներն ու գործողությունները, ինչպես նաև բացահայտել դրանց առանձնահատկություններն ու ծագումնաբանությունը: Ի հավելումն, մի քանի փորձագետներ վերանայել են հաշվետվությունը և արել են իրենց առաջարկությունները, ինչը հնարավորություն է տվել բարելավել զեկույցի բովանդակությունն ու կառուցվածքը:

Հաշվետվության հիմնական ուղերձների հակիրճ ամփոփումը ներկայացված է ստորև:

Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ հասարակության կողմից նույնասեռականության ընդունումը մեծապես կախված է երկրի սոցիալ-տնտեսական և կրոնական իրադրությունից (Փյու հետազոտական կենտրոն, 2013), ուստի կարևոր է պատկերել հայաստանյան իրադրությունը տվյալ երեք գործոնների համատեքստում: Անկախությունից հետո Հայաստանը սկսեց մեծ թափով իրագործել լայնամասշտաբ և համընդգրկուն ինստիտուցիոնալ, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, որոնք ուղղված էին մարդկային կայուն զարգացմանը: Վերջին տասնամյակում երկու կարևոր իրադարձություն մեծ ազդեցություն ունեցան Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքի վրա. 2008-ի գլոբալ տնտեսական ճգնաժամի արդյունքում երկրի երկնիշ ՀՆԱ աճը էապես կրճատվեց: 2013թ-ին Հայաստանը հայտարարեց Մաքսային միությանը, այնուհետ Եվրասիական Տնտեսական Միությանը (ԵՏՄ) միանալու մասին՝ չստորագրելով ԵՄ-ի հետ ծրագրված Ասոցացման համաձայնագիրը:

Ներկայումս երկիրը բնորոշում են հետևյալ ցուցիչներով՝ բնակչության մոտ մեկ երրորդը դեռ մնում է աղքատ, հսկայական տարբերություն կա էլիտայի և բնակչության մնացած մասի միջև, և ընտրությունները, որպես կանոն, չեն արտացոլում քաղաքացիների կամքը: Այլ մտահոգությունները կապված են հայ-ադրբեջանական սահմանում և ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում աճող լարվածության, ազատ արտահայտվելու և միություններ կազմելու սահմանափակումների և դատական համակարգում անկախության պակասի հետ: Որոշ հաշվետվություններ վերոնշյալ մտահոգություններին հավելում են նաև քրեակատարողական հիմնարկների անբարենպաստ պայմանները, ներառյալ գերբնակեցումը, անմարդկային վերաբերմունքը և խտրականությունը ԼԳԲՏԻ անձանց հանդեպ (Հյուման Ռայթս Վոտչ, 2015):

Հայաստանը և՛ միջազգային, և՛ ներքին իրավական ակտերով պարտավորվել է ապահովել սեռական կողմնորոշման հիմքով հավասարության և խտրականության բացառման սկզբունքները: Այսպիսով, նույնասեռականությունը դադարել է լինել քրեորեն պատժելի 2003 թվականից, ԼԳԲՏԻ անձինք ունեն սահմանադրությամբ երաշխավորված իրավական պաշտպանվածության միևնույն իրավունքները, ինչ ՀՀ մյուս քաղաքացիները, պետությունը վավերացրել է Գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման հարցերով ՄԱԿ-ի 2008 թվականի հռչակագիրը, որն արգելում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը:

Թեև Հայաստանի կառավարությունը ստորագրել և վավերացրել է ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի պայմանագրերը, համաձայնագրերն ու այլ գործիքներ, սակայն բազմաթիվ զեկույցներ, որոնք ամփոփում են մարդու իրավունքների իրադրությունը գործնականում, հաստատում են, որ պետությունը չի կատարում իր պարտավորությունները, երբ խոսքը վերաբերում է սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը: Ահա որոշ գոյություն ունեցող բացեր, որոնք մատնանշում են ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ոտնահարումը երկրում. Հայաստանի Քրեական օրենսգիրքը չի սահմանում ատելության հիմքով հանցագործությունը և

ատելության խոսքը որպես առանձին հանցագործության տեսակներ, չկան սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանության հատուկ մեխանիզմներ, ոչ մի կարգավորում չկա ԼԳԲՏԻ զույգերի ընտանիք կազմելու և/կամ քաղաքացիական ամուսնություն գրանցելու իրավունքի վերաբերյալ:

Հայկական օրենսդրությունում վերոհիշյալ առկա բացերի արդյունքում ԼԳԲՏԻ անձինք կյանքի տարբեր ոլորտներում շարունակում են ահաբեկումների, սպառնալիքների, հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվել, ներառյալ ընտանիքում, առողջապահության ոլորտում, օրենսդիրների կողմից, զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ խտրականության այս դրսևորումները տեղի են ունենում ոչ միայն օրենսդրական բացերի, այլ նաև ԼԳԲՏԻ անձանց հանդեպ հասարակությունում արմատացած բացասական վերաբերմունքի պատճառով: Հասարակությունը սահմանափակ ձևով է ընկալում սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, ինչն էլ համատարած բնույթ է կրում: Դեռ ավելին, հասարակությունը նույնասեռականությունն ընկալում է որպես վարակիչ հիվանդություն: Ի տարբերություն այլ երկրների՝ թվում է, թե հասարակության ներկայացուցիչների տարիքն ու գենդերը որոշիչ գործոններ չեն Հայաստանում նույնասեռականության ընդունման հարցում:

ԼԳԲՏԻ անձինք հաճախ են դառնում ատելության խոսքի թիրախ ոչ միայն ծայրահեղ ազգայնական խմբերի կողմից, այլ նաև հանրային դեմքերի և պաշտոնյաների կողմից, ինչն էլ ավելի է արմատավորում ԼԳԲՏԻ համայնքի հանդեպ աճող նախապաշարումները: Դեռ ավելին, ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ և գենդերային հավասարության խթանմամբ զբաղվող իրավապաշտպանները իրենց գործունեության արդյունքում նույնպես դառնում են բռնությունների և հարձակումների թիրախ: Իշխանությունների արձագանքը ԼԳԲՏԻ անձանց և իրավապաշտպանների նկատմամբ նմանատիպ հարձակումների վերաբերյալ հապաղում է և համարժեք չէ:

ԼԳԲՏԻ անձանց հանդեպ բացասական վերաբերմունք ու խտրականություն խրախուսող գործոններից են Հայաստանում գենդերային անհավասարության և հասարակության կրոնականության բարձր մակարդակը: Երկրում գերիշխում են գենդերային կարծրատիպերը, գենդերային բռնությունն ու կանանց ցածր ներգրավվածությունը որոշումների կայացման մեջ: Ինչ վերաբերում է երկրում կրոնականության բարձր մակարդակին, պետք է նշել, որ եկեղեցին կարող է որոշիչ դեր ունենալ նույնասեռականության ընդունման հարցում: Սակայն Հայ առաքելական եկեղեցու տեսակետը նույնասեռականության վերաբերյալ ընդգծված բացասական է, նույնասեռականությունը համարվում է մահացու մեղք: Եկեղեցու ընդգծված բացասական վերաբերմունքը, համապատասխանաբար, խթանում է թշնամական միջավայրն ու ամուր հիմք նախապատրաստում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ բռնությունների և ոտնձգությունների համար:

Խտրականության և հոգեբանական/ֆիզիկական բռնության բարձր մակարդակի պատճառով Հայաստանում դժվար է քննարկել ԼԳԲՏԻ խնդիրները: Շատերը նախընտրում են թաքցնել իրենց սեռական կողմնորոշումը և/կամ գենդերային ինքնությունը, ԼԳԲՏԻ ակտիվիզմը սահմանափակ է: Միայն 2003 թվականին նույնասեռականության ապաքրեականացումից հետո էր, որ ԼԳԲՏԻ համայնքը սկսեց կազմակերպվել: Ձեկույցի պատրաստման ժամանակահատվածում Հայաստանում գրանցված 4000 ՀԿ-ներից միայն երեքն են բաց հայտարարում, որ իրենց թիրախային խմբում ընդգրկված են ԼԳԲՏԻ անձինք: Այս կազմակերպությունները անհրաժեշտ ծառայություններ են մատուցում ԼԳԲՏԻ համայնքին և ակտիվորեն պայքարում են Հայաստանում ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանության համար:

Հիմնվելով այս ուսումնասիրության և որոշ փորձագետների հետ խորհրդակցությունների վրա՝ որոշ առաջարկներ են մշակվել՝ ներկայացնելու պետությանը, գործադիր մարմնին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին (ՄԻՊ) և լրատվամիջոցներին, որոնք ներկայացված են սույն հաշվետվության վերջում:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հայաստանը միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր է, մոտ երեք միլիոն բնակչությամբ: Միավորված Ազգերի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Մարդկային զարգացման ինդեքսը (ՄԶԻ) 2014 թվականի համար կազմում էր 0,730, որը երկիրը դնում էր մարդկային բարձր զարգացածության կատեգորիայում և Հայաստանի համար ապահովում էր 87-րդ տեղը 187 երկրների և տարածքների շարքում: 1990-2013 թվականների ընթացքում Հայաստանի ՄԶԻ-ն 0,632-ից հասել էր 0,730-ի, որը 15,5%-ի աճ էր կամ 0,63%-ի միջին տարեկան աճ (ՄԱԶԾ, 2014):

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) արագ աճեց 2002-2007 թվականներին՝ տարեկան միջին 13% աճով, բայց կտրուկ ընկավ 2009-ին՝ գլոբալ ֆինանսական ճգնաժամի արդյունքում: Տնտեսությունը վերադարձավ աճին 2012 թվականի սկզբին՝ առավել մեծ ուշադրություն սևեռելով այնպիսի ծառայությունների վրա, ինչպիսիք են ՏՏ-ն (տեղեկատվական տեխնոլոգիաներ), արդյունաբերությունը, հանքագործությունը և գյուղատնտեսությունը: Հայաստանի զարգացումն անմիջականորեն կապված էր գիտելիքի վրա հիմնված տնտեսության, հմուտ աշխատուժի փոփոխման վրա, և ակնառու առաջընթաց տեղի ունեցավ ազգային նորարարական համակարգի հիմնադրման հարցում (EIU, 2014):

Տնտեսական աճը Հայաստանում կրկին դանդաղեց 2013 թվականին (2012-ի 7,2%-ից իջավ 3,5%) ավելի մեծ արժեզրկմամբ՝ ներառյալ էլեկտրաէներգիայի և ներմուծված գազի գների աճը: ՀՆԱ այս դանդաղեցումը շարունակվեց 2014 թվականին՝ 3,4%, սակայն աճեց մինչև 5% 2015 թվականի կեսերին, և ուղեկցվեց դրամի արժեզրկմամբ (ՀԶԲ, 2014): Սա արտացոլում էր տարածաշրջանում տնտեսության վիճակի վատթարացումը մասնավորապես Ռուսաստանում, որը Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերն է և այնտեղ աշխատող միգրանտներից ստացվող դրամական փոխանցումների հիմնական աղբյուրը: Ռուսաստանի հետ պաշտոնական առևտուրը կազմում է Հայաստանի ՀՆԱ մոտավորապես 23%-ը, իսկ Ռուսաստանում գտնվող հայ աշխատուժի ուղարկած գումարները՝ մոտավորապես 17%-ը (ԿԲ, 2014):

Թեև վերջին երկու տասնամյակի ընթացքում երկրում նվազեց ծայրահեղ աղքատության և սովի թիվը, դեռևս աղքատության մակարդակը երկրում մնում է բարձր: Հայաստանն օգտագործում է Համաշխարհային բանկի մեթոդաբանությունը աղքատության ցուցանիշը հաշվելու համար՝ Կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության միջոցով (ԿԱՀ): ԿԱՀ-ից ստացված 2014 թվականի տվյալները ցույց են տալիս, որ բնակչության գրեթե մեկ երրորդը (30%) աղքատ է (NSS, 2015): Անհանգստացնողն ու ահազանգողն այն է, որ հինգ տարեկանից ցածր երեխաների թիվը, որոնք տառապում են թերսնուցումից և թերհասությունից, շարունակում է աճել՝ սկսած 2000 թվականից (EIU, 2014): Երկրի համար մեկ այլ մեծ խնդիր է քաղաքական էլիտան, որը հասանելիություն ունի ռեսուրսների մեծ մասին, և բնակչության մնացած մասի բևեռացումը, որոնք պայքարում են գոյատևելու համար: ԿԱՀ-ը 2014 թվականին հաշվետվություն ներկայացրեց Ջինիի բարձրացած գործակցի մասին՝ 0.242-ից 2008-ին մինչև 0.277 2014-ին: Նրանք, ովքեր ներգրավված են Հայաստանի ժողովրդավարականացման գործընթացում, անհանգստանում են երկրում նկատվող կոռուպցիայի ինստիտուցիոնալականացմամբ (Քերոլ և Քուին, 2009; NSS, 2015):

Ինչ վերաբերում է երկրի քաղաքական միջավայրին, հարկ է նշել, որ ըստ Ֆրիդըմ Հաուսի, Հայաստանը «մասամբ ազատ» երկիր է, որի քաղաքական իրավունքների ցուցանիշը 5 է, իսկ քաղաքացիական ազատության ցուցանիշը՝ 7 բալանոց սանդղակով՝ 4, որտեղ 1-ը ամենաբարձր ցուցանիշն է, իսկ 7-ը՝ ամենացածրը: Վերջին տարիների ընթացքում որևէ առաջընթաց չի նկատվել (Ֆրիդըմ Հաուս, 2015):

ԵՄ-Հայաստան երկկողմ հարաբերությունների իրավական շրջանակը ձևավորվել է 1999 թվականին՝ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի ստորագրմամբ: Սկսած 2010 թվականից՝ Հայաստանը սկսեց ակտիվորեն բանակցել ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ՝ նպատակ ունենալով այդ գործընթացն ավարտել մինչև 2013 թվականի նոյեմբերը: 2013 թվականի սեպտեմբերին նախագահ Սարգսյանն անսպասելիորեն հայտարարեց երկրի՝ Մաքսային միությանը միանալու մասին, որը հետագայում պետք է դառնար ԵՏՄ, որը Ռուսաստանի կողմից ղեկավարվող

մաքսային միություն է, որի մեջ են մտնում նաև Բելառուսն ու Ղազախստանը, ինչի արդյունքում էլ դժգոհությունների լայնածավալ ալիք սկսվեց:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին նախագահ Սարգսյանի նախաձեռնությամբ Հայաստանում տեղի ունեցավ սահմանադրական հանրաքվե, որը նախագահական համակարգից պետք է անցում կատարեր խորհրդարանական հանրապետության: Ըստ պաշտոնական արդյունքների՝ սահմանադրական փոփոխություններին կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների 63%-ը: 2015թ-ի դեկտեմբերի 25-ի դրությամբ, ՀՀ գլխավոր դատախազությունը հաղորդել է, որ հետաքննվել են 499 ահազանգեր, որոնք վերաբերում էին այլ անձի փոխարեն քվեարկելուն և բազմակի քվեարկությանը, ինչպես նաև հանձնաժողովների, դիտորդների և վստահված անձանց գործունեության խոչընդոտմանը, և, որ հարուցվել է 52 քրեական գործ: Միջազգային դիտորդները[3] հաստատեցին, որ հանրաքվեն չի անցել միջազգային ստանդարտներին համապատասխան, այսպիսով, դրա արդյունքները չեն կարող արտացոլել Հայաստանի քաղաքացիների կամքը: Հայտարարվեց, որ «պաշտոնական տվյալները կեղծված են և որ հանրաքվեն ու դրա արդյունքում ընդունված փաստաթուղթը լեգիտիմ չեն»: (Քաղաքացի դիտորդ/EPDE, 2016):

2014-2015 թթ. Լեռնային Ղարաբաղի սահմանում իրավիճակը սրվեց: 1994 թվականին հրադադարի ստորագրումից հետո շատ գերիներ փոխանակվեցին: Առաջին անգամ հրադադարի ստորագրումից հետո՝ 2015թ դեկտեմբերին, հայկական ռազմական ուժերը զեկուցեցին, որ ադրբեջանական զինուժը ռազմական տանկեր է կիրառել Լեռնային Ղարաբաղի հարավ-արևելյան ճակատամերձ դիրքերում: ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը զեկուցեց Խորհրդարանին, որ իրավիճակը հասել է գագաթնակետին:

Հայաստանում կոռուպցիան լուրջ խնդիր է համարվում: Կաշառակերությունն ու հովանավորչությունը սովորական երևույթներ են պաշտոնյաների համար, որոնք հազվադեպ են պատասխանատվության ենթարկվում կամ հեռացվում աշխատանքից պաշտոնական դիրքի չարաշահման համար: Իշխանություններն օգտագործում են ճնշման մեթոդներ՝ ՁԼՄ-ների հեռարձակումները հսկողության տակ պահելու համար, որոնք շատ հայերի համար նորությունների հիմնական աղբյուրն է: Իշխանությունները նաև միջամտում են քաղաքացիների հավաքներ անցկացնելու իրավունքի իրացմանը, հաճախ չեն թույլատրում դրանք, ցրում են հավաքները կամ ֆիզիկական բռնության ենթարկում մասնակիցներին: Ի հավելումն, դատական համակարգն անկախ և թափանցիկ չէ (Ֆրիդըմ Հաուս, 2015):

Ինչպես կարելի է հասկանալ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրից, Հայաստանը այժմ մի քանի խնդիր ունի, որոնք խոչընդոտում են երկրի սոցիալական և մարդկային զարգացմանը: Այդ խնդիրներից որոշները, ինչպիսիք են արտահայտման և հավաքների սահմանափակումները, դատական համակարգի կախվածությունը, ԵՏՄ անդամակցության հետևանքով «ավանդական արժեքների» դիսկուրսի ուժեղացումը, հավելյալ բարդություններ են ստեղծում ԼԳԲՏԻ համայնքի համար: Դեռ ավելին, ԼԳԲՏԻ վերաբերող հարցերը հաճախ աղավաղվում են պետության շահերի օգտին, կամ ԼԳԲՏԻ խնդիրները «դիտվում են» որպես երկրորդական՝ այլ հրատապ հարցերի կողքին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր իրավիճակային վերլուծության համար ԼԳԲՏԻ անձանց կյանքի տարբեր ասպեկտների վրա ազդող օրենսդրական կարգավորումների նկարագրությունն անչափ կարևոր է: Այդ պատճառով հաշվետվության այս գլուխը ներկայացնում է վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների դինամիկան, ինչպես նաև անդրադառնում է դրանց կիրառման բացերին և մարտահրավերներին:

1922 թվականին՝ Բոլշևիկյան հեղափոխությունից մի քանի տարի հետո, նորակազմ Խորհրդային Միությունում նույնասեռականությունը դադարեց լի-

3. Վերահսկման առաքելությունն իրականացվել է Citizen Observer Initiative-ի և European Platform for Democratic Elections (EPDE)-ի կողմից, National Endowment for Democracy (NED)-ի, European Endowment for Democracy (EED)-ի, Երևանում Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության դեսպանատան և Եվրոմիության աջակցությամբ:

նել քրեորեն պատժելի: Սակայն, 1933 թվականին այն նորից ընդգրկվեց որպես հանցագործություն հայկական քրեական օրենսգրքում՝ հոդված 116, ապա վերջնականապես հեռացվեց քրեական օրենսգրքից 2003 թ-ին (ԻԼԳԱ, 2006; Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2009):

Ընդհանուր առմամբ, ըստ սահմանադրության, ԼԳԲՏԻ անձինք ունեն օրինական պաշտպանության նույն իրավունքները, ինչ մնացած բոլոր ՀՀ քաղաքացիները, թեև սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունն ու արտահայտումը սահմանադրության մեջ նշված չեն որպես հատուկ պաշտպանվող հիմքեր: Հայաստանը Հարավային Կովկասում առաջին պետությունն էր, որ 2008 թվականին ստորագրեց Միավորված Ազգերի հռչակագիրը՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության բացառման վերաբերյալ (ՀՌԿԿ, 2013; Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2009): Սակայն, իրականում ԼԳԲՏԻ մարդիկ չեն վայելում այդ պաշտպանությունը, և չկա ոչ մի երաշխիք, որ նրանց իրավունքները կպաշտպանվեն դատարանում կամ ոստիկանության բաժանմունքներում (Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ, 2010): Թեև ՀՀ կառավարությունը ստորագրել և վավերացրել է ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի բազմաթիվ պայմանագրեր, հռչակագրեր և այլ փաստաթղթեր, սակայն ընդհանուր առմամբ այն խնդիրները, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանության շրջանակներում սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանը, դեռևս հասցեագրված չեն: Գործնականում, խտրականությունը և անհանդուրժողականությունը հայ ԼԳԲՏԻ հանդեպ դեռ լայն տարածում ունի (Քերոլ և Քուին, 2009; Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2009):

Հայաստանի քրեական օրենսգիրքը չի տարբերակում ո՛չ ատելության հիմքով հանցագործությունը, ո՛չ ատելության խոսքը որպես առանձին հանցագործության տեսակ: Սակայն, մի շարք հանցանքների դեպքում ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն կամ կրոնական ֆանատիզմ ներառող շարժառիթը պատասխանատվություն և տուգանքներ սահմանելիս դիտարկվում է որպես ծանրացուցիչ հանգամանք: Բայց հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի հիմքով հանցագործությունների դեպքում ոչ մի հատուկ վերաբերմունք չկա (Քերոլ և Քուին, 2009): Ավելին, Հայաստանը տարածաշրջանում այն քիչ երկրներից է, որը ԼԳԲՏԻ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ պաշտոնական տվյալներ չի տրամադրել Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին (ԺՀՄԻԳ) (ԵԱՀԿ, 2012): Այնուամենայնիվ, Հայաստանում այդ խնդրով զբաղվող ՀԿ-ները զեկուցել են Երևանում տրանսգենդեր անձանց հանդեպ ֆիզիկական բռնությունների մասին, որոնց արդյունքում վերջիններս ստացել են լուրջ վնասվածքներ, ներառյալ ուղեղի վնասվածք (Հյուման Ռայթս Վոտչ, 2016): Ինչպես նշվել է, կա նաև ատելության խոսքի դեպքերին համապատասխան արձագանք տալու օրինական մեխանիզմների պակաս, որոնք կարգելեն ԼԳԲՏԻ անձանց դեմ ուղղված նմանօրինակ ելույթները:

Ինչպես հետագայում կքննարկվի այս հաշվետվությունում, ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ կատարված բռնության և ոտնձգությունների մի շարք դեպքեր կան նաև ոստիկանական պաշտոնյաների կողմից, բայց իրավական բացի պատճառով դրանք պաշտոնապես չեն արձանագրվել կամ քննվել (Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2009; Հյուման Ռայթս Հաուս, 2014):

Օրենսդրությունը չի նախատեսում հատուկ պաշտպանություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության, գենդերային արտահայտման հիմքով խտրականությունից: Չկան սահմանումներ խտրականության և դրան առնչվող այնպիսի հիմնական հասկացությունների համար, ինչպիսիք են խտրականության տեսակները, խտրականության համար նախատեսվող պատասխանատվությունը, խտրականության դեպքում ապացուցման բեռի բաշխումը, որոնք զրոյացնում են խտրականությունից պաշտպանվելու իրավական հնարավորությունները: Պետք է նշել, որ մի կողմից պետությունը պարտավորվածություններ ունի հռչակագրի դրույթների առջև, սակայն մյուս կողմից խտրականության տարբեր դեպքեր քննելիս ընտրողական վերաբերմունք է ցուցաբերում, մասնավորապես չի կիրառում միջազգայնորեն ճանաչված հակախտրական չափորոշիչները ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման դեպքերի առնչությամբ (Հյուման Ռայթս Հաուս Երևան, 2015):

Համընդհանուր պարբերական դիտարկման երկրորդ շրջանի ընթացքում (2015թ. հունվար) Հայաստանին արվեց 10-ից ավելի առաջարկ, որոնք պետությանը խորհուրդ էին տալիս միջոցներ ձեռնարկել ամեն տեսակի խտրականության դեմ պայքարելու համար և խտրականության դեմ համընդգրկուն օրենսդրություն ընդունել: Որոշ պետություններ (ինչպիսիք են Ավստրիան, Արգենտինան, Սլովենիան, Ուրուգվայը) իրենց առաջարկներում շեշտում էին ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականությունը (ՄԱԿ-ի Ընդհանուր ժողով, 2015):

Պաշտպանության նախարարության ներքին հայեցակարգն արգելում էր նույնասեռականներին ծառայել բանակում 2004 թվականին: Մարդիկ ազատվում էին պարտադիր զինվորական ծառայությունից՝ դասակարգվելով որպես հոգեկան խանգարում ունեցող անձ, ինչը հետագայում բերում էր մարդու իրավունքների այլ ոտնահարումների՝ կապված ապրանքներից և ծառայություններից օգտվելու, աշխատանքի ընդունվելու, վարորդական իրավունք ստանալու հասանելիության հետ և այլն (Փինք Արմենիա, 2015):

Ներկայումս Հայաստանում ոչ մի կարգավորում չկա ԼԳԲՏԻ զույգերի ընտանիք կազմելու և/կամ քաղաքացիական ամուսնություն գրանցելու իրավունքի վերաբերյալ: Նույնասեռական զույգերի բժշկական, ժառանգության և հարկային իրավունքներն ու շատ այլ սոցիալական և տնտեսական խնդիրները դեռևս մնում են չհասցեագրված: ՀՀ ընտանեկան օրենսգիրքը միայն ամուսնացած զույգերին է թույլատրում երեխա որդեգրել (Քերոլ և Քուին, 2009): Ինչպես նշվել էր ավելի վաղ, սույն հաշվետվության մեջ Հայաստանը 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացրեց սահմանադրական փոփոխությունների հանրաքվե: Նոր սահմանադրությունը նույնպես պարունակում է ազատությունների և իրավունքների սահմանափակումներ, այդ թվում՝ այնպիսի դրույթներ, որոնք վերաբերում են ԼԳԲՏԻ համայնքին: Նոր սահմանադրության 35 հոդվածն ասում է. «Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն» (Փինք Արմենիա): Այսպիսով, նոր սահմանադրությունը սահմանափակում է ամուսնության ազատությունը միայն հակառակ սեռերի անձանց միջև:

ԿԱՐՃ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լայնորեն տարածված կարծիք է, որ նույնասեռականների հանդեպ բացասական վերաբերմունքը մասամբ ժառանգություն է Խորհրդային ժամանակներից: Կոմունիստական առաջնորդները հավատում էին, որ նույնասեռականությունը կապիտալիստական հասարակության դեգրադացիայի արդյունք է: Մարդիկ շարունակում են նույնասեռականությանը վերաբերվել որպես հանցանքի, քանի որ երկար ժամանակ այն քրեորեն պատժելի էր Հայաստանում: Սա հատկապես վերաբերում է բնակչության ավագ սերնդին: Անկախությունից հետո, Հայ առաքելական եկեղեցու ազդեցությամբ, բնակչությանը հիշեցնում են, որ նույնասեռականությունը «մահացու մեղք» է, և որ հասարակությունը այն պետք է մերժի: Ի հավելումն, տարբեր լրագրողական վարքականոններ նպատակահարմար են համարում ինտիմ կամ անձնական կյանքի մասին խոսել զգուշավորությամբ: Բոլոր վերոնշյալ գործոններն իրենց լուման ունեն երկրում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ թշնամական վերաբերմունքի ձևավորման և տարածման գործում (Քերոլ և Քուին, 2009):

Կանանց միջև սեռական հարաբերությունները քրեորեն պատժելի չէին Հայաստանում: Սա ակընհայտ առավելություն էր՝ համեմատած նույնասեռական տղամարդկանց վիճակի հետ: 2002/3 թվականներին, երբ նույնասեռականությունը ապաքրեականացվեց, տղամարդկանց միջև սեռական հարաբերությունների նկատմամբ սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել, մինչդեռ կանանց միջև սեռական հարաբերությունները շարունակում էին մնալ անտեսված (Քերոլ և Քուին, 2009):

ԼԳԲՏԻ համայնքը սկսեց ինքնակազմակերպվել միայն 2003 թվականի նույնասեռականության ապաքրեականացումից հետո: Հայաստանում ամենավաղ ԼԳԲՏԻ նախաձեռնությունը կարելի է համարել 2003 թվականին ութ նույնասեռական տղամարդկանց և մի տրանսսեքսուալի հանդիպումը երևանյան սրճարաններից մեկում, որտեղ քննարկվել են վերջիններիս ընդհանուր հետաքրքրություններն ու ապաքրեականացման համատեքստում փոխադարձ աջակցության հարցերը: Այդ հանդիպումը լուսաբանվեց Ազգա-Ֆրանսի և Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի կողմից, ինչպես նաև սկիզբ դրեց ընդհատակյա մի խմբի հիմնադրմանը: Լուրը արագ

տարածվեց, և որոշ փորձառու և հասարակական դիրք ունեցող մարդիկ առաջարկեցին իրենց աջակցությունը: Չորրորդ հանդիպման ժամանակ ավելի քան 45 մարդ էին հավաքվել՝ նպատակ ունենալով կազմակերպել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և տեղեկացվածության բարձրացման արշավ:

Հայաստանում գրանցված 4000 ՀԿ-ներից միայն մի քանիսն են զբաղվում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ: Ներկայումս երեք ՀԿ կա (Մենք հանուն քաղաքացիական հավասարության, Փինք Արմենիա, Նոր Սերունդ), որոնք հայտարարում են, որ իրենց թիրախային խումբը ԼԳԲՏԻ անձինք են: ԼԳԲՏԻ համայնքին մասնագիտացված ծառայություններ մատուցելուց զատ այս կազմակերպությունները սկսել են ակտիվորեն ջատագովել երկրում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության հարցը՝ խրախուսելով և հուսադրելով ակտիվիստներին, իրավապաշտպաններին և ընդհանուր հայ ԼԳԲՏԻ բնակչությանը: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության համատեքստում շեշտադրելով մարդու իրավունքների պաշտպանության հարցը՝ այս ՀԿ-ները քաղաքացիական հասարակության շրջանում ջատագովում են այն հասարակության տեսլականը, որտեղ բացառված է խտրականությունը՝ անկախ այն բանից, թե ով է դրա թիրախում:

Հայաստանում մի քանի ԼԳԲՏԻ բարեհաճ հաստատություններ կան: Պետք է նշել, որ ԼԳԲՏԻ բարեհաճ ԴիԱյՈւայ ակումբը, որի սեփականատերը ակտիվիստ էր, 2012 թվականին պայթեցվեց: Ազգային Ժողովի պատգամավորները բացահայտորեն աջակցեցին հարձակմանը և երկու տղաներին, որոնք ձերբակալվեցին այդ գործի առնչությամբ (ՀՔԱՎ, 2012):

Հայաստանում ԼԳԲՏԻ կամ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները միշտ եղել են սպառնալիքների թիրախում: Սակայն վերջին տարիների ընթացքում բռնության և խտրականության դեպքերի աճ է գրանցվել, որի պատճառը կարող է լինել Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելու քաղաքական որոշումը: Թվում է, թե Հայաստանը հարմարվում է Ռուսաստանի և նրա «ավանդական արժեքների» պատմույթի հետ (Իլգա-Եվրոպա, 2014): Երկրում ԼԳԲՏ անձանց դե ֆակտո ընթացիկ վիճակի առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է սույն հաշվետվության համապատասխան գլխում:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԴԵ ՖԱԿՏՈ/ ԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՐԿՐՈՒՄ

Այն փաստը, որ ԼԳԲՏԻ անձինք շարունակում են ահաբեկումների, սպառնալիքների, հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվել կյանքի տարբեր ոլորտներում, ներառյալ ընտանիքը, առողջապահությունը, օրենսդիր մարմինները, զինված ուժերը և փակ հաստատությունները, գրանցվել է տարբեր հաշվետվություններում և հրապարակումներում: Երկրում ԼԳԲՏԻ անձանց իրական դրության, բացասական վերաբերմունքի ու խտրականության դրսևորման հիմքերը հասկանալու համար առանձնացվել են 4 հիմնական գործոններ (գիտելիք, վերաբերմունք, դիրքորոշում և ԼԳԲՏԻ անձանց հանդեպ գործողություններ): Որոշ հեղինակներ կարևորում են այս բոլոր գործոնների քննարկումը (Սոցիոսկոպ և Փինք Արմենիա, 2012), և առաջարկում են օգտագործել «սոցիալական վարքի փոփոխման» մոդելը՝ փոփոխելու ԼԳԲՏԻ անձանց հանդեպ այսօր առկա խիստ բացասական վերաբերմունքը, ընկալումն ու խտրականությունը: Մոդելը բաղկացած է վերոնշյալ բոլոր չորս բաղադրիչներից, որում յուրաքանչյուր բաղադրիչ ձևավորվում և կյանքի է կոչվում իր նախորդի հիման վրա:

Գիտելիք

Սոցիոսկոպ և Փինք Արմենիա ՀԿ-ները 2011 թվականին հետազոտություն են անցկացրել Երևանում, Գյումրիում և Վանաձորում, որի նպատակն էր պարզել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Հետազոտությունը ցույց տվեց, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը սահմանափակ են ընկալվում հասարակությունում, և որ քիչ տեղեկատվություն կա տրանսգենդեր և բիսեքսուալ անձանց մասին: Հետազոտությունը նաև ցույց տվեց, որ թեև հարցվածների 80.5%-ը պատասխանել է, թե գիտի՝ ինչ է նույնասեռականությունը, այնուամենայնիվ հարցվածների գիտելիքները ԼԳԲՏԻ անձանց մասին կարծրատիպային էին և հիմնված չէին գիտական բացատրությունների վրա: Մասնավորապես, հարցվածների 18,6%-ի համար «ոչ ավանդական» սեռական

կողմնորոշումը հիվանդություն է, 12,7%-ը հավատում է, որ դա արևմտյան երկրների բացասական ազդեցության հետևանք է (Սոցիոսկոպ և Փինք Արմենիա, 2012):

Այն գաղափարը, որ նույնասեռականությունը հասարակության կողմից ընկալվում է որպես «վարակիչ հիվանդություն», հաստատվում է նաև որակական հետազոտության արդյունքում: Ավելին, 2012 թվականին անցկացված ֆոկուս խումբը ցույց տվեց, որ երիտասարդները նույնասեռականությունն ընկալում են որպես գերիշխող առնականացված մշակույթի սպառնալիք (Սաղումյան, 2012): Ինչպես նշել է մի իրավապաշտպան, «մեր հասարակությունը կամ անգրագետ է և հավատում է, որ նույնասեռականությունը հիվանդություն է, որը պետք է բուժել, կամ էլ պարզապես մարդիկ չեն կամենում ընդունել ընտանիքի և բարոյականության մասին իրենց ավանդական պատկերացումներից տարբերվող որևէ այլ բան» (Քերոլ և Քուին, 2009):

Վերաբերմունք և ընկալումներ

Ինչպես նշվել է վերևում, ԼԳԲՏԻ անձանց հանդեպ վերաբերմունքը պայմանավորված է հասարակության գիտելիքի մակարդակով, որոնք որոշիչ գործոններ են ֆիզիկական գործողություններ իրականացնելու համար: Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի 39 երկրներում անցկացված հետազոտությունը ցույց տվեց, որ նույնասեռականության ընդունումը մեծապես կախված է երկրի տնտեսական և կրոնական իրադրությունից: Մասնավորապես բացահայվեց, որ աղքատ երկրներում, որտեղ բարձր է կրոնականության մակարդակը, քչերն են կարծում, որ նույնասեռականությունը պետք է ընդունվի հասարակության կողմից (Փյու հետազոտության կենտրոն, 2013): Հետազոտությունների արդյունքները նաև ցույց էին տալիս գենդերի ու տարիքի գործոնների ազդեցությունը նույնասեռականության ընդունման հարցում. ավելի երիտասարդ հարցվողներն ու կանայք շատ ավելի հանդուրժող տեսակետներ ունեին՝ ի համեմատ տարեցների և տղամարդկանց (Փյու հետազոտության կենտրոն, 2013): ՀՌԿԿ-ի կողմից 2011թ-ին Հայաստանում անցկացված Կովկասյան Բարոմետրը նույնպես չափեց նույնասեռականության հանդեպ վերաբերմունքը: Արդյունքները ցույց տվեցին, որ հարցվածների 96%-ը մտածում է, որ նույնասեռականությունը «երբեք չի կարող արդարացվել»: Ի տարբերություն այլ երկրների, որտեղ տարիքը և գենդերը ազդում են նույնասեռականության ընդունման վրա, Հայաստանում և Կովկասյան ևս երկու երկրներում (Վրաստան և Ադրբեջան) նույնասեռականության հանդեպ վերաբերմունքը գրեթե նույնն է՝ անկախ աշխարհագրական տարածքից, սեռից և տարիքային խմբերից (ՀՌԿԿ, 2013):

Այն փաստը, որ տարիքը որոշիչ գործոն չէ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ վերաբերմունքի հարցում, բացահայտվեց նաև մեկ այլ հետազոտության շրջանակներում, որը նպատակ ուներ պարզել երիտասարդության վերաբերմունքը եվրոպական արժեքների և հանդուրժողականության հանդեպ: Հետազոտությունը ցույց տվեց, որ երիտասարդ հարցվողների ընդամենը 30%-ն է կարծում, որ մարդկանց պետք չէ «դատապարտել» իրենց սեռական կողմնորոշման համար: Հետազոտությունը ցույց տվեց, որ հարցվածների միայն 16,5% է հանդուրժող սեռական փոքրամասնությունների հանդեպ: Հետազոտությունը բացահայտեց նաև, որ հարցվածների 86,5% չէր ցանկանա, որ իր հարևանը «գեյ» լիներ (Քերոլ և Քուին, 2009):

Սոցիոսկոպ և Փինք Արմենիա ՀԿ-ների կողմից իրականացված մեկ այլ հետազոտություն ցույց տվեց, որ հարցվողների 72,1%-ը բացասական վերաբերմունք ունի ԼԳԲՏԻ անձանց հանդեպ: Ավելին,հարցվածների 27,4%-ը ԼԳԲՏԻ անձանց մասին խոսում է վիրավորական բառերով և հայհոյանքներով, իսկ 17,7%-ը բացասական պիտակներ է կպցնում: Հարկ է նշել, որ ԼԳԲՏԻ անձինք իրենց խոցելիությունը բացատրում են հասարակության տեղեկացվածության պակասով, անհանդուրժողականության բարձր մակարդակով և ԼԳԲՏ անձանց գռեհիկ և տհաճ պահվածքով (Փինք Արմենիա, 2013): Որպես երկրում նույնասեռականության հան-դեպ ընդգծված վատ վերաբերմունքի և անհանդուրժողականության արդյունք՝ հարձակումների, ատելության խոսքի և ֆիզիկական բռնության բազմաթիվ դեպքեր են գրանցվել նախորդ տարիների ընթացքում: Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ահաբեկումների ու բռնությունների իրավիճակի մանրամասն նկարագրությունը ներկայացված է ստորև:

Դիրքորոշում և գործողություններ

Ոտնձգությունները, ահաբեկումներն ու բռնությունները ԼԳԲՏԻ անձանց հանդեպ գերիշխող են թե՛ հասարակության մեջ, թե՛ ինստիտուցիոնալ մակարդակում: Մարդիկ ենթարկվում են արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և ոտնձգությունների իրենց կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, հատկապես այն դեպքերում, երբ ԼԳԲՏԻ անձի արտաքին տեսքը համապատասխանում է հասարակության ունեցած կարծրատիպերին:

2005 թվականին Իլգա-Եվրոպան իրականացրեց մի հետազոտություն, որը թույլ էր տալիս բացահայտել կյանքի այն ոլորտները, որտեղ ԼԳԲՏԻ անձինք առավել հաճախ են ենթարկվում ոտնձգությունների և բռնության: Արդյունքները ցույց տվեցին, որ մարդիկ ամենաշատը բռնության են ենթարկվում և ահաբեկվում հանրային վայրերում կամ փողոցում (40%), 23%-ը դրանից տուժել էր համալսարանում, 21%-ը՝ դպրոցում, 21%-ը՝ երիտասարդական ակումբներում, 17%-ը՝ փաբերում և այլ ժամանցի վայրերում, 15%-ը խանութներում և 13%-ը՝ տանը, հանգստի/սպորտի համար նախատեսված վայրերում: Ինստիտուցիոնալ մակարդակում հարցվողների 8%-ը բռնության կամ ոտնձգությունների է ենթարկվել աշխատավայրում, 6%-ը՝ առողջապահական հաստատություններում, 4%-ը՝ եկեղեցում կամ մզկիթում: Ավելին, 23%-ին ահաբեկել էին նաև էլեկտրոնային նամակների կամ տեքստային հաղորդագրությունների միջոցով (Քերոլ և Քուին, 2009):

Ոտնձգության ու ֆիզիկական բռնության դեպքերը ԼԳԲՏԻ անձանց հանդեպ կարող են կատարվել մեկ անգամ կամ ունենալ մշտական բնույթ, որն իրականացվում է հարևանների կամ բարեկամների կամ տվյալ մարդու սոցիալական միջավայրի կողմից: Այս դեպքերում բռնությունից և ոտնձգությունից տուժածները հրաժարվում են դիմել օրինապահ մարմիններին՝ մտավախություն ունենալով, որ այդ ամենը կշարունակվի նաև այնտեղ (Փինք Արմենիա, 2011):

Սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի դեպքերը այնպիսի փակ հաստատություններում, ինչպիսիք են զինված ուժերը և քրեակատարողական հիմնարկները, արձանագրվել են բազմաթիվ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն, Հյուման Ռայթս Վոտչը, Միջազգային Հելսինկյան Ֆեդերացիան, Ֆրիդոմ Հաուսը, Ամնեսթի Ինթերնեյշընալը, ԵԱՀԿ-ն, ԵՄ-ն, ՄԱԶԻԱՀ-ը և այլն: Բացահայտ գեյ տղամարդիկ զինված ուժերում ծառայելիս ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական բռնության՝ ներառյալ սեռական ոտնձգությունների, բռնաբարության, սեռական ոտնձգությունների, մեկուսացման և այլն: ԼԳԲՏԻ անձանց քրեակատարողական հիմնարկներում ստիպում են կատարել ամենաանպատվաբեր համարվող աշխատանքը (օրինակ՝ զուգարան մաքրելը), նրանք մեկուսացվում են մնացած բանտարկյալներից հատուկ խցերում, որտեղ պայմանները շատ ավելի անբարենպաստ են, քան այլ խցերում, նրանց սպասքն ու իրերը նույնպես առանձնացվում են (Հասարակական դիտորդական խումբ, 2015): Ինչպես պատմում էր ԼԳԲՏԻ համայնքի անդամներից մեկը, «Բանտարկյալները նույնքան դաժան էին իմ նկատմամբ, որքան բանտապահները, ես նրանց համար ասես խաղալիք լինեի, ինձ ծեծում ու շպրտում էին բանտի մի պատից մյուսը» (Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2009): Ավելին, Հայաստանում Իլգա-Եվրոպայի կողմից հավաքված փաստերը նշմարում են ինստիտուցիոնալ հոմոֆոբիայի բարձր մակարդակ՝ արտահայտված իշխանությունների կողմից մարդու իրավունքների ոտնահարումների, ինչպես նաև մարդու իրավունքների ոտնահարումների դեպքերը բացահայտելու պատրաստակամության առնչությամբ (Քերոլ և Քուին, 2009):

Ատելության խոսք

ԼԳԲՏԻ անձինք հաճախ ատելության խոսքի թիրախ են դառնում ոչ միայն ծայրահեղ ազգայնական խմբավորումների, այլ նաև հանրային գործիչների և այլ պաշտոնյաների կողմից: Քաղաքական գործիչները քիչ գործողություններ են կատարում նույնասեռականության մասին տգիտության և նախապաշարումների մշուշը ցրելու համար, ոմանք էլ ավելի են սրում իրա-

վիճակը: Դեռ ավելին, ատելության խոսքի դեմ օրենքի բացակայությունը թույլ է տալիս կառավարության անդամներին, հանրային գործիչներին և զանգվածային լրատվամիջոցներին խթանել ատելությունը՝ խոսքի ազատության ենթատեքստում: Պետությունը որևէ գործողություն չի ձեռնարկում համայնքի հանդեպ բացասական վերաբերմունքը նվազեցնելու և նրանց իրավունքները պաշտպանելու համար:

Ստորև ներկայացված կոնկրետ օրինակները ցույց են տալիս, որ պետական մարմինները չեն դադարում ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության կոչեր անել՝ երկրում ամրացնելով անպատժելիության մթնոլորտը: Որոշ դեպքերում հանրային գործիչները հայտարարել են, որ աջակցում են ԼԳԲՏԻ անձանց հանդեպ անհանդուրժողականությանը, խտրականությանն ու ատելության խոսքին և հրապարակավ արդարացրել են նրանց դեմ կատարված անօրինական գործողությունները:

Մասնավորապես, իշխող խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը նշել է, որ չի հանդուրժում «համասեռամոլության» գաղափարը և ավելացրել, որ հատուկ գործողություններ պետք է իրականացվեն նման երևույթի դեմն առնելու համար: 2013 թվականին նույն պատգամավորը խորհրդարանական լսումների ժամանակ մի քանի անգամ հայտարարել է, որ անմիջապես պետք է փակվեն այն ՀԿ-ները, որոնք պաշտպանում և խթանում են կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքները (Կանանց Ռեսուրսային Կենտրոն և Փինք Արմենիա), որոնք, իր կարծիքով, «քայքայում են հայ ընտանիքը» և խթանում են շեղումներն ու նույնասեռականությունը (ՀՈՀ-Երևան, 2015):

Նոյեմբերին, ՀՀ-ում իշխող Հանրապետական կուսակցության ղեկավար Գալուստ Սահակյանը նշել է, որ դեմ չի լինի օժանդակել այն երիտասարդական խմբավորումներին, որոնք դեմ են սեռական փոքրամասնություններին (Իլգա-Եվրոպա, 2014): Հանրապետական պատգամավոր Կարինե Աճեմյանը, ի պատասխան lgbtnews.am-ի հարցին պատասխանել է, որ իրեն չեն ուղարկել Ազգային Ժողով ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանելու համար:

Իշխող Հանրապետական կուսակցության մեկ այլ պատգամավոր Սուքիաս Ավետիսյանը lgbtnews.am-ին տված հարցազրույցի ժամանակ նշել է, որ չի ցանկանում իր կողքին տեսնել նույնասեռականի, որ չի ընդունում նրանց և որ դա իր իրավունքն է: Ի պատասխան այն հարցին, թե չի՞ վախենում արդյոք ձայներ կորցնել (ԼԳԲՏԻ համայնք, համախոհներ և/կամ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության մեջ ներգրավված անձինք) նման դիրքորոշում ունենալու պատճառով, պատգամավորը պատասխանել է, որ չի ցանկանում, որ ԼԳԲՏԻ անձինք և նրանց աջակիցներն օգնեն իր կուսակցությանը: Բարգավաճ Հայաստան կուսակցության պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը lgbtnews.am-ին տված հարցազրույցի ժամանակ նշել է. «...իմ վերաբերունքը նրանց նկատմամբ նեգատիվ է և չի կարող փոխվել, որովհետև ես գիտեմ, որ կա բնության օրենք, Աստծո օրենք, պատվիրաններ, և այն խավը, որը կգնա Աստծո պատվիրաններին դեմ, կարժանանա Աստծո պատժին: Այո՛, նրանց մեջ երևի մի խավ կա, որ գենետիկական հիվանդ է, մեկ այլ խավ՝ հոգեկան շեղումներ ունի, բայց պետք չէ տուրք տալ... Բայց ես կանեմ հնարավորը, որպեսզի Հայաստանում իրենք չկարողանան իրենց մետաստազները տարածել. դա ես ասում եմ բաց և հրապարակային» (Փինք Արմենիա, 2015):

Հավասարություն և խտրականության բացառում

Խտրականությունը շարունակում է հիմնախնդիր մնալ երկրում և լայնորեն տարածված է հայ հասարակության բոլոր ոլորտներում, ներառյալ ընտանիքում, աշխատավայրում, սպասարկման ոլորտում (կրթական և առողջապահական հաստատություններ), զինված ուժերում և նույնիսկ օրինապահ մարմիններում: Խտրականության դեմ օրենքի և հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև ներկայումս օրենքներում առկա թերությունները մեծապես նպաստում են ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարմանը, ինչն էլ ԼԳԲՏ անձանց դարձնում է առավել խոցելի:

Ահա մի յուրահատուկ օրինակ, որը ցույց է տալիս հասարակությունում գերիշխող չափազանց խտրական և կողմնակալ վերաբերմունքը: Համահայկական ծնողական կոմիտե կոչվող խումբը 2013թ-ին՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի

ընդունումից հետո, նախաձեռնել էր այսպես կոչված «անտի-գենդեր» արշավը: Օրինագիծն իր մեջ ներառում էր «գենդերային հավասարություն» արտահայտությունը, որը կրոնական և պահպանողական առաջնորդները որակում են որպես հակահայկական, ոչ ավանդական և նույնիսկ մեղսածին: «Գենդեր» տերմինը դարձավ տրանսգենդերի և նույնասեռականության հոմանիշը՝ այսպիսով բարձրացնելով սոցիալական զայրույթի նոր ալիք: Նրանք, ովքեր խթանում էին կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքները, որակվեցին որպես «ազգի դավաճաններ», «ընտանիք քանդողներ» և «հայկական արժեքներին սպառնացողներ» (Իլգա-Եվրոպա, 2014):

Արտահայտվելու և հավաքների ազատություն

Վերջին տարիներին ԼԳԲՏԻ անձանց ազատ հավաքների իրավունքը հաճախ է ոտնահարվել. որոշ դեպքերում ԼԳԲՏԻ ակտիվիստները ձերբակալվել են և ենթարկվել բռնության: 2013 թվականի դեկտեմբերին ԼԳԲՏԻ ակտիվիստները միացան մի քանի հարյուր ցուցարարների և երթ արեցին Երևանի կենտրոնում՝ իշխող ռեժիմի և դրա՝ Մաքսային Միությանը միանալու որոշման դեմ: Մի քանի ազգայնական ցուցարարներ, նկատելով նույնասեռականների խորհրդանիշ ծիածանագույն դրոշը, հարձակվեցին երթի մասնակիցների վրա և բռնություն գործադրեցին նրանց նկատմամբ: Ըստ Փինք Արմենիայի հաշվետվության, երթից հետո ոստիկանությունը ձերբակալեց հարյուրավոր ակտիվիստների և նրանց այնտեղ պահեց մի քանի ժամ՝ առանց որևէ բացատրության (Իլգա-Եվրոպա, 2014):

2015 թվականի հոկտեմբերին Հայաստանում կազմակերպվեց «Ծիածան» ֆորումը, որի նպատակն էր քննարկել ԼԳԲՏԻ խնդիրներն ու մշակել ռազմավարություն, որը կօգներ հաղթահարել հոմոֆոբիան երկրում: Մի քանի առցանց և տպագիր լրատվամիջոցներ ֆորումի մասին հոդվածներ հրապարակեցին, որին հետևեց ագրեսիվ հոմոֆոբիայի նոր ալիք, որին էլ հաջորդեց ԼԳԲՏԻ անձանց դեմ ուղղված սպառնալիքներ և բռնություններ: Հայաստանում Միավորված Ազգերի Կազմակերպությունը հայտարարություն տարածեց, որով հորդորում էր իշխանություններին պատշաճ կերպով ուսումնասիրել և քննել բոլոր սպառնալիքները (ՄԱԿ Հայաստան, 2015): Տեղական ՀԿ-ներից մեկը, որը զբաղվում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ, նամակ ուղղեց Դատախազությանը՝ միևնույն պահանջով: Դրանում ասվում էր, որ որևէ խմբի հանդեպ սպառնալիքները կամ բռնությունը չի կարելի հանդուրժել, և որ բոլորը պետք է ունենան արտահայտվելու և հավաքների ազատության իրավունք և այդ իրավունքն իրացնելիս չպետք է դառնան խտրականության և ահաբեկման թիրախ: Դատախազությունը սույն զեկույցի պատրաստման ժամանակահատվածում դեռևս նշված դիմումին չի պատասխանել:

Ամնեսթի Ինթերնեյշընալը 2013 թվականի իր տարեկան հաշվետվության մեջ նշել է, որ իշխանությունների պատասխանը ԼԳԲՏԻ անձանց հանդեպ հարձակումների դեպքերին դանդաղ է և ոչ պատշաճ: Զեկույցում նշվում է նաև, որ երկիրը չի պահպանում հայաստանյան օրենսդրության դրույթները և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները, քանի որ հարձակումները մնացել են անպատիժ և որևէ քննություն չի կատարվել այդ առնչությամբ (Ամնեսթի Ինթերնեյշընալ, 2013):

Ատելության հիմքով հանցագործություններ և դրանց հետևանքները

Հայաստանում գերիշխող հոգեբանական և ֆիզիկական բռնության և խտրականության բարձր մակարդակի պատճառով դժվար է քննարկել ԼԳԲՏԻ խնդիրները, ազնվանալու և ԼԳԲՏԻ ակտիվիզմի համար գրեթե ոչ մի տեղ չկա: Ավելին, այս թշնամական վերաբերմունքը և գործողությունները ԼԳԲՏԻ անձանց հանդեպ մի շարք բացասական հետևանքներ և ազդեցություն ունեն մարդկանց հոգեբանական և ֆիզիկական բարօրության վրա: ԼԳԲՏԻ անձանցից շատերը ստիպված են թաքցնել իրենց սեռական կողմնորոշումը և ճնշել իրենց գենդերային ինքնությունն ու արտահայտումը: Այս ճնշումների արդյունքում շատ ԼԳԲՏ անձինք չեն

ազնվանում իրենց ընկերների և ընտանիքների առջև: «Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ն 2007 թվականին մի հետազոտություն է իրականացրել 200 ԼԳԲՏԻ անձանց շրջանում: Արդյունքները ցույց տվեցին, որ հարցվող գեյ, բիսեքսուալ կամ տրանս-գենդեր անձանց 35.3%-ը ընդհանրապես չեն ազնվացել, 43.8%-ը միայն ազնվացել էին միայն մոտ ընկերներին, 2.5%-ը՝ միայն ընտանիքի անդամներին, իսկ մնացած 18.4% ազնվացել էին բոլորի առջև: Լեսբի, բիսեքսուալ և տրանսգենդեր հարցվողներից 20%-ն ընդհանրապես չէին ազնվացել, 3%-ը՝ միայն ընտանիքի անդամներին, 60%-ն ասել էին մոտ ընկերներին, իսկ 17%-ը՝ բոլորին (Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ, 2010):

Սոցիալական ճնշումներն ու հասարակության կողմից մերժվածությունը որոշ ԼԳԲՏԻ անձանց ստիպում է բարեհաճություն գտնել այլ երկրներում: Ըստ մոտավոր հաշվարկների, 2011-2013թթ ընթացքում Հայաստանի 5,891 քաղաքացի հեռացել է երկրից խտրականության պատճառով (Սոցիոսկոպ և Փինք Արմենիա, 2015):

Թեև ոչ մի պաշտոնական վիճակագրություն չկա այն մասին, թե ԼԳԲՏԻ անձանցից քանիսն են ինքնասպան եղել, մասնագետներն անհանգստացած են այս խնդրով: «Վերջին տասը տարիների ընթացքում ես ճանաչել եմ առնվազն տասը նույնասեռական տղամարդու, որոնք նետվել են Երևանի Կիևյան կամրջից», – հոգեբան (Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ, 2009; Նոր սերունդ ՀԿ, 2012):

ԼԳԲՏԻ ակտիվիստներ և իրավապաշտպաններ

Իրավապաշտպանները, որոնք աշխատում են ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանության և գենդերային հավասարության խթանման ոլորտներում, իրենց աշխատանքի արդյունքում ևս ենթարկվում են բռնություններ և հարձակումներ: Ինչպես արդեն նշված էր սույն հաշվետվության մեջ, ԼԳԲՏԻ և կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունները դարձել են «անտի-գենդեր» արշավի ատելության կոչերի և հարձակումների թիրախ: Ծայրահեղականները չեն սահմանափակվում միայն ատելության կոչերով և ագրեսիայով, ավելին, սկսել են նաև թիրախավորել անհատ ակտիվիստների՝ հնչեցնելով սպառնալիքներ կեղծ վիրտուալ օգտահաշիվներով, ինչպես նաև՝ լրատվամիջոցներում զրպարտող հոդվածներ հրապա-րակելով:

Խորհրդարանի և իշխող խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը բազմաթիվ անգամ հրապարակայնորեն արտահայտել է այն կարծիքը, որ պետք է դադարեցվեն կանանց իրավունքների պաշտպանների աշխատանքը, և խնդրել է Դատախազությանը ուսումնասիրել նրանց «անբարոյական» գործողությունները (ՀՌՀ-Երևան, 2015): ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանները ևս ստանում են սպառնալիքներ և հաճախ դառնում են ահաբեկման թիրախ: Մի առիթով ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանին թույլ չէին տվել ելույթ ունենալ հայկական քաղաքական կուսակցության կողմից կազմակերպված միջազգային կոնֆերանսի ժամանակ: Հետագայում բացատրվեց, որ դա արվել է «վերջինիս անվտանգությունը պաշտպանելու համար»: Ավելի ուշ նրան ասացին, որ վերջինիս ելույթը չեղարկելու իրական պատճառն այն էր, որ տվյալ քաղաքական կուսակցությունը կարող էր ինստիտուցիոնալ խնդիրներ ունենալ, եթե իրեն թույլ տային հանդես գալ որպես բանախոս (ՀՌՀՖ, 2014; ՀՔԱՎ, 2012):

Իրավապաշտպաններն անհանգստացած են, որ պետությունը ոչ մի կերպ չի աջակցում այն իրավապաշտպան կազմակերպություններին, որոնք փորձում են պաշտպանել իրենց շահառուների իրավունքները և նպաստել հասարակության բարեկեցությանը: Դեռ ավելին, չկան համապատասխան իրավական մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան համապատասխան կերպով հասցեագրել իրավապաշտպանների նկատմամբ կատարված բռնության դեպքերը: Ի հավելումն, դժվար է մատնանշել մի այնպիսի դեպք, երբ պետությունն ինքն է նախաձեռնել և տրամադրել պաշտպանության մախանիզմներ իրավապաշտպաններին (ՀՌՀՖ, 2014):

ՍԵՔՍԻԶՄԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՐԿՐՈՒՄ

Տարբեր հաշվետվություններ (ՀՌՀՖ, 2014; Համաշխարհային բանկի խումբ, 2014) փաստում են, որ Հայաստանում բարձր է գենդերային անհավասարության մակարդակը, որն արտացոլված է տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում: Գենդերային հավասարությունը նշանակում է «հնարավորություններին հավասար հասանելիություն, որն է իրավունքների, ռեսուրսների և տղամարդկանց ու կանանց ձայների հավասարությունը» (ՀԲԽ, 2014): Գենդերային Անհավասարության Ինդեքսը (ԳԱԻ) գենդերային հիմքով անհավասարություններն արտացոլում է երեք հարթություններում՝ վերարտադրողական առողջություն, հզորացում և տնտեսական գործունեություն: Վերարտադրողական առողջությունը չափվում է մայրական մահացությամբ և անչափահասների ծնելիության գործակցով, հզորացումը չափվում է կանանց քաղաքական մասնակցությամբ և տարբեր սեռի անձանց միջնակարգ և բարձրագույն կրթության հասանելիությամբ, իսկ տնտեսական գործունեությունը չափվում է աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց մասնակցության գործակցով: ԳԱԻ-ն կարող է նաև մեկնաբանվել որպես մարդկային զարգացման կորուստ այս երեք հարթություններում արական և իգական սեռերի անձանց նվաճումների անհավասարության հետևանքով (ՄԱԶԾ, 2014): 2013 թվականին Հայաստանի ԳԱԻ արժեքը 0,325 էր, որն ապահովում էր Հայաստանի համար 60-րդ տեղը 149 երկրների շարքում:

Թեև վերջին տարիների ընթացքում Հայաստանի կառավարությունը որոշակի քայլեր է արել կոնկրետ օրինագծի ընդունման համար, և գենդերային հավասարությունը խթանելու որոշ ռազմավարական փաստաթղթեր են մշակվել, սակայն այդ բարեփոխումներն իրականացնելու գործուն մեխանիզմներ երկիրը դեռևս չունի: 2013 թվականին Հայաստանն ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, ինչպես նաև ստորագրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագիրը: Ի հավելումն, 2011 թվականին Հայաստանի կառավարությունը մշակել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը և գործողությունների ծրագիրը 2011-2015թթ համար՝ բարելավելու կանանց իրավունքների իրադրությունը երկրում, ինչպես նաև ստեղծվել է Կանանց և տղամարդկանց հավասարության խորհուրդ (ՀՌՀՖ, 2014): Ամեն դեպքում, երկիրը չունի հատուկ մեխանիզմներ, որոնք կյանքի կկոչեն այս ընթացակարգերը: Հայաստանի կառավարությունը 2014 թվականի հունվարին մերժեց Ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունումը, ոչ մի հատուկ ծրագրեր չկան բռնությունից տուժածների պաշտպանության համար, ոչ մի քայլ չի արվում հասարակությունում գենդերային կարծրատիպերը վերացնելու համար, դպրոցական ծրագրերում ներառված չեն դասընթացներ գենդերային դերերի մասին:

Այդ ընթացքում, որոշ ուսումնասիրություններ ցույց են տվել գենդերային կարծրատիպերի բարձր մակարդակը: Ըստ Կովկասյան բարոմետրի արդյունքների, որն իրականացվել է ՀՌԿԿ Հայաստանի կողմից, Հայաստանի բնակչության 80%-ից ավելին (Նկար 1) համաձայն է, որ ընտանիքում տղամարդը պետք է լինի որոշումներ կայացնողը:

Կրթական համակարգը ամրապնդում է գոյություն

Նկար 1. Ո՞վ պետք՝ լինի ընտանիքում որոշումներ կայացնողը (%)



ունեցող գենդերային կարծրատիպերը, ինչպես նաև վերստեղծում և վերածնում է արական և իգական կերպարներ, հատկանիշներ և դերեր: Մասնա-

վորապես, տարրական դպրոցի դասագրքերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրքերում գենդերային դերերը անհամաչափ են բաշխված, և արական սեռը գերակայում է: Դասագրքերում կանանց դերերը հիմնականում քննարկվում են ներընտանեկան հարաբերություններում, իսկ տղամարդկանց դերերն առավել լայնածավալ են և հիմնականում կենտրոնացած են հասարակական կյանքի վրա (Ծատուրյան, 2012):

Թեև տղամարդիկ ու կանայք հավասար հնարավորություն ունեն կրթություն ստանալու, և կանայք նույնիսկ ավելի շատ են ընդգրկված բարձրագույն կրթության մեջ, աշխատանքային շուկայում կանայք ցածր ներգրավվածություն ունեն: Կանայք կազմում են աշխատանքային տարիքի (15-64) բնակչության 54%-ը, բայց նրանցից ընդամենը 40%-ն է աշխատում կամ փնտրում աշխատանք (WBG, 2014): Ավելին, Հայաստանում սակավաթիվ կանայք են զբաղեցնում որոշումներ կայացնող պաշտոններ տնտեսության և բիզնես ոլորտում, ինչպես նաև քաղաքականության մեջ: 2011թ-ին Ազգային Ժողովը սահմանել է գենդերային քվոտաներ քաղաքական կուսակցությունների համար: Թեև վերջին տարիներին Խորհրդարանում կին պատգամավորների թիվը եռապատկվել է, այն դեռևս մնում է չափազանց ցածր (11%): Բացի այդ, սակավաթիվ կանայք են ներգրավված տեղական ինքնակառավարման մարմիններում (2.1%) և ընդհանրապես ներգրավված չեն քաղաքային համայնքներում և տարածքային կառավարման օղակներում (WBG, 2014):

Գենդերային հիմքով բռնությունը մեկ այլ ահազանգող թեմա է երկրի համար: 2012-2014թթ գրանցվել է ընտանեկան բռնության հետևանքով մահացությունների 17 դեպք (ՀՌՀՖ, 2014): Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը կարգավորում է Հայաստանում տեղի ունեցող բռնությունների վերաբերյալ խնդիրները: Գենդերային հիմքով բռնության առնչությամբ քրեականացված են միայն ֆիզիկական բռնության (ՀՀ քրեական օրենսգիրք, 112, 113, 117, 118, 119 հոդվածներ) և սեռական բռնության (ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 18) դեպքերը: Օրենսդրությունը չի հասցեագրում ո՛չ հոգեբանական/էմոցիոնալ բռնությունը, ո՛չ ֆինանսական/տնտեսական բռնությունը: Ներկայիս օրենսդրությունը չի պաշտպանում կանանց՝ նախամուսնական ինտիմ հարաբերություններում: Ոչ մի օրենսդրությամբ հասցեագրված չէ ամուսնական բռնաբարությունը, սակայն մյուս կողմից էլ չկան այնպիսի դրույթներ, որոնք ազատում են ամուսնական բռնաբարություն կատարողին քրեական պատասխանատվությունից: Չկան ընտանեկան բռնության թեմայով վերապատրաստման դասընթացներ սոցիալական աշխատողների ու բուժաշխատողների համար: Ընտանեկան բռնության զոհերի համար չկա որևէ պետական ապաստարան (ՀՌՀ-Երևան, 2015):

Որոշ հետազոտություններ ուսումնասիրել և բացահայտել են համապատասխան կապեր նույնասեռականության ընդունման և գենդերային անհավասարության միջև: Լեսբիները, բիսեքսուալ և տրանսգենդեր կանայք ամենուր հանդիպում են բացասական վերաբերմունքի, ոտնձգությունների և ահաբեկումների, և Հայաստանն էլ բացառություն չէ: Ինչպես նաև նշվում է, որ լեսբի ակտիվիստները մեկուսացված են գեյ և բիսեքսուալ անձանց հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (Փինք Արմենիա, 2012):

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ի կողմից լեսբիների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հարցված կանանց 70%-ի վրա թքել են, 61%-ին վիրավորել են իրենց սեռական կողմնորոշման համար, փչացրել կամ ոչնչացրել են 37%-ի գույքը կամ ունեցվածքը, 31%-ին սպառնացել են, որից 1,5%-ին սպառնացել են զենքի գործադրմամբ: Սեռական բռնության առնչությամբ, հարցվածների 20%-ը ենթարկվել է սեռական բռնության, իսկ 1,5%-ին բռնաբարել են: Հարցվածների 89%-ը ճանաչում էր այնպիսի մեկին, ում հետ նման բան ևս տեղի է ունեցել (Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ, 2010):

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ համապատասխան օրենսդրության բացակայությունը, ընդհանուր բնակչության և իրավապահ մարմինների տեղեկացվածության ցածր մակարդակը, մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև նմանօրինակ երևույթների ընդունումը մշակույթում անհանգստացնող խնդիրներ են, որոնք ևս խթանում են գոյություն ունեցող լայնածավալ բռնությունը:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Ինչպես ավելի վաղ նշվել էր սույն հաշվետվության մեջ, նույնասեռականության ընդունումը մեծապես կախված է երկրի կրոնական մակարդակից: Հայաստանը համարվում է կրոնական երկիր, և ավելին, հայ հասարակության մեծամասնության համար եկեղեցու ինստիտուտը հեղինակություն է: ՀՌԿԿ-ի Կովկասյան բարոմետր տարեկան հաշվետվությունը ցույց տվեց, որ բնակչությունը ամենաշատը վստահում է կրոնական հաստատություններին և բանակին: (Նկար 2)

Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումը նույնասեռականության վերաբերյալ մի քանի անգամ նշվել է այս հաշվետվության մեջ: Եկեղեցին նույնասեռականությունը համարում է մահացու մեղք: Քահանաները ԼԳԲՏԻ անձանց առնչվող հայտարարություններ հաճախ են անում տարբեր հարցազրույցների և մամուլի ասուլիսների ընթացքում: Լրատվամիջոցների միջոցով եկեղեցու ներկայացուցիչները ԼԳԲՏԻ անձանց ներկայացնում են որպես սպառնալիք հայ հասարակության համար, որպես «եվրոպական արժեքների և ավանդույթների» ուղղակի արդյունք (Փինք Արմենիա, 2011):

«Իմքահանան» օնլայն ծրագրում, որտեղ Արարատյան Հայրապետական թեմը պատասխանում է հազարավոր հարցերի, որոնք վերաբերում են եկեղեցու դիրքորոշմանը տարբեր խնդիրների վերաբերյալ, սարկավագ Տիգրան Բաղումյանը գրել է. «նույնասեռականությունը հոգևոր աղտ է և մեղք» և, քանի որ նման հարաբերություններն «անբնական են», պետք է դատապարտվեն: Նա նաև մեջբերել է բազմաթիվ գլուխներ Աստվածաշնչից՝ իր տեսակետը պաշտպանելու համար (Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ, 2010):

2011 թվականին եկեղեցին կազմակերպել էր հանրային քննարկում, որի հիմնական նպատակն էր բացատրել մասնակիցներին, որ նույնասեռականությունը մոլության մի տեսակ է, և որ մարդիկ իրենք են ընտրում «[այլ] տղամարդկանց հանդեպ մոլություն ունենալը»: Եկեղեցու մոտեցումը նույնասեռականներին ընդհանուր առմամբ հետևյալն է՝ այն ներմուծվել է Հայաստան «արևմտյան ուժերի» կողմից, որոնց նպատակն է քայքայել հայկական ավանդույթներն ու արժեքները (Փինք Արմենիա, 2011):

Եկեղեցին հակված է ներկայացնելու ԼԳԲՏԻ անձանց

Նկար 2. Որքանո՞վ եք վստահում... (%)



որպես մի սոցիալական խումբ, որը արհեստականորեն է ստեղծվել Հայաստանում և որի հիմնական նպատակն է ուրանալ գոյություն ունեցող արժեքները, թուլացնել հասարակության համախմբվածությունը ու հայերին տանել դեպի անբարոյականություն: Ավելին, եկեղեցու ներկայացուցիչներն առիթը բաց չեն թողնում ԼԳԲՏԻ անձանց և կրոնական փոքրամասնությունների միջև զուգահեռներ անցկացնելու համար, որոնք բոլորն էլ եկել են Հայաստան՝ այն ոչնչացնելու համար: Հետևաբար, Եկեղեցին հայտարարում է, որ այս երկու խմբերն էլ սպառնալիք են երկրի ազգային անվտանգության համար: Եկեղեցուց բացի, Հայաստանում երկու կրոնական խմբեր՝ Եհովայի վկաներն ու Նեո հեթանոսական շարժումը, հրապարակայնորեն դատապարտել են նույնասեռականությունն ու տրանսսեքսուալությունը (Փինք Արմենիա, 2012):

Չնայած, որ եկեղեցու բացասական տեսակետը ԼԳԲՏԻ անձանց հանդեպ հայտնի է, 2013 թվականին ԼԳԲՏԻ համայնքում անցկացրած հետազոտությունը ցույց տվեց, որ հարցվողների մոտ 40%-ն իրենց համարում են Հայ առաքելական եկեղեցու հետևորդ: ԼԳԲՏԻ անձանց մոտ 83%-ը հաճախում է կրոնական հաստատություններ (Փինք Արմենիա, 2013):

Այսպիսով, երկրի կրոնականության աստիճանը կարևոր ցուցիչ է հասարակության կողմից նույնասեռականության ընդունման համար: Ակնհայտ է, որ կրոնական հաստատությունները մեծ ազդեցություն ունեն հասարակության վրա՝ թե՛ ընդհանուր բնակչության, թե՛ ԼԳԲՏԻ համայնքի: Հետևաբար եկեղեցու կողմից արված բացասական հայտարարությունները ԼԳԲՏԻ համայնքի վերաբերյալ երկրում ստեղծում են թշնամական միջավայր և ամուր հող են նախապատրաստում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ բռնության և ոտնձգությունների համար:

ՄԱՍ 2

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետխորհրդային Հայաստանը, ստանձնելով զարգացման ժողովրդավարական ուղին, բախվում է մի շարք նոր իրողությունների, որոնք խորհրդային շրջանում ստվերային բնույթ ունեին կամ քննարկման ենթակա չէին:

Ժողովրդավարացման հիմնական բաղադրիչներից մեկն էլ մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանությունն է՝ անկախ անձի որոշակի բնութագրիչներից՝ սեռից, ռասայից, էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, ՍԿԳԻ-ից: Ընտրելով ժողովրդավարացման ուղին և ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանությունը՝ Հայաստանը պարտավորվեց ապահովել համընդհանուր հանդուրժողականության մթնոլորտ երկրում ապրող յուրաքանչյուր մարդու համար:

Գաղտնիք չէ, որ հայ հասարակության մեջ ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խիստ անհանդուրժող դիրքորոշում գոյություն ունի: Համաձայն 2011թ. Հայաստանում իրականացված Համաշխարհային արժեքների հարցման տվյալների[4]՝ հարցվածների 93%-ը չէր ցանկանա ունենալ նույնասեռական հարևան, իսկ 96%-ը կարծում է, որ նույնասեռականությունը չի կարող արդարացված լինել:

ԼԳԲՏԻ մասին հանրային քննարկումները ևս Հայաստանում նոր երևույթ են: Մինչև 2003 թվականը արական սեռի նույնասեռական կապը քրեորեն հետապնդելի արարք էր: Այս հանգամանքը ԼԳԲՏԻ մասին հանրային քննարկումների բացակայության պատճառ էր: 2001թ. Եվրոպայի խորհրդին անդամակցությունը Հայաստանի քաղաքական ռազմավարության առաջնահերթություններից մեկ էր: Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար Հայաստանը ստանձնում է նաև որոշակի պարտավորություններ, որոնցից մեկը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն էր, ինչպես նաև իրավական դաշտի վերամշակումը՝ համաձայն մարդու իրավունքների առաջնահերթությունների: Արական սեռի նույնասեռական կապի ապաքրեականացումը առաջնահերթ միջոցառումների ցանկում էր:

Այնուամենայնիվ, իրավական բարեփոխումները (նույնասեռական տղամարդկանց սեռական ակտի ապաքրեականացումը (2003), սահմանադրական բարեփոխումները (2005)[5] զգալի ազդեցություն չունեցան ԼԳԲՏԻ մասին հասարակական դիրքորոշումների փոփոխման վրա: ԼԳԲՏԻ անձինք, ինչպես և անցյալում, շարունակում են ապրել ստվերում կամ երկակի կյանքով՝ խուսափելով հասարակական պիտակավորումից և խարանից: Չնայած, որ խնդիրը արդիական է, այնուամենայնիվ, ԼԳԲՏԻ իրավիճակի մասին ուսումնասիրությունները սակավաթիվ են: ԼԳԲՏԻ մասին հետազոտություններ իրականացվել են հիմնականում ՀԿ-ների կողմից: Օրինակ՝ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ՝ ուղղված Հայաստանում ԼԳԲՏԻ իրավիճակի ուսումնասիրությանը, սակայն նրանց՝ հանրային ընկալումների ուսումնասիրությունը սակմանափակվում է երեք խոշոր քաղաքների ընտրությամբ: Ավելին, համահայկական սոցիոլոգիական հարցում մինչ օրս չի անցկացվել: Այս հետազոտությունը նպատակ ունի լրացնելու այդ բացը և համապարփակ ուսումնասիրության միջոցով ցույց տալու Հայաստանում ԼԳԲՏԻ մասին հանրային դիրքորոշումները:

Հաշվետվությունը բաղկացած է մեթոդաբանական մասից, որտեղ նկարագրվում են հետազոտության իրականացման նպատակն ու խնդիրները, դաշտային աշխատանքները, գործիքն ու ընտրանքը, և բուն վերլուծական մասից, որտեղ, հիմնվելով հարցաթերթի տրամաբանական կառուցվածքի վրա, առանձնացվել են հետևյալ բաժինները՝ հարցվածների արժեքային կողմնորոշումներն ու դրանց վրա ազդող գործոնները, ԼԳԲՏԻ մասին գիտելիքի և կարծրատիպերի ու առասպելների փոխկապվածությունը, շփումը ԼԳԲՏԻ անձանց հետ, ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դիրքորոշումները և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների սահմանները: Հաշվետվությունն ամփոփվում է եզրակացության տեսքով: Հետազոտության արդյունքները ավելի պատկերավոր ներկայացնելու համար օգտագործվել են բազմաթիվ աղյուսակներ և գծապատկերներ:

4 Համաշխարհային արժեքների հարցման կայքէջ՝ http://www.worldvaluessurvey.org/WVSOnline.jsp

5 Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության ուսումնասիրություն. իրավական վերլուծություն, Հայաստան http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/ArmeniaLegal_E.pdf

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակը և խնդիրները

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն Վրաստանի գործընկեր «Կանանց նախաձեռնություններին աջակցման խումբ» ՀԿ-ի հետ համատեղ «ԼԳԲՏԻ անձանց համերաշխության ցանց Վրաստանում և Հայաստանում» ծրագրի շրջանակներում իրականացնում է ԼԳԲՏԻ մարդկանց նկատմամբ հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական դիրքորոշումների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն՝ հետազոտելով հոմոֆոբիայի աստիճանն ու առանձնահատկությունները Հայաստանում և Վրաստանում: Ուսումնասիրության մի մասն է կազմում նաև սույն ընտրանքային հետազոտությունը, որը նպատակ ունի չափել և գնահատել Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակական դիրքորոշումները և արդյունքների հիման վրա մշակել առաջարկներ և որոշակի ռազմավարություն՝ երկրում հոմոֆոբիան հաղթահարելու համար:

Հետազոտության միջոցով, մասնավորապես, խնդիր է դրված.

- վերլուծել սոցիալական, մշակութային, քաղաքական և այլ գործոնների ազդեցությունը հասարակության մեջ ընդհանուր հոմո/տրանսոֆոբ միջավայրի ստեղծման վրա,
- չափել/գնահատել ԼԳԲՏԻ անձանց, նրանց վերաբերող հարցերի շուրջ հանրության իրազեկվածությունը, գիտելիքն ու դիրքորոշումները,
- չափել/գնահատել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ տրամադրվածությունն ու վերաբերմունքը Հայաստանում:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են ՀՀ ողջ տարածքի 1017 տնային տնտեսություններում՝ 2015 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Հետազոտությունը ոչ միայն գիտական նշանակություն ունի՝ նշանակալի տեղեկատվական աղբյուր հանդիսանալով ԼԳԲՏԻ անձանց մասին հետագա հետազոտությունների համար, այլև հետազոտության արդյունքները կիրառական արժեք ունեն. «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն պատրաստվում է օգտագործել հետազոտության արդյունքները ոլորտում շահերի պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության շուրջ աշխատանքների պլանավորման և իրագործման նպատակով:

Ընտրանքի ձևավորման մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ողջ տարածքում: Տնային տնտեսությունների ընտրանքը ձևավորվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրամադրված սպառողների ցուցակների հիման վրա: Հարցումն անց է կացվել 18-65 տարեկան բնակիչների շրջանում: Կիրառվել է բազմաստիճան ստրատիֆիկացված ընտրանք՝ ըստ մարզերի և բնակավայրի տիպի (Երևան, այլ քաղաք, գյուղ): Հարցման մասնակիցների թիվը բաշխվել է բնակչության ընդհանուր թվին համամասնորեն: Կլաստերները, տնային տնտեսությունները և հարցվողները ընտրվել են պատահականության սկզբունքով: Յուրաքանչյուր կլաստերում ընդգրկված է եղել միջինում 150 տնային տնտեսություն, որոնցից պատահականորեն ընտրվել են 15-ը:

Հաշվի առնելով թեմայի զգայուն լինելը և կանխատեսվող մերժումների քանակը՝ հիմնական ընտրանքից բացի կազմվել է նաև պահուստային ընտրանք՝ յուրաքանչյուր կլաստերի համար 25 տնային տնտեսության չափով: Հարցվողի ընտրության պատահականության ապահովման նպատակով տնային տնտեսությունում հարցվողի ընտրությունը կատարվել է ամենամոտ ծննդյան օրվա սկզբունքով:

Արդյունքում ձևավորվել է ընտրանքային համախմբություն՝ 1017 հասցեներով (Էջ 32, Աղյուսակ N1):

Հարցման ընթացքում մեծ է եղել չկայացած հարցազրույցների թիվը՝ հարցվողի անհասանելիության, մերժումների, համապատասխան տարիքի մարդու բացակայության և այլ պատճառներով: Չկայացած հարցազրույցների թիվը կազմել է մոտ 30%: Չկայացած հարցազրույցների թիվը՝ ըստ պատճառների, ներկայացված է հաջորդիվ (Հավելված 2, Աղյուսակ NRR):

Աղյուսակ N1

	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը	Կլաստերների քանակը
Արագածոտն	0	15	30	45	4
Արարատ	0	30	45	75	5
Արմավիր	0	31	74	105	7
Գեղարքունիք	0	30	45	75	5
Կոտայք	0	58	15	73	5
Լոռի	0	33	30	63	5
Շիրակ	0	45	45	90	6
Սյունիք	0	30	15	45	3
Վայոց Ձոր	0	15	13	28	2
Տավուշ	0	15	30	45	3
Երևան	373	0	0	373	27
Ընդամենը	**373**	**302**	**342**	**1017**	**72**

Հետազոտության գործիքը

Հետազոտության գործիքը ստանդարտացված հարցաթերթն է, որը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- Ներածական խոսք հարցման նպատակի, բնույթի, ստացված տեղեկատվության անանունության ու ընդհանրացված կերպով օգտագործվելու երաշխիքների մասին,
- Հերթական հարցազրույցի մասին տեղեկատվություն, հարցվողի ընտրության մասին հրահանգ, հարցազրույցի անցկացման ժամանակացույց,
- Բաժին D. Հարցվողի սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներ,
- Թեմատիկ որոշ հասկացությունների պարզաբանում՝ հարցվողին թեմային ծանոթացնելու և հարցաթերթում օգտագործված հասկացությունների մասին միևնույն պատկերացումները կիսելու նպատակով,
- Բաժին A. Արժեհամակարգ ու տեղեկատվության աղբյուրներ,
- Բաժին B. Գիտելիքներ, գիտելիքի աղբյուրներ, կարծրատիպեր և առասպելներ,
- Բաժին C. Կապը ԼԳԲՏԻ խմբի ներկայացուցիչների հետ,
- Բաժին E. Վերաբերմունքը գեյ, լեսբի, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց նկատմամբ,
- Հարցազրույցի ավարտ:

Հարցաթերթը կառուցված է մի շարք սանդղակների հիման վրա, որոնք հնարավորություն են տալիս չափել ոչ միայն ԼԳԲՏԻ տարբեր խմբերի նկատմամբ հասարակական դիրքորոշումները, այլև հասկանալ, թե ինչ գործոններ են ազդում այդ դիրքորոշումների ձևավորման վրա: Այդ սանդղակների համադրությունը թույլ է տալիս կապեր գտնել արժեհամակարգային առանձնահատկությունների, կրոնական և սոցիալական նախապատվությունների և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ունեցած դիրքորոշման, սեռականության մասին գիտելիքների, կարծրատիպերի ու առասպելների միջև:

Հարցաթերթը կառուցված է հետևյալ սանդղակների հիման վրա՝

Աջակողմյան ավտորիտարիզմը չափող սանդղակ (Ալթեմեյեր, 2006). բաղկացած է 30 դատողություններից, որոնք թույլ են տալիս չափել ավտորիտարիզմին հակվածությունը, ավտորիտար ագրեսիան և պայմանականությունների նկատմամբ լոյալությունը: Յուրաքանչյուր դատողություն չափվում է 1-9 միջակայքային սանդղակով, որտեղ հարցվողը արտահայտում է դատողության շուրջ համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը: Աջակողմյան

ավտորիտարիզմի հակվածության գործակիցը բոլոր դատողություններին տրված գնահատականների միջինացված արժեքն է:

Սոցիալական գերիշխանությունը չափող սանդղակ (կարճ տարբերակ, Սիդանիուս և Պրատո 1999; Ջոսթ և Թոմփսոն, 2000). 7 դատողություններից բաղկացած սանդղակ է, որը չափվում է 1-7 միջակայքային սանդղակով: Այն չափում է հասարակության խմբերի միջև խտրականության դրսևորման նկատմամբ անհատական դիրքորոշումները: Ինչպես առաջին դեպքում, այստեղ ևս գործակիցը միջինացված արժեք է:

Կրոնական արմատականությունը չափող սանդղակ (Ալթեմեյեր և Հանսբերգեր, 2004). 12 դատողությունից բաղկացած սանդղակ է: Դատողությունները գնահատվում են 1-9 միջակայքային սանդղակով: Կրոնական արմատականության գործակիցը բոլոր դատողությունների գնահատականների միջինացված արժեքն է: Այս սանդղակի միջոցով չափվում են ռազմատենչ, պահպանողական համոզմունքները:

Գեյերի և լեսբիների նկատմամբ դիրքորոշման չափման սանդղակ (կարճ տարբերակ, Հերեկ, 1980). բաղկացած է 10 դատողությունից, որոնցից 5-ը վերաբերում են լեսբիներին, 5-ը՝ գեյերին: Այս սանդղակի միջոցով չափվում է գեյերի և լեսբիների նկատմամբ վերաբերմունքը և դիրքորոշումների տարբերությունները: Դատողությունները չափվում են 1-5 միջակայքային սանդղակով:

Բիսեքսուալ անձանց նկատմամբ դիրքորոշման չափման սանդղակ (Մոհր և Ռոխլեն, 1999). 1-5 միջակայքային սանդղակով չափվող, 18 դատողություններից բաղկացած սանդղակ է, որը պարունակում է հարցեր բիսեքսուալ կանանց և տղամարդկանց վերաբերյալ և թույլ է տալիս չափել ոչ միայն բիսեքսուալ անձանց հանդեպ ընդհանուր վերաբերմունքը, այլև հնարավորություն է տալիս համեմատականներ անցկացնել կին և տղամարդ բիսեքսուալների մասին դիրքորոշումների միջև:

Գենդերիզմի և տրանսֆոբիայի չափման սանդղակ (Հիլ և Ուիլոբի, 2005). 1-7 միջակայքային սանդղակով չափվող 30 դատողություններից (բնօրինակ սանդղակից 2 դատողություն հանվել է) բաղկացած սանդղակ է, որը հնարավորություն է տալիս չափել ինչպես տրանսգենդեր անձանց նկատմամբ վերաբերմունքը, այնպես էլ պատկերացում կազմել մի շարք գործոնների մասին, ինչպիսիք են՝ կանացի տղամարդկանց վերաբերյալ նախապաշարումները, տրանս անձանց նկատմամբ բռնության, նրանց անբնականության և անբարոյականության մասին պատկերացումները և գենդերի շուրջ պատկերացումներն ու դիրքորոշումները: Հարցաթերթը նաև ներառում է այնպիսի հարցադրումներ, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել ԼԳԲՏԻ անձանց և նրանց խնդիրների շուրջ առկա տեղեկացվածությունն ու դիրքորոշումները: Հետազոտության արդյունքների մեկնաբանումից առաջ անհրաժեշտ է հավաստիանալ հետազոտության շրջանակներում օգտագործված սանդղակների հուսալիության մեջ: Քրոնբախի ալֆան (Քրոնբախ, 1951)[6] սանդղակների ներքին կայունությունը կամ հուսալիությունը ցույց տվող, 0-1 միջակայքում գտնվող գործակից է, որի օգնությամբ չափվել է վերլուծության ընթացքում օգտագործած սանդղակների հուսալիությունը: Որքան բարձր է ալֆա գործակիցը, այնքան հուսալի է այդ սանդղակի օգտագործումը հետազոտության մեջ: Սոցիալական գիտություններում 0.70 և ավելի արժեքի դեպքում է սանդղակը հուսալի համարվում, ինչը նշանակում է, որ սանդղակը կազմող բաղադրիչների միջև փոխկապվածություն կա:

Ստորև ներկայացվել է հետազոտության ընթացքում օգտագործված յուրաքանչյուր սանդղակի հուսալիությունը՝ համաձայն հավաքագրված տվյալների.

Աջակողմյան ավտորիտարիզմը չափող սանդղակ՝ α=0.757

Սոցիալական գերիշխանությունը չափող սանդղակ՝ α=0.495

Կրոնական արմատականությունը չափող սանդղակ՝ α=0.740

Գեյերի և լեսբիների նկատմամբ դիրքորոշման չափման սանդղակ՝ α=0.842

Բիսեքսուալ անձանց նկատմամբ դիրքորոշման չափման սանդղակ՝ α=0.702

Գենդերիզմի և տրանսֆոբիայի չափման սանդղակ՝ α=0.920

6 Քրոնբախի ալֆա. Սանդղակների հուսալիությունը չափող գործիք http://www.joe.org/joe/1999april/tt3.php/

Ինչպես երևում է վերը թվարկված գործակիցներից, հուսալիության անհամեմատ ցածր գործակից ունի սոցիալական գերիշխանության չափման գործակիցը: Նշանակում է, որ այս սանդղակի հուսալիությունը ցածր է, հետևաբար պետք է վերապահումով մոտենալ տվյալ սանդղակի միջոցով ստացված տվյալներին:

Դաշտային աշխատանքների նկարագրությունը

Հետազոտության դաշտային փուլը իրականացվել է 2015 թվականի նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին: Այս ժամանակահատվածում իրականացվել է 1017 հարցազրույց, Երևանում՝ 34%, Հայաստանի 10 մարզերում՝ 66%:

Դաշտային աշխատանքների ընթացքի և մարտահրավերների մասին պատկերացում կազմելու համար դաշտային աշխատանքների ավարտից անմիջապես հետո հանդիպում է կազմակերպվել հարցազրուցավարների և դաշտային աշխատանքների համակարգողների հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են դաշտային աշխատանքների ժամանակ առաջացած խնդիրները, հարցաթերթի կիրառելիության շուրջ մտորումները, մասնակիցները հընչեցրել են առաջարկներ՝ ուղղված հետագայում նմանատիպ հետազոտությունների կազմակերպման աշխատանքների բարելավմանը:

Ներկայացնենք այդ հանդիպման մի շարք ուշագրավ մանրամասներ:

Դաշտային աշխատանքների ժամանակ հարցազրուցավարները բախվել են մի շարք խնդիրների, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ լայնամասշտաբ հարցումների ժամանակ ծագող դասական խնդիրներ և թեմատիկ խնդիրներ, որոնք ուղղակիորեն բխել են այս հետազոտության տեսակից և բովանդակությունից:

<u>Հարցումների ժամանակ ծագող դասական խնդիրներ.</u>

Պատահական ընտրանքով իրականացվող լայնամասշտաբ սոցիոլոգիական հարցումների ժամանակ խնդիր են առաջացնում «փակ դռները»: Այս երևույթը, մասնավորապես, ավելի անհանգստացնող է դառնում տարեցտարի արտագաղթի ծավալների ընդլայնման պատճառով: «Փակ դռների» երևույթը վերաբերում է այն դեպքերին, երբ, ըստ ընտրանքի, հարցազրուցավարը պետք է հարցում անցկացնի ընտրված տանը, սակայն այդ տունն այլևս բնակեցված չէ: Հարևանների հետ զրույցների արդյունքում մեծ մասամբ պարզվում է, որ տնային տնտեսությունների անդամները արտագաղթել են, և հարկ է ընտրել մեկ այլ տնային տնտեսություն: Մեկ այլ խնդիր է միայն տարեց անդամներ ունեցող տնային տնտեսությունների թվի աճը: Այս տնային տնտեսությունների մյուս անդամները գտնվում են երկրից կամ տվյալ բնակավայրից դուրս, հետևաբար, ընտրանքի պահանջներից ելնելով, հաճախ այս տնային տնտեսությունները ևս դուրս են մնացել ընտրանքից:

Քաղաքային բնակավայրերում հարցազրուցավարները բախվել են նաև այն խնդրի հետ, որ ընտրված հարցվողը աշխատանքից ուշ է վերադառնում, իսկ այլ օր նրան հարմար չէ, հետևաբար հարցազրուցավարը հնարավորություն չի ունեցել հարցում իրականացնելու: Այս դեպքերում ևս մեկ այլ տնային տնտեսություն է ընտրվել:

Հարցման ընթացքում ի հայտ են եկել նաև **<u>թեմային բնորոշ որոշ առանձնահատուկ խոչընդոտներ</u>:**

Թեև հարցմանը մասնակցելուց հրաժարվելը դասական խնդիրներից է, պետք է առանձնահատուկ շեշտադրել, որ թեմային ծանոթանալուց հետո հրաժարվողների թիվն էլ ավելի է մեծացել: Եղել են նաև դեպքեր, երբ հարցվողը հարցազրույցի ընթացքում է որոշում կայացրել ընդհատել հարցազրույցը և հրաժարվել է այլևս պատասխանել հերթական հարցերին. հարցազրույցը կիսատ է մնացել:

Հարցազրուցավարները փորձել են հարցազրույցը անցկացնել այնպիսի միջավայրում, որտեղ հնարավորություն կլինի առանձնանալ հարցվողի հետ՝ կողմնակի ազդեցությունից խուսափելու նպատակով: Սակայն եղել են դեպքեր, երբ ընտանիքի անդամները հրաժարվել են ընդառաջել հարցազրուցավարի խնդրանքին և ներկա են գտնվել հարցմանը: Այս դեպքերում հարցվողը ավելի լարված է եղել և հարցերին պատասխանել է խուսափողական եղանակով: Այսպիսի իրավիճակներ գրանցվել են հիմնականում երիտասարդ կանանց և աղջիկների հետ հարցազրույցների ժամանակ, երբ նրանք, վախենալով ամուսնու կամ ընտանիքի

այլ անդամի զայրույթից, հապճեպ պատասխաններ են տվել կամ խուսափել են անկեղծորեն պատասխանել հարցերին: Եղել են նաև դեպքեր, երբ երիտասարդ կնոջ կամ աղջկա մայրը կամ սկեսուրը միջամտել են, ընդհատել հարցազրույցը՝ պատճառաբանելով, թե աղջկան զերծ են պահում բացասական ազդեցությունից:

Հարզազրուցավարները նաև փաստում են, որ տղամարդ հարցվողներն ավելի ջղագրգիռ են մոտեցել թեմային. թեման նրանց զայրացրել է, հետևաբար, հարցազրուցավարների համար բարդ է եղել մանրամասն տեղեկատվություն ստանալը:

Որոշ հարցվողներ թեմայի մասին լսելով ագրեսիվ վարք են ցուցաբերել՝ հարցազրուցավարին դուրս հրավիրելով կամ պահանջելով պատռել հարցաթերթը:

Եղել են դեպքեր, երբ հարցազրուցավարները մեղադրվել են «գեյ պրոպագանդա» իրականացնելու մեջ, մասնավորապես, երբ կարդացել են հարցաթերթի ներածական մասը, որտեղ բացատրվում են մի շարք հասկացություններ: Հարցազրուցավարների համար անելանելի իրավիճակ է ստեղծվել. մի կողմից, շարունակելով հարցադրումները, ավելի կգրգռեին հարցվողների զայրույթը և կասկածներն առ այն, որ նրանք քարոզչությամբ են զբաղվում, մյուս կողմից, հարցվողների բացասական վերաբերմունքը կիսելով, հարցազրուցավարը էթիկական լուրջ խախտում կիրականացներ:, Հարցազրուցավարների հետ ֆոկուս խմբի ընթացքում վեր հանվեցին մի շարք խնդիրներ և առաջարկներ, որոնց ևս հարկ է անդրադառնալ:

Հիմնվելով դաշտային աշխատանքների արդյունքների վրա՝ հարցազրուցավարների կարծիքով դեռևս վաղ է Հայաստանում ԼԳԲՏԻ տարբեր խմբերի մասին մանրամասն հարցադրումներով հարցաթերթ մշակել և դուրս գալ դաշտ: Նախևառաջ, հարկ է նշել, որ հարցվողների մեծ մասը դեռևս չի ընկալում ԼԳԲՏԻ խմբերի միջև տարբերությունները: Նրանց ընկալումների համաձայն՝ ոչ հետերոսեքսուալ անձինք, ելնելով սեռային առանձնահատկություններից, երկու ընդհանուր խմբի են բաժանվում՝ կին և տղամարդ նույնասեռականներ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր խմբի մասին մանրամասնող հարցերը նրանք ընկալում են որպես անընդհատ կրկնվող հարցեր, ինչը նյարդայնացնող է: Արդյունքում, ԼԳԲՏԻ նկատմամբ բացասական տրամադրվածությունն ավելի է խստացնում:

Հարցազրուցավարներն առաջարկում են դեռևս չշտապել և հարցաթերթը կազմելիս զետեղել ընդհանրական հարցեր ԼԳԲՏԻ ամբողջ հանրույթի վերաբերյալ:

Ըստ հարցազրուցավարների՝ մանրամասնող հարցերը, ինչպես նաև պատասխանների մեջ միմյանց հակասող կարծիքները միայն պատճառ են, քանի որ, հարցվողը, որը չունի բավարար իրազեկվածություն՝ տարանջատելու լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր խմբերը, շփոթմունքի է ենթարկվում և երբեմն պատասխանում՝ առանց մտքի տրամաբանական շղթային հետևելու: Նրանք այս թեմայի շուրջ երբեք չեն մտածել, և երբ հնչում են հարցեր, որոնց մասին նրանք երևէ չէին մտածել, չունեն հստակ դիրքորոշում, պահի ազդեցության տակ կարող են հակասական պատասխաններ տալ:

Հարցաթերթի մշակման ժամանակ, նպատակ ունենալով բարձրացնել հարցվողի իրազեկվածությունը ԼԳԲՏԻ մասին, ներածական մաս է ընդգրկվել, որտեղ տրվել են հիմնական հասկացությունների սահմանումները: Սակայն, ըստ հարցազրուցավարների, նույնիսկ այս պարզաբանումը բավարար չէր հարցվողների համար տերմինները միանշանակ ընկալելու և հարցման ընթացքում չշփոթելու համար: Թերևս, նաև սակավ իրազեկվածության պատճառով է, որ հետազոտության արդյունքներում առատ է «Դժվարանում եմ պատասխանել» և «Չեզոք» տարբերակների ընտրությունը:

Հարցվածների ընդհանուր բնութագիրը

Հարցմանը մասնակցել է 1017 մարդ, որոնց 34%-ը Երևանից, 66%-ը՝ 10 մարզերից: Տոկոսային հարաբերակցությունը համապատասխանում է Հայաստանի ընդհանուր բնակչության բաշխվածությանը: Որպեսզի պատկերացում կազմենք, թե որքանով է հարցմանը մասնակցած բնակչությունը ներկայացուցչական Հայաստանի բնակչության համար, մի շարք սոցիալ-ժողովրդագրական տվյալներ կհամեմատենք 2011 թվականի մարդահամարի առկա բնակչության տվյալների հետ, քանի որ այն ՀՀ բնակչության մասին տվյալ-

ների ամենամեծ ու թարմ շտեմարանն է (հարցման մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական պատկերը մանրամասնորեն ներկայացված է 1-6 աղյուսակների միջոցով՝ «Աղյուսակներ և գծապատկերներ» բաժնում):

Սեռային բաշխվածության առումով, հարցված բնակչության և մարդահամարի տվյալների մեջ կա շեղում: Հարցման մասնակիցերի 32%-ը տղամարդ է, 68%-ը՝ կին: Այս տվյալները 14 տոկոսային կետով տարբերվում են ըստ մարդահամարի բնակչության սեռային բաշխվածության պատկերից (46% տղամարդ, 54% կին): Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել հարցման պահին արտագնա աշխատանքի մեկնած տղամարդկանց թվով: Հարցվածների միջին տարիքը 42 է (M=42, SD=13.8, Mdn=42): Նրանք հիմնականում ազգությամբ հայ են (98.4%) և Հայ առաքելական եկեղեցու հետևորդ (95.6%): Այս տվյալները շատ չեն տարբերվում մարդահամարի տվյալներից՝ 98.1% հայ և 92,6% Հայ առաքելական եկեղեցու հետևորդ:

Հարցվածների շրջանում գերակշռում են ամուսնացածները (64.4%), իսկ չամուսնացածները կազմում եմ ընդհանուր թվի 18%-ը:

Գրեթե հավասարապես հարցվել են միջնակարգ (36%) և բարձրագույն կրթությամբ (31%) անձինք: Միջին մասնագիտական կրթություն ունեցողների բաժինը կազմում է 23%: Ըստ մարդահամարի տվյալների, բարձրագույն կրթություն ունի միայն 19%-ը, միջնակարգ՝ 40% և միջին մասնագիտական՝ 15%-ը: Հետևաբար, հարցվածների շրջանում համեմատաբար շատ են բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք: Կրթական մակարդակի տարբերությունը կարող է որոշակիորեն ազդել հարցվածների պատասխանների վրա: Հարցվածների 31%-ը տնային տնտեսուհի է, 16%-ը՝ գործազուրկ, 17%-ը հանրային/պետական ոլորտի աշխատող է, 11%-ը՝ մասնավոր, իսկ 10%-ն՝ ինքնազբաղված:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ հարցվածների սոցիալ-ժողովրդագրական պատկերը մոտ է մարդահամարի տվյալներին, սակայն հարցման արդյունքների՝ ամբողջ բնակչության վրա ընդհանրացնելուն պետք է վերապահումով մոտենալ:

Վերլուծության մեթոդաբանություն

Հետազոտության արդյունքում ստացված տվյալների վերլուծության ժամանակ, բացի դասական աղյուսակների, վիճակագրական մի շարք տվյալների (հաճախականություն, միջին (M), ստանդարտ շեղում (SD), և այլն) միջոցով վերլուծությունից, օգտագործվել են փոփոխականների փոխհարաբերությունների չափման հետևյալ երկու մեթոդները՝

1. ռեգրեսիոն վերլուծություն, որը կիրառվել է նոմինալ/դիխոտոմիկ տվյալների վերլուծության համար, և
2. կորելյացիոն վերլուծություն, որը կիրառվել է շարունակական/սանդղակային տվյալների վերլուծության համար:

Վերլուծության ժամանակ մեծ կարևորություն է ներկայացնում կապի նշանակալիությունը ցույց տվող p գործակիցը: Եթե p>0.10-ից, ապա երկու գործակիցների միջև կապը վերլուծության համար նշանակալի չէ[7]:

Արդյունքների վերլուծության ժամանակ միջին արժեքին (M) զուգընթաց դիտարկվել է ստանդարտ շեղման գործակիցը (SD): Արդյունքների ներկայացման ժամանակ դրան անդրադարձել ենք միայն նշանակալի ազդեցություն ունենալու պարագայում: Սանդղակների ռեգրեսիոն և կորելյացիոն վերլուծությունների ժամանակ միջին գործակցի հաշվարկը իրականացվել է միայն այն դեպքերում, երբ սանդղակի բաղադրիչ բոլոր հարցերին տրվել է պատասխան, և հակառակը, չեն դիտարկվել այն դեպքերը, երբ որևէ հարցի պատասխան չի տրվել, հարցվողը դժվարացել կամ հրաժարվել է պատասխանել: Ռեգրեսիոն վերլուծության ժամանակ հեռացվել են վերլուծության ժամանակ դիտարկվող բոլոր փոփոխականներում առկա նման բոլոր դեպքերը միաժամանակ, իսկ կորելյացիոն վերլուծության ժամանակ՝ միայն դիտարկվող փոփոխականին առնչվող դեպքերը: Արդյունքում սանդղակների քննարկման ժամանակ դիտարկվել են 300-900 դեպք՝ կախված սանդղակից և վերլուծության մեթոդից: Մնացած բոլոր դեպքերում վերլուծության տվյալները ներկայացվել են 1017 հարցվածների համախմբության համար:

7 Հետազոտության ընթացքում առանձնացվել են միայն այն դեպքերը, երբ p<0.10, հետևաբար կապը նշանակալի է և կարելի է շարունակել մեկնաբանել այդ գործակիցների կապին առնչվող այլ մանրամասներ:

Տվյալների ներկայացման ժամանակ համաձայնության և անհամաձայնության աստիճան ցույց տվող ցուցանիշները համախմբվել են՝ որպես մեկ ցուցանիշ. «լիովին համաձայն եմ» և «մասամբ համաձայն եմ», «ընդհանրապես համաձայն չեմ», «մասամբ համաձայն չեմ» տարբերակները համախմբվել են «համաձայն եմ» և «համաձայն չեմ» ընդհանուր ցուցիչների տակ:

Հետազոտությամբ հարցվածների կրոնական և ազգային պատկանելությունը՝ որպես ազդեցության գործոն հնարավոր չի եղել դիտարկել, քանի որ հարցված բնակչությունն այս առումով միատարր է (գրեթե բոլորը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ հայեր են):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցվածների արժեքային կողմնորոշումներն ու դրանց վրա ազդող գործոնները

Տեղեկատվական աղբյուրների օրըստօրե աճող բազմազանությունը և ազդեցությունը կարևոր դեր ունեն մարդկանց արժեհամակարգի ձևավորման և փոխակերպման, ինչպես նաև գիտելիքի համալրման գործում: Մարդը, լինելով սոցիալական էակ, անմասն չի մնում արտաքին ազդեցությունից և իր դիրքորոշումները, հետևաբար նաև վարքը կառուցում է արտաքին ներգործության ներքո: Անձի արժեհամակարգը, որը ավանդական հասարակություններում մեծապես սնվում է հասարակության մեջ ամրագրված նորմերից և արժեքներից, պայմանավորում է ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դիրքորոշումներն ու վերաբերմունքը: Որքան հասարակությունը պահպանողական է և ավանդապաշտ, այնքան խիստ է վերաբերմունքը հասարակական նորմերից «շեղվող» երևույթների նկատմամբ:

Փոխակերպվող հասարակություններում, ինչպիսին նաև հայաստանյան հասարակությունն է, հասարակական արժեհամակարգը ևս փոխակերպման մեջ է: Այն իր վրա կրում է նաև արտաքին գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են, այլ քաղաքակրթություններն ու մշակութային հոսքերը:

ԼԳԲՏԻ-ն Հայաստանում համեմատաբար նոր երևույթ է ընկալվում ու համարվում է օտար արժեք: Այն փոխակերպվող հայաստանյան հասարակության հնի ու նորի խաչմերուկում քննարկման առարկա է:

Սույն հետազոտությունը հետամուտ է բացահայտելու հասարակության արժեքային դիրքորոշումները, տեղեկատվական հոսքերը և դրանց կապը ԼԳԲՏԻ նկատմամբ վերաբերմունքի հետ: Հետազոտությունն առաջնորդվում է այն վարկածով, որ ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները մեծապես պայմանավորված են հարցվածների արժեքային կողմնորոշումներով և տեղեկատվական աղբյուրների ընտրությամբ:

Մինչ ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումներին անդրադառնալը ուսումնասիրենք հարցվածների արժեքային կողմնորոշումները և ԼԳԲՏԻ մասին տեղեկատվության ստացման աղբյուրները:

ԼԳԲՏԻ մասին տեղեկատվության ստացման աղբյուրներն ու դրանց նկատմամբ վստահությունը

Հարցվածների համար տեղեկատվության ստացման առաջնային լեզուն հայերենն է: Այն նշվել է գրեթե բոլոր հարցվողների կողմից: Անգլերենն ու ռուսերենը նշվել են որպես տեղեկատվության ստացման երկրորդական աղբյուրներ: Հարցվածներից մի քանիսը նորություններին հետևում են նաև գերմաներենով և ֆրանսերենով:

ԼԳԲՏԻ մասին տեղեկատվության առաջնային և հիմնական աղբյուր է հեռուստատեսությունը: Հարցվածները մասնավորապես առանձնացրել են հեռուստատեսային լրատվական, տեղեկատվական հաղորդաշարերը, այնուհետ՝ ժամանցային ծրագրերը, որոնք ևս առաջնային տեղեկատվական աղբյուր են հանդիսանում, թեև նույն զանգվածայնությունը չեն վայելում:

Որպես առաջնային տեղեկատվական աղբյուրներ հարցվածները առանձնացրել են նաև սոցիալական ցանցերն ու համացանցային լրատվամիջոցները: Հարկ է նշել, որ, սոցիալական ցանցերն ավելի նախընտրելի են հարցվածների կողմից, քան համացանցային լրատ-

վամիջոցները: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք, որ համացանցային լրատվամիջոցների հիմնական մասը իրենց տեղեկատվությունը լայն շրջանառության են դնում սոցիալական ցանցերի միջոցով, կարելի է պնդել, որ համացանցային լրատվամիջոցների կողմից և սոցիալական ցանցերով տարածվող տեղեկատվության զգալի մասը նույնական է:

Հարցվածները, որպես տեղեկատվության երկրորդային աղբյուրներ նշել են ռադիոն և տպագիր մամուլը, սակայն իրենց զանգվածայնությամբ սրանք շատ են զիջում առաջնային աղբյուրներին (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ԼԳԲՏԻ անձանց և նրանց հիմնախնդիրների մասին տեղեկատվության աղբյուրներ



Բացի տեղեկատվության ստացման վերոնշյալ աղբյուրներից, հարցվածներն առանձնացրել են նաև հաստատություններ և անձանց, որոնց տրամադրած տեղեկատվությունը ԼԳԲՏԻ մասին նրանց համար արժանահավատ է և վստահելի:

Եվ այսպես, հարցվողներն առանձնացրել են առաջնային աղբյուրներ և երկրորդային աղբյուրներ:

Առաջնային աղբյուրների ցանկում կարևորվել են մասնագիտական տեղեկատվություն և գիտելիք տրամադրող աղբյուրները՝ գիտնականներ, հետազոտողներ, մասնագետներ, որոնք երևույթի ուսումնասիրողն ու գիտությունը զարգացնողներն են: Ըստ հարցվածների՝ վստահելի տեղեկատվական աղբյուր են նաև լրագրողները: Հարցվածները կարևորել են նաև իրենց սոցիալական ցանցի առաջնային կապերով՝ ընտանիքի անդամներից և ընկերներից ստացած տեղեկատվությունը՝ այն համարելով ԼԳԲՏԻ մասին տեղեկատվության վստահելի առաջնային աղբյուր:

Ավելի քիչ, սակայն հարցվածները կարևորել և վստահելի են համարել նաև կրոնի ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏԻ մասին փոխանցած տեղեկատվությունը:

Արձանագրենք, որ ԼԳԲՏԻ մարդիկ և նրանց հիմնախնդիրների շուրջ աշխատող կազմակերպությունները, լինելով խնդրի անմիջական կրող ու խնդրի հետ աշխատողը, հարցվողներին ավելի քիչ վստահություն են ներշնչում և միայն երկրորդային տեղեկատվական աղբյուր են համարվում:

ԼԳԲՏԻ հարցերի շուրջ տեղեկատվական աղբյուրներն ըստ վստահելիության մակարդակի կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

Առաջնային աղբյուրներ (N)
Գիտնական/հետազոտող/մասնագետ (239)
Լրագրող (174)
Ընտանիքի անդամներ (101)
Ընկերներ (77)
Հոգևորականներ (54)

Երկրորդային աղբյուրներ (N)
Ուսուցիչներ (5)
քաղաքական գործիչներ (19)
ԼԳԲՏԻ անձինք (22)
ԼԳԲՏԻ կազմակերպության ներկայացուցիչներ (23)

Ընտանիքը՝ որպես գերազանցապես առաջնային արժեք

Ըստ Հայաստանում արժեքային կողմնորոշումներն ուսումնասիրող «Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում» հետազոտության[8], հայ հասարակության մեջ առաջնային նախընտրություններ են ստանում այնպիսի պահպանողական արժեքներ, ինչպիսիք են կոնֆորմությունն ու անվտանգությունը, որոնք ցույց են տալիս հասարակության մեջ ընդունված նորմերի, արժեքների և մտերիմ հարաբերությունների պահպանման կարևորությունը: Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ հարցվածների արժեքային առաջնայնությունների բուրգի ամենավերևում ընտանիքն է՝ մտերիմ հարաբերությունների ամենակենտրոնական օղակը: Որպես արժեք՝ այն ամենաշատն է կարևորվել հարցվածների կողմից:

Գծապատկեր 2. Հարցվողների արժեքային առաջնայնությունները



Ինչպես պատկերված է Գծապատկեր 2-ում, ըստ հարցվածների դասակարգման, երկրորդ տեղում առողջությունն է, իսկ երրորդ տեղը կիսում են կրոնը, հայրենիքն ու ֆինանսական բարեկեցությունը: Այս արժեքներին հաջորդում են խոսքի ազատությունն ու մարդու իրավունքները, և միայն այնուհետև՝ ավանդույթներն ու սոցիալական կապերը, ընկերները: Հարցվածների կողմից որպես արժեք ամենաքիչը կարևորվել է կարիերան:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, ժողովրդավարության հիմք հանդիսացող մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունը առաջնայնությունների դասակարգման մեջ հարցվածները միջին դիրքի են արժանացրել՝ ավանդական հասարակության հիմք հանդիսացող ընտանիքից, ինչպես նաև կրոնից և հայրենիքից հետո: Հետաքրքիր է, որ ավանդույթներն արժեքային առաջնայնությունների դասակարգման մեջ հարցվածների կողմից այդքան էլ չեն կարևորվել:

Արժեքային կողմնորոշումները պայմանավորող աշխարհաքաղաքական նախապատվությունները

Արժեքային կողմնորոշման ձևավորման կամ փոխակերպման վրա ներգործում են նաև տվյալ երկրի քաղաքական/քաղաքակրթական կողմնորոշումն ու նախընտրությունները: Հարցվածներին առաջարկվել է գնահատել, թե ինչպիսի հարաբերություններ կցանկանային, որ Հայաստանն ունենար մի շարք երկրների և երկրների միությունների հետ՝ հասկանալու նրանց աշխարհաքաղաքական նախապատվությունները, որոնք ոչ միայն զուտ քաղաքական են, այլ նաև արժեքային կողմնորոշման արդյունք են:

Այսպիսով, հարցվածները մեծապես կարևորել են ՌԴ-ի և նրա կողմից գլխավորվող նորաստեղծ Եվրասիական տնտեսական միության հետ կապերի ամրապնդումը: Հարցվածների ավելի քան 2/3-ը (N=807) նախընտրում է ավելի սերտ հարաբերություններ ՌԴ-ի հետ, իսկ կեսից ավելին (N=556) կողմ է արտահայտվել Եվրասիական տնտեսական միության հետ ավելի սերտ հարաբերություններ ունենալուն:

Միաժամանակ, հարցվածների 20%-ը նախընտրում է ավելի սահմանափակ հարաբերություններ ունենալ Եվրոմիության (N=202) և ԱՄՆ-ի (N=199) հետ: ԱՄՆ-ի

8 Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում https://docs.google.com/file/d/0B6RwRQx-ACtaenU1VnRxTXJvQms/edit?pli=1

հետ ավելի սերտ հարաբերությունների է ձգտում հարցվածների 28%-ը (N=280), իսկ 45%-ը (N=460) կողմ է, որ Հայաստանի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները մնան ինչպես կան: Եվրոմիության հետ ավելի սերտ հարաբերություններին կողմ է հարցվածների 33%-ը (N=337), մինչդեռ 39%-ը (N=401) գերադասում է անփոփոխ տեսնել այդ հարաբերությունները:

Գծապատկեր 3. Համեմատելով ներկա իրավիճակի հետ, ինչպիսի՞ հարաբերություններ կցանկանայիք, որ Հայաստանն ունենար ...-ի հետ (%)



Այսպիսով, հարցվածների՝ ՌԴ, և Եվրասիական տնտեսական միություն կողմնորոշվածությունը շարունակում է գերադասելի մնալ հարցվածների, ինչպես նաև հայ հասարակության կողմից:

Արժեքային կողմնորոշումներ

Հետազոտության շրջանակներում հարցվածների արժեքային կողմնորոշումներն ուսումնասիրելու համար օգտագործվել են երեք տեսակի սանդղակներ, որոնք չափում են ավտորիտարիզմի, սոցիալական գերիշխանության և կրոնական արմատականության նկատմամբ հակվածությունը՝ ենթադրելով, որ նման արժեքային կողմնորոշումները պայմանավորում են նաև ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները:

Դիտարկենք վերը նշված սանդղակներից յուրաքանչյուրը:

Աջակողմյան ավտորիտարիզմ

Հոգեբանության պրոֆեսոր, կանադացի Ալթեմեյերի առաջարկած սանդղակը[9] չափում է անձանց տրամադրվածությունը **աջակողմյան ավտորիտարիզմի** նկատմամբ: Այն 1-9 միջակայքով սանդղակ է, որտեղ աճող ցուցանիշը արտահայտում է ավտորիտարիզմին հակվածությունը: Ավտորիտարիզմի հետևորդները հաճախ աջակցում են իրենց հասարակություններում գործող հեղինակություններին և իշխանությանը, ինչպիսիք են կառավարական մարմիններն ու կրոնական առաջնորդները: Վերջիններս պատմականորեն համարվել են «ճշմարիտ» առաջնորդներ, ում հեղինակությունը ժամանակների ընթացքում հաստատվել է ավանդապես: Այս հանգամանքը շատ է կարևորվում ավտորիտարիզմի կողմնակիցներից շատերի կողմից: Հոգեբանական տեսանկյունից սրանք այն մարդիկ են, որոնք լոյալ են հաստատված և գործող իշխանություններին, նույն իշխանությունների կողմից խրախուսվող ագրեսիվություն են ցուցաբերում, մեծ տուրք են տալիս հասարակության մեջ ձևավորված պայմանականություններին (նորմերին ու կանոններին): Աջակողմյան ավտորիտարիզմին հակված անձինք ձգտում են ապրել մի հասարակությունում, որտեղ գերիշխում է միատարրությունը և չի խրախուսվում բազմազանությունը: Սա հնարավոր է սոցիալական վերահսկողության, խմբային իշխանության ու փոխկապվածության բարձր մակարդակի ապահովման շնորհիվ:

Նման պարագայում կարևորվում է սահմանափակումների ձևակերպումը բարոյական նորմերի, խոսքի ազատության սահմանների որոշման և սահմանված նորմերին աներկբա ենթարկվելու միջոցով:

Հասարակություններում, որտեղ աջակողմյան ավտորիտարիզմը բարձր է գնահատվում, մարգինալացված խմբերը, այդ թվում՝ ԼԳԲՏԻ-ն, բախվում է անհանդուրժողականության բարձր ալիքի: Նրանք, համարվելով հասարակության նորմերից «շեղվող», հաճախ նաև՝

9 Ալթեմեյեր Բ. (1981) Աջակողմյան ավտորիտարիզմ, Ուինիփեգ, Կանադա, Մանիթոբայի համալսարանի հրատարակչություն

հասարակության կայունության սպառնալիք, բախվում են հասարակական մերժմանը, հաճախ նաև բռնության զոհ են դառնում:

Այս հետազոտության ընթացքում աջակողմյան ավտորիտարիզմի չափման՝ 1-9 միջակայքով սանդղակի կիրառումը տվել է հետևյալ պատկերը. հարցվածների միջին ցուցանիշը 6.5 է (M=6.5, N=553), միջինից բարձր, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ հարցվածների համախմբությունը հակված է ավտորիտարիզմի, այսինքն՝ հասարակության մեջ կարևորվում են արդեն ամրագրված նորմերն ու սովորույթները, իսկ որևէ շեղում, նոր երևույթ կամ դեռևս չի արժանացել համապատասխան ընդհանուր դիրքորոշման, կամ չի խրախուսվում: Հարցվածները հակված են իշխանությունների նկատմամբ լոյալության, լոյալ են իշխանությունների և հեղինակությունների նկատմամբ, հակված են հետևելու նրանց հրահանգին:

Ավելին, ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ աջակողմյան ավտորիտարիզմին հակվածության և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդավարական բնութագրիչների միջև կապ կա: Սա նշանակում է, որ այդ բնութագրիչների փոփոխությունը նշանակալիորեն կապ ունի ավտորիտարիզմի հակվածության աստիճանի փոփոխության հետ:

Այդպիսի բնութագրիչներ են բնակավայրի տիպը, հարցվածների սեռը, տարիքը, կրթությունը, զբաղվածությունը:

Դիտարկելով վերը նշված բնութագրիչներից յուրաքանչյուրը, կարելի է նկատել, որ տղամարդիկ ավելի հակված են ավտորիտարիզմի, քան կանայք:

Ավտորիտարիզմին հակվածության ցուցանիշի համեմատությունը ըստ բնակավայրի տիպի ցույց է տալիս, որ երևանաբնակներն ավելի քիչ են հակված ավտորիտարիզմի, քան այլ քաղաքներում բնակվող հարցվածները, վերջիններս էլ իրենց ցուցանիշներով զիջում են գյուղաբնակներին:

Պատահական չէ նաև, որ սոցիալական անհնազանդության ալիքը սկսվում է Երևանում և տարածվում այլ քաղաքներում, գյուղական բնակավայրերում այն քիչ է արտահայտվում: Ավտորիտարիզմին հակվածության ցուցանիշները վկայում են այն մասին, որ գյուղական բնակավայրերում լոյալությունը հեղինակությունների, իշխանությունների նկատմամբ ավելի ուժեղ է, իսկ հասարակական պայմանականություններն ավելի խիստ են պահպանվում:

Տարիքի աճին համընթաց աճում է նաև ավտորիտարիզմի նկատմամբ հակվածությունը:

Կրթամակարդակի և ավտորիտարիզմի հակվածության միջև ևս նշանակալի կապ է նկատվում. որքան բարձր է հարցվածի կրթական մակարդակը, այնքան նվազ է նրա հակվածությունը ավտորիտարիզմին: Կրթվածությունը ոչ միայն թույլ է տալիս քննադատորեն մոտենալ «ճշմարիտ» արժեքներին և հեղինակություններին, այլև փոխակերպման ուժ է:

Այդ մասին է վկայում նաև մեկ այլ ցուցանիշ. գիտականներին, մասնագետներին և հետազոտողներին վստահելի տեղեկատվական աղբյուր համարողներն ավելի քիչ են հակված ավտորիտարիզմի, քան այն հարցվածները, որոնք այս աղբյուրին առաջնայնություն չեն տալիս:

Աջակողմյան ավտորիտարիզմի և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները համակարգված տեսքով տեղ են գտել «Աղյուսակներ և գծապատկերներ» բաժնի Աղյուսակ 7-ում:

Սոցիալական գերիշխանություն

Հասարակության մեջ սոցիալական հարաբերությունների, սոցիալական խմբերի հարաբերությունների, հետևաբար նաև արժեքային կողմնորոշումների չափման մեկ այլ գործիք է **սոցիալական գերիշխանության հակվածությունը չափող սանդղակը**, որը մշակել են Ջիմ Սիդանիուսը և Ֆելիսիա Պրատոն[10]: Դա սոցիալական և քաղաքական դիրքորոշումները չափող սանդղակ է, որն ուղղված է հասարակության խմբերի միջև խըտրականության դրսևորման նկատմամբ անհատական դիրքորոշումների չափմանը: Այս սանդղակը բացահայտում է, թե որքանով է անհատը նախընտրում աստիճանակարգային հարաբերությունները սոցիալական համակարգում, ինչպես նաև ավելի ցածր կարգավիճակ ունեցող խմբերի գերիշխումը: Այս՝ 1-7 միջակայքային սանդղակում բարձր գործակիցը ցույց

10 Սիդանիուս Ջ., Պրատո Ֆ., (2001), Սոցիալական գերիշխանություն. Սոցիալական հիերարխիայի և ճնշման միջխմբային տեսություն, Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն

է տալիս տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող խմբերի միջև գերիշխանության նախընտրությունը: Այլ կերպ ասած, բարձր ցուցանիշները ցույց են տալիս այլ խմբերի և մարդկանց նկատմամբ գերիշխելու ցանկությունը, խիստ և անխնա իշխանության ձգտումը: Սոցիալական գերիշխանության սանդղակով բարձր ցուցանիշներ հավաքածները առաջնորդվում են «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր» ասույթով:

Ըստ մեր հետազոտության տվյալների՝ հարցվածների շրջանում սոցիալական գերիշխանության հակվածությունը ընդհանուր առմամբ միջինից ցածր է: 1-7 միջակայքում դրա արժեքը 4.7 է (M=4.7, N=686): Արդյունքները վկայում են, որ հարցվածների շրջանում սոցիալական խմբերի միջև խտրականության և աստիճանակարգի նկատմամբ հակվածություն կա:

Այլ երկրներում միևնույն սանդղակով իրականացված տարբեր հետազոտություններ[11] փաստում են, որ ավտորիտարիզմին հակված հասարակություններում կամ խմբերում բարձր է նաև հակվածությունը սոցիալական գերիշխանությանը: Մեր հետազոտությունն այս երկու սանդղակների միջև որևէ նշանակալի կապ չի արձանագրում:

Սոցիալական գերիշխանության գործակցի փոփոխականության և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոփոխականության կապի ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական գերիշխանության հակվածության մեջ փոփոխություն նկատվում է բնակավայրի տեսակի, կրթության, ընտանեկան կարգավիճակի և ընտանիքի ամսական եկամտի փոփոխության դեպքում: Սոցիալ-ժողովրդագրական այլ բնութագրիչներ, ինչպես, օրինակ, սեռը և տարիքը, նշանակալի ազդեցություն չունեն սոցիալական գերիշխանության հակվածության վրա:

Ի հակադրություն ավտորիտարիզմի հակվածության և բնակավայրի տեսակի համադրության արդյունքում ստացված պատկերի, ըստ որի գյուղական բնակավայրերում ավտորիտարիզմին հակվածությունն ամենաբարձրն էր, իսկ Երևանում՝ ամենացածրը, սոցիալական գերիշխանության հակվածության չափման արդյունքները հակադարձ պատկեր են արձանագրում. թեև կապը սահմանային է, պետք է արձանագրել, որ երևանաբնակների շրջանում սոցիալական գերիշխանության նկատմամբ հավածությունն ավելի բարձր է, քան այլ քաղաքային և գյուղական բնակավայրերում:

Հարցվածների եկամտային ցուցանիշների և սոցիալական գերիշխանության հակվածության միջև կապը ևս նշանակալի է: Մինչև 120 հազար ՀՀ դրամ ամսական եկամուտ ունեցող հարցվածների շրջանում սոցիալական գերիշխանության հակվածությունն ավելի բարձր է, քան ավելի բարձր եկամուտ ունեցողներինը: Չամուսնացածները և բարձր կրթամակարդակ ունեցողներն ավելի քիչ են հակված սոցիալական գերիշխանության:

Սոցիալական գերիշխանության և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները համակարգված տեսքով տեղ են գտել «Աղյուսակներ և գծապատկերներ» բաժնի Աղյուսակ 8-ում:

Կրոնական արմատականություն

Արժեքային կողմնորոշումները չափող երրորդ սանդղակը, որին անդրադառնալու ենք ստորև, Ալթեմեյերի և Հանսբերգերի[12] մշակած **կրոնական արմատականությունը չափող սանդղակն** է: Այն կոչված է չափելու մարդկության և աստվածայինի մասին արմատական, տարրական, սուրբ ճշմարտության մասին մարդկանց համոզմունքները: Այս արմատական համոզմունքները հիմնված են դարերով եկած անփոփոխ պրակտիկաների վրա: Մյուս կողմից, կրոնական արմատականությունը հիմնված է այլ խմբերի (աթեիստներ, կանայք, ԼԳԲՏԻ և այլն) նկատմամբ նախապաշարումների և խտրականության վրա: Սա 1-9 միջակայքային սանդղակ է, որտեղ բարձր ցուցանիշն արձանագրում է կրոնական արմատականության հակվածության բարձր աստիճան:

11 Ուիթլի Ջ., Բեռնարդ Է., Աջակողմյան ավտորիտարիզմ, սոցիալական գերիշխանության հակվածություն և նախապաշարումներ, Անհատականության և սոցիալական հոգեբանության ամսագիր, Vol 77(1), Հուլիս 1999, 126-134 https://my.apa.org/apa/idm/login.seam?ERIGHTS_TARGET=http%3A%2F%2Fpsycnet%2Eapa%2Eorg%2F%3FloadState%3D1#

12 Ալթեմեյեր Բ. և Հանսբերգեր Բ. (2004), Վերանայված կրոնական արմատականության սանդղակը. կարճ և քաղցր տարբերակը, Կրոնի հոգեբանության միջազգային ամսագիր, 14, 47-54]

Հետազոտությամբ հարցման արդյունքում ստացված կրոնական արմատականության հակվածության միջին ցուցանիշը 5.6 է (M=5.6, N=547): Այն 1.1 միավորով բարձր է միջինից, ինչը ցույց է տալիս հարցվածների հակվածությունը դեպի կրոնական արմատականություն, սակայն ցուցանիշը բավականին հեռու է կրոնական արմատականության ծայրահեղ դրսևորումից: Այնուամենայնիվ, տվյալ ցուցանիշը թույլ է տալիս եզրակացնել, որ հարցվածների շրջանում գերիշխում են միակ աստվածային ճշմարիտի մասին համոզմունքները, ինչպես նաև այլ սոցիալական խմբերի նկատմամբ խնդրական դիրքորոշման առկայությունը:

Թեմայի առնչությամբ արված այլ հետազոտությունները[13] բացահայտել են դրական կապ կրոնական արմատականության, աջակողմյան ավտորիտարիզմի և սոցիալական գերիշխանության հակվածության միջև:

Սոցիալական գերիշխանության սանդղակը քննարկելիս, պարզեցինք, որ ավտորիտարիզմի և սոցիալական գերիշխանության հակվածության միջև նշանակալի կապ չկա: Սոցիալական գերիշխանության և կրոնական արմատականության ցուցանիշների կորելյացիան ցույց է տալիս, որ այս երկու ցուցանիշների միջև կապը ևս նշանակալի չէ: Սա նշանակում է, որ այս ցուցանիշներից մեկի փոփոխությունը որևէ կապ չունի, չի կարող պայմանավորել մյուսի փոփոխությունը (r=0.029, p>0.05): Մինչդեռ կրոնական արմատականության և աջակողմյան ավտորիտարիզմի ցուցանիշների կորելյացիան հստակ դրական նշանակալի կապ է ցույց տալիս (r=0.419, p<0.001): Այսինքն՝ աջակողմյան ավտորիտարիզմի հակված մարդիկ հակված են նաև կրոնական արմատականության: Այս երկու գաղափարների ձևակերպումների մեջ ևս կան համընկնող դրույթներ: Մասնավորապես՝ աջակողմյան ավտորիտարիզմի ձևակերպման մեջ նշվում է հասարակության մեջ հեղինակություն վայելող մարդկանց և հաստատությունների նկատմամբ լոյալության մասին՝ շեշտադրելով նաև կրոնական հեղինակությունները: Կրոնական արմատականության հիմքում ևս ընկած է կրոնական «ճշմարիտին» և այն հաղորդողներին հարգելու և հետևելու մասին: Բացի այդ, կրոնական շատ պրակտիկաներ հասարակության մեջ ամրագրված հասարակական նորմերի և կանոնների հիմքն են: Հասարակական նորմերի կարևորությունը շեշտադրվում է նաև աջակողմյան ավտորիտարիզմի սահմանման մեջ: Հետևաբար, պատահական չէ, որ այս երկու սանդղակների չափման գործակիցների միջև ամուր կապ կա:

Հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական պատկերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ կրոնական արմատականության հակվածության փոփոխականությունը նշանակալիորեն կապված է միայն բնակավայրի տիպի հետ, մասնավորապես՝ քաղաքաբնակ հարցվածները ավելի քիչ են հակված կրոնական արմատականության, քան գյուղաբնակ հարցվածները:

Սոցիալ-ժողովրդագրական այլ բնութագրիչների հետ նշանակալի կապ չի հայտնաբերվել:

Կրոնական արմատականության և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները համակարգված տեսքով տեղ են գտել «Աղյուսակներ և գծապատկերներ» բաժնի Աղյուսակ 9-ում:

Այսպիսով, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալ-ժողովրդագրական որոշ բնութագրիչներ էականորեն պայմանավորում են հարցվածների արժեքային կողմնորոշումների տարբերությունները: Դրանցից հատկանշական է առանձնացնել բնակավայրի տիպը, ինչը բոլոր երեք տիպի չափումների ժամանակ դրսևորեց արժեքային կողմնորոշումների հետ նշանակալի կապ:

Աշխարհաքաղաքական նախապատվությունը որպես արժեքային կողմնորոշման գործոն

Գաղտնիք չէ, որ հասարակության արժեքային կողմնորոշումները պայմանավորված են նաև արտաքին գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են երկրի քաղաքական/քաղաքակրթական և մշակութային կողմնորոշումը: Հետազոտության առջև դրված նպատակներից մեկն է՝ հասկանալ, թե որքանով են հարցված

13 Լեյթ Բ., Ֆինկել Դ. և Քիրքպատրիկ Լ. Ա. (2001) Կանխատեսելով կրոնական արմատականության և աջակողմյան ավտորիտարիզմի հետ կապված նախապաշարմունները. բազմակի ռեգրեսիայի մոտեցումը, Կրոնի գիտական ուսումնասիրությունների ամսագիր, 40: 1–10

բնակչության արժեքային, ինչպես նաև հետագայում ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները կրում Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման հարցում նրանց նախապատվության ազդեցությունը:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով ուսումնասիրվել է նաև ԱՄՆ-ի, Եվրոմիության, ՌԴ-ի և Եվրասիական տնտեսական միության հետ Հայաստանի հարաբերությունների նախապատվության կապը հարցվածների՝ աջակողմյան ավտորիտարիզմի, սոցիալական գերիշխանության և կրոնական արմատականության հակվածության հետ:

Վերլուծության արդյունքների համաձայն, նշանակալի կապ կա մի կողմից աջակողմյան ավտորիտարիզմի, կրոնական արմատականության և մյուս կողմից ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ Հայաստանի հարաբերություններին վերաբերող ցուցանիշների[14] միջև:

Սոցիալական գերիշխանության հակվածության և Հայաստանի արտաքին հարաբերությունների նախապատվությունների միջև նշանակալի կապ չի գրանցվել:

Կրոնական արմատականության և աջակողմյան ավտորիտարիզմի հակվածությունը դրական կապի մեջ է ՌԴ-ի հետ հարաբերությունների նախապատվության հետ: Որքան հարցվածը հակված է նման հարաբերությունների նախընտրության, այնքան նկատելի է կրոնական արմատականության և աջակողմյան ավտորիտարիզմի նկատմամբ հակվածության աճը: Եվ հակառակը, ԱՄՆ-ի հետ հարաբերությունների նախընտրության դեպքում հարցվածների շրջանում նկատվել է նաև կրոնական արմատականության և աջակողմյան ավտորիտարիզմի հակվածության ցածր ցուցանիշ:

Նման կապը պատահական չէ, եթե հաշվի առնենք նշված երկրներում տիրող քաղաքական իրավիճակը: Ֆրիդըմ հաուսի[15] դասակարգման համաձայն, Ռուսաստանը ավտորիտար երկիր է, մինչդեռ ԱՄՆ-ն, ըստ նույն դասակարգման, ժողովրդավարական երկիր է: Հայաստանը դասակարգվում է որպես կիսաավտորիտար անցումային երկիր, որը գտնվում է երկու հզոր՝ ռուսական և արևմտյան ազդեցությունների ներքո: Այս ազդեցությունը ոչ միայն քաղաքական բնույթ ունի, այլև քաղաքակրթական և մշակութային առանձնահատկություններով է աչքի ընկնում (Աղյուսակ 10):

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ հարցվածների շրջանում գերիշխում է աջակողմյան ավտորիտարիզմի և կրոնական արմատականության հակվածությունը, ինչը կրում է նաև նրանց աշխարհաքաղաքական դիրքորոշումների ազդեցությունը: Հարցվածների արժեքային կողմնորոշումները պայմանավորված են ավտորիտարիզմի, սոցիալական գերիշխանության և կրոնական արմատականության գործոններով, աշխարհաքաղաքական նախապատվություններով և նշանակալիորեն փոփոխվում են սոցիալ-ժողովրդագրական այնպիսի բնութագրիչների հիմքով, ինչպիսիք են սեռը, բնակավայրի տեսակը, տարիքը և սոցիալ-տնտեսական կարգավիճակը:

14 Քենդալի կորելյացիոն թեստի արդյունքների համաձայն՝ Եվրամիության և ԱՄՆ-ի, ինչպես նաև ՌԴ-ի և Եվրասիական տնտեսական միության հետ հարաբերությունների նախապատվությունների միջև ամուր կորելյացիա կա, ինչը նշանակում է, որ հարցվածները, ովքեր նախընտրում են սերտ հարաբերություններ ԱՄՆ-ի հետ, նման հարաբերություն ցանկանում են նաև Եվրամիության հետ, և հակառակը, ՌԴ-ի հետ սերտ հարաբերությունների նախընտրության դեպքում, նախընտրում են նաև Եվրասիական տնտեսական միության հետ հարաբերությունները: Այդ իսկ պատճառով քննարկվել են միայն ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ հարաբերությունները:

15 Ֆրիդըմ հաուսի կայքէջ՝ https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2015#.Vo-3PvI97IU

ԼԳԲՏԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՈՒ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Որևէ խմբի կամ երևույթի մասին գիտելիքների և կարծրատիպերի միջև կա հստակ փոխկապվածություն: Գիտելիքը տվյալ երևույթի կամ խմբի ճանաչումն է, ընկալումը կամ իրազեկվածությունն այդ խմբի կամ երևույթի մասին: Որքան քիչ է շփումը տվյալ երևույթի, խմբի ներկայացուցիչների հետ, իսկ իրազեկվածությունը՝ ցածր, այնքան ցածր է գիտելիքի մակարդակը: Գիտելիքի սակավությունը հանգեցնում է կարծրատիպերի ձևավորմանն ու ամրապնդմանը: Ավելին, գիտելիքի պակասը հանգեցնում է թյուր տեղեկատվության տարածմանը՝ նպաստելով կարծրատիպերի ձևավորմանը:

Գիտելիքի պակասը և կարծրատիպերի առատությունն ու կայունությունը կարող են հանգեցնել որոշակի խմբի ներկայացուցիչների համար սպառնալի վարքային մոդելների:

Հաշվետվության այս բաժնում կանդրադառնանք ԼԳԲՏԻ մասին հարցվածների գիտելիքներին ու կարծրատիպային պատկերացումներին, կուսումնասիրենք ԼԳԲՏԻ մասին առկա առասպելները:

ՍԿԳԻ ձևավորման հիմքերը

ՍԿԳԻ-ն սեռականության հիմնարար մաս է կազմում: Սեռականության թեման Հայաստանում թերևս վերջերս է դուրս եկել տաբուացված թեմաների շարքից և քննարկման առարկա դարձել: Այնուամենայնիվ, քննարկումները ոչ թե գիտելիքի համալրման կամ փոխանցման դաշտում են, այլ կարծրատիպերի ձևավորման և ամրապնդման: Հանրային քննարկումները[16], որոնք հիմնականում ծավալվում են սոցիալական ցանցերի տիրույթում, շարունակում են ամրապնդել ԼԳԲՏԻ մասին առկա կարծրատիպերը և սահմանափակում են գիտելիքի փոխանցման տիրույթը: ԼԳԲՏԻ մասին դրական կամ նույնիսկ չեզոք դիրքորոշումը ենթակա է խարանման, իսկ միտք արտահայտողը՝ պիտակավորման:

Այժմ անդրադառնանք ՍԿԳԻ ձևավորման մասին հարցվածների պատկերացումներին:

Ընդհանուր առմամբ, հարցվածները ՍԿԳԻ ձևավորումը պայմանավորում են արտաքին և ներքին գործոններով:

Արտաքին գործոններով պայմանավորողների թիվն անհամեմատ մեծ է: Ինչպես երևում է Գծապատկեր 4-ից, հարցվածների 1/3-ը (N=336) հակված է կարծելու, որ նույնասեռականությունը սխալ դաստիարակության արդյունք է, հետևաբար պայմանավորված է սոցիալականացման ընթացքում թույլ տված սխալներով: Քիչ թվով, սակայն կան հարցվածներ, որոնք համարում են, որ սեռական կողմնորոշումը «գեյ պրոպագանդայի» արդյունք է (5.1%, N=52) կամ սոցիալական և կրոնական բարոյականության մերժման արդյունք (3.9%, N=40):

Գծապատկեր 4. Խնդրում եմ նշեք, թե ներքևում թվարկված դրույթներից որի հետ եք առավել համաձայն (% ամբողջի մեջ)

16 Ատելության խոսքի առկայությունը ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ՀՀ առցանց տիրույթում. զեկույց, 2014, Երևան http://ngngo.net/wp-content/uploads/2014/11/Report-on-existence-of-hate-speech-towards-LGBT-community-in-the-Armenian-Media-by-New-Generation-Humanitarian-NGO-ARM.pdf

Հարցվածների մի զգալի մաս սեռական կողմնորոշումը պայմանավորում է ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, մասնավորապես՝ արական/իգական հորմոնների ավելցուկով (14.8%, N=151) և գենետիկական գործոններով (7.2 %, N=73):

Նշենք, որ առաջ բերված վարկածների մեծամասնությունը ժխտվել է գիտական հետազոտությունների արդյունքում [17]:

Ուշագրավ է այն փաստը, որ հարցվածների 20.6%-ը (N=210), այսինքն՝ յուրաքանչյուր հինգերորդը, հակված է այն մտքին, որ գիտնականները դեռևս հստակ պատասխան չունեն սեռական կողմնորոշման ձևավորման մասին: Սա ավելի գիտելիքահեն դիրքորոշում է:

Նույնասեռական անձանց մասին կարծրատիպերը

Նույնասեռական անձանց՝ գեյերի և լեսբիների մասին կարծրատիպերի բացահայտման նպատակով հարցվածներին առաջարկվել է նույնասեռական կանանց և տղամարդկանց մասին մի շարք դատողությունների մասին համաձայնություն կամ անհամաձայնություն հայտնել: Այս դատողությունները հիմնված են նույնասեռականների մասին առավել հայտնի և տարածված կարծրատիպերի վրա:

Նշենք, որ գեյերի և լեսբիների մասին դատողությունների գնահատման ժամանակ գեյերի մասին հարցերին ավելի շատ թվով հարցվածներ են հստակ պատասխան տվել, ինչը վկայում է «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի սակավությունը: Լեսբիների դեպքում պատկերն այլ է: Մեծ տոկոսային հարաբերակցությամբ, հարցվածները դժվարացել են գնահատել լեսբիների մասին դատողությունները: Կախված դատողության բնույթից՝ հարցվածների 10-40%-ը այս կամ այն հարցին դժվարացել է պատասխանել:

Այնուամենայնիվ, տրված պատասխաններից կարելի է պատկերացում կազմել, թե նույնասեռական անձանց մասին ինչ կարծրատիպեր են առավել տարածված հասարակության մեջ: Այսպես, **գեյերը** բնութագրվում են որպես կանացի (58%, N=591), սեփական արտաքինին և նորաձևությանը մեծ ուշադրություն հատկացնող (66%, N=670), զգացմունքային, արտիստիկ և ստեղծագործ (42%, N=427) անձինք: Նկատենք, որ չնայած այն փաստին, որ հարցվածները բազմիցս նշել են գեյերի մեծամասնության կանացի լինելը, այնուամենայնիվ, նրանց կեսից պակասն են համաձայնել այն մտքի հետ, որ կանացի շարժումներ ունեցող բոլոր տղամարդիկ գեյ են (25%, N=255): Այս հակասականությունը կարելի է բացատրել երկրորդ դատողության մեջ «բոլոր» բառի օգտագործմամբ, որն ավելի պարտավորեցնող է, հավանաբար, հարցվածները խուսափել են նման կատեգորիկ պնդումներից:

Տարածված է նաև այն առասպելը, որ գեյերը ՁԻԱՀ-ի հիմնական տարածողներն են: Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածության մասին վիճակագրական տվյալները, սակայն, հակասում են այս առասպելին: Ըստ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների[18], Հայաստանում ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղին հետերոսեքսուալ ուղին է (65%):

Չնայած, որ այս վիճակագրությունը տարեցտարի հաստատվում է և լայնորեն լուսաբանվում ԶԼՄ-ների կողմից, այնուամենայնիվ, գեյերի՝ որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնական տարածողների մասին առասպելը դեռևս արդիական է և լայնորեն տարածված: Հարցվածների 56%-ը (N=571) համամիտ է այս դատողության հետ:

Մեկ այլ տարածված առասպել է գեյերի մանկապիղծ լինելը: Այս դատողության հետ համաձայնել են հարցվածների 60%-ը (N=521): Այս թեմայով արված հետազոտությունները[19] փաստում են, որ որևէ կապ հայտնաբերված չէ նույնասեռականության և մանկապղծության միջև: Սա լայնորեն տարածված առասպել է, որը շարունակում է նույնասեռական անձանց նկատմամբ դիրքորոշում ձևավորել:

Հարկ է նշել, որ գեյերի՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնական տարածողներ և մանկապիղծ լինելու կարծրատիպերը

17 Պետեր Սփրիգ, Նույնասեռականության մասին առասպելների առաջատար տասնյակը, Ընտանիքի հետազոտության խորհուրդ, 2010 http://downloads.frc.org/EF/EF10F01.pdf

18 ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կայքէջ՝ http://www.armaids.am/main/free_code.php?lng=2&parent=3

19 «Սեռական կողմնորոշում. գիտություն, կրթություն և քաղաքականություն» (Sexual Orientation: Science, Education and Policy) http://psc.dss.ucdavis.edu/rainbow/html/facts_molestation.html

Հայաստանի մշակութային առանձնահատկություններով չեն սոսկ պայմանավորված: Այս առասպելները շրջանառվում են այլ հասարակություններում ևս:

Լեսբիների մասին կարծրատիպերը առավել քիչ են արտահայտված: Ամենից տարածված կարծրատիպը, որը նաև ամենից շատն է ստացել հարցվածների համաձայնությունը, լեսբիների՝ տղամարդկանց ատելու մասին կարծրատիպն է (48%, N=483): Հատկանշական է, որ սա միակ դատողությունն է, որի հետ համաձայնել են հարցվածների գրեթե կեսը: Իսկ նրանց 29%-ը (N=297) դժվարացել է որևէ կարծիք արտահայտել այս դատողության շուրջ:

Հարցվածների միայն 19%-ն է (N=196) համաձայնել այն մտքի հետ, թե լեսբիները ուշադրություն չեն դարձնում իրենց արտաքինին: Ավելին, միայն 3%-ն է(N=29) կարծում, որ բոլոր այն կանայք, որոնք ուշադրություն չեն դարձնում իրենց արտաքինին, լեսբի են: Եթե առաջին դատողության դեպքում հարցվածների 31%-ը (N=314) դժվարացել է պատասխանել՝ արդյոք լեսբիները ուշադրություն չեն դարձնում իրենց արտաքինին, ապա երկրորդ դատողության անդրադարձը միանշանակ է՝ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (85%, N=862) համաձայն չէ այն մտքի հետ, թե բոլոր այն կանայք, որոնք ուշադրություն չեն դարձնում իրենց արտաքինին, լեսբի են: Կրկին կարելի է ենթադրել, որ «բոլոր» բառի օգտագործումը երկրորդ դատողության մեջ զգուշավորության տեղիք է տալիս, այդ իսկ պատճառով պատասխանների բաշխումն այլ է: Նման պատկերը բացատրելու մեկ այլ փորձ կարող է լինել կնոջ արտաքին տեսքի մասին պատկերացումների փոփոխությունը հասարակության մեջ, որը հանգեցնում է այն մտքին, որ կնոջ արտաքին տեսքը իր սեռական կողմնորոշման ինդիկատոր չէ: Այս նույն եզրահանգմանը չենք կարող գալ տղամարդկանց դեպքում, քանի որ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նույնասեռական տղամարդու համար արտաքին տեսքը սեռական կողմնորոշման ցուցիչ է համարվում:

Հարցվածների 26%-ը (N=264) լեսբիներին բնութագրում է որպես ծայրահեղ ֆեմինիստներ, մինչդեռ 40%-ը (N=406) զերծ է մնացել այս դատողության մասին որևէ կարծիք հայտնելուց: Հարցվածների 1/3-ի մոտ կա այն համոզմունքը, որ նույնասեռական կանայք ավելի ագրեսիվ են (33%, N=334), միաժամանակ նաև ավելի ուժեղ և անկախ են (31%, N=313), քան հետերոսեքսուալ կանայք: Գծապատկեր 5-ում ներկայացված են լեսբիների և գեյերի մասին տարածված կարծրատիպերը:

Գծապատկեր 5. Գեյերի և լեսբիների մասին տարածված կարծրատիպերը



Այնուամենայնիվ, հարկ ենք համարում կրկին նշել, որ նույնասեռական կանանց մասին տեղեկացվածությունը հարցվածների շրջանում ընդհանուր առմամբ ցածր է, ինչի մասին փաստում է «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակն ընտրողների բավականին մեծ բաժինը: Այդ իսկ պատճառով լեսբիների մասին դատողությունների շուրջ գնահատականները համեմատաբար ավելի մեղմ են ստացվել, քան գեյերի մասին դատողությունների ցուցանիշները:

Հետազոտության արդյունքները նաև փաստում են, որ հարցվածների շրջանում գերիշխում են նույնասեռական անձանց մասին այն պատկերացումները, որ նրանք հակադրվում են հասարակության մեջ ընդունված գենդերային դերերին՝ նույնականացվելով հակառակ սեռի գենդերային պատկերի հետ:

Նույնասեռական անձանց մասին կարծրատիպերը չեն սահմանափակվում նրանց արտաքին տեսքի և բնավորության բնորոշմամբ: Նույնասեռականություն երևույթի, նունասեռական անձանց՝ հասարակության մեջ գոյության և փոխհարաբերության շուրջ ևս առասպել-

ներ են հյուսված, որոնք արտահայտված են նաև սույն հետազոտության արդյունքներում (Գծապատկեր 6):

Մասնավորապես՝ հարցվածների գերակշիռ մասը (84%, N=835) հավատացած է, որ նույնասեռականությունը տարածվելու միտում ունի, և, եթե հասարակությունը զգոն չլինի և չսաստի այն հետերոսեքսուալության «պրոպագանդայով», հնարավոր է, որ հասարակության մեջ նույնասեռական անձանց թիվը աճի: Նույնասեռականությունը դիտարկվում է նորմարժեքային համատեքստում և դրա դեմն առնելու միակ ելքը համարվում է «ճշմարիտ» արժեքների խրախուսումը: Ավելին, նույնասեռականությունը օտար արժեք դիտարկելու և այն Հայաստան ներմուծված լինելու առասպելը ևս արդիական է: Հարցվածների 66%-ը (N=671) համաձայն է այն մտքի հետ, որ «արևմտյան արժեքների» ազդեցության պատճառով են Հայաստանում փոխում սեռական կողմնորոշումը: Արևմտյան երկրների՝ որպես այլասերվածության և ազատ բարքերի օրրանի մասին պատկերացումներն արտացոլվում են նաև նույնասեռականների մասին ձևավորված առասպելներում: Այս առասպելը հասարակության մեջ ամենատարածվածներից մեկն է:

Նույնասեռականության՝ սխալ դաստիարակության արդյունք լինելու վարկածը արդեն քննարկել ենք վերևում: Հարցվածների 1/3-ը հավատացած է, որ այն սխալ դաստիարակության արդյունք է: Նույն կերպ հարցվածների ուղիղ կեսը (N=508) կարծում է, որ նույնասեռական ընտանիքում մեծացող երեխան ևս նույնասեռական կլինի: Կրկին առաջ է քաշվում նույնասեռական անձանց կողմից անմիջականորեն տրվող սխալ դաստիարակության վարկածը:

Հարցվածների շրջանում տարածված է նաև այն համոզմունքը, որ նույնասեռականությունը մերժված է բոլոր ժամանակներում և ամենուր: Հարցվածների 84%-ը (N=846) ժխտում է նույնասեռականության նկատմամբ երբևէ կամ որևէ այլ միջավայրում հանդուրժողական վերաբերմունքի առկայությունը:

Այնուամենայնիվ, նույնասեռականության՝ բնության մեջ հանդիպելու մասին դատողությունը հարցվածների շրջանում տարաձայնություններ է առաջացրել: Նախ նշենք, որ հարցվածների 38%-ը (N=390) դժվարացել է որևէ դիրքորոշում հայտնել այս դատողության վերաբերյալ, իսկ 13%-ը (N=132) չեզոք դիրքորոշում է հայտնել, որը, հարցազրուցավարների պնդմամբ, կարելի է հավասարազոր դիտարկել «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակին: Հետևաբար, հարցվածների կեսն այս հարցի շուրջ խուսափել է որևէ դիրքորոշում արտահայտել: Իսկ մնացածները երկու խմբի են բաժանվել. նրանք, ովքեր ժխտում են նույնասեռականության գոյությունը կենդանական աշխարհում (23%, N=230), և նրանք, ովքեր կողմ են արտահայտվել այդ դատողությանը (25%, N=255):

Եվրամիության, որպես «արևմտյան արժեքների» խրախուսման և տարածման գործակալի մասին առասպելը ևս արդիական է: Քիչ չեն դեպքերը, երբ նույնասեռականությունը պիտակավորվում է

Գծապատկեր 6. Նույնասեռականության մասին առասպելները



որպես եվրոպական արժեք՝ արդյունքում ժխտողական դիրքորոշում ձևավորելով ոչ միայն նույնասեռականության, այլև Եվրոմիության նկատմամբ: «Եվրոմիությանը միանալու համար Հայաստանը պետք է օրինականացնի նույնասեռ ամուսնությունները» դատողության հետ չեն համաձայնել հարցվածների 94%-ը (N=951): Հավանաբար, հարցվածների խիստ մերժողականությունն այս դատողության երկակի ընկալման արդյունք է: Այստեղ նրբերանգ կա. հարցվածների մեծամասնությունն այս դատողությունը, թերևս, ընկալել է որպես հարց՝ արդյոք իրենք համաձայն են Հայաստանի՝ Եվրոմիության անդամակցությանը նույասեռ ամուսնությունների օրինականացման պայմանով: Նկատենք, որ նույնասեռ ամուսնությունների մասին դեռևս շատ երկրներում, նույնիսկ նույնասեռական անձանց նկատմամբ բարձր հանդուրժողականությամբ աչքի ընկնող երկրներում, հասարակական ընկալումները շատ հակասական են, երբեմն նույնիսկ խիստ ժխտողական: Սա ևս կապված է հետերոսեքսուալ ընտանիքի մոդելի՝ որպես արժեք կորցնելու վախի հետ:

Ընդհանուր առմամբ, հարցվածների շրջանում գերակշռում են նույնասեռականության մասին կարծրատիպային մոտեցումների և առասպելների վրա հիմնված դիրքորոշումները: Սա պայմանավորված է սեռականության մասին իրազեկվածության ցածր մակարդակով, ինչպես նաև խմբի ներկայացուցիչների հետ շփման բացակայությամբ:

ԼԳԲՏԻ անձանց հետ հարցվածների շփման առանձնահատկություններին կանդրադառնանք հաջորդ բաժնում:

ՇՓՈՒՄԸ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Նախորդ բաժնում քննարկեցինք հարցվածների ունեցած գիտելիքը ԼԳԲՏԻ մասին, նրանց մասին կարծրատիպերն ու առասպելները: Ակնհայտ է, որ ԼԳԲՏԻ շուրջ լայնորեն տարածված կարծրատիպերի ու առասպելների ձևավորմանը նպաստող գործոններից ամենատարածվածը սեռականության մասին գիտելիքի տիրապետման և տեղեկացվածության ցածր մակարդակն է: Հարցման արդյունքները մատնանշում են այս բացը:

ԼԳԲՏԻ մասին կարծրատիպերի և առասպելների առաջացման պատճառներից մեկը խմբի ներկայացուցիչների հետ շփման պակասն է:

Հաշվի առնելով, որ ԼԳԲՏԻ հանրույթը Հայաստանում սակավ տեսանելի է, իսկ ԼԳԲՏԻ անձինք խուսափում են իրենց ՍԿԳԻ մասին հայտնել նույնիսկ ամենամոտ անձանց (ընտանիքի անդամներին, ընկերներին և բարեկամներին)[20], ԼԳԲՏԻ անձանց հետ շփում ունեցածների թիվը ևս սակավ է: Ի հավելումն, նրանք, ովքեր ճանաչում են ԼԳԲՏԻ անձանց, խուսափելով պիտակավորումից, չեն ցանկանում բարձրաձայնել նրանց հետ երևէ ունեցած շփման մասին:

Ըստ այդմ, պատահական չէ, որ հարցվածների շրջանում ևս շատ քիչ են ԼԳԲՏԻ անձանց հետ շփման մասին բարձրաձայնած անձինք: Հարցվածներից յուրաքանչյուր 12-ից միայն մեկն է ԼԳԲՏԻ խմբի ներկայացուցչի ճանաչում: Հազարից ավելի (1017) հարցվածներից միայն 86-ն է (9%) հայտնել, որ ճանաչում է ԼԳԲՏԻ անձի/անձանց: Ընդ որում, նրանք հիմնականում ճանաչում են 1 (41%, N=36) կամ 2 (26%, N=23) այդպիսի անձի:

Գծապատկեր 7. Ճանաչո՞ւմ եք արդյոք ԼԳԲՏԻ խմբի ներկայացուցչի, եթե այո, նշեք նրա սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը



20 Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ (2013), ՓԻՆՔ Արմենիա http://www.pinkarmenia.org/publications/

ԼԳԲՏԻ անձանց մասին տեղյակ հարցվածները նշել են, որ հիմնականում ճանաչում են գեյերի (73%, N=120), շատ ավելի քիչ՝ լեսբիների (22%, N=36), իսկ բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց ճանաչում են համապատասխանաբար 6 և 2 հարցված:

Կարելի է ենթադրել, որ, չնայած հարցաթերթի նախաբանում տերմինների պարզաբանմանը, հարցվածները ընդհանրացրել են իրենց իմացած ԼԳԲՏԻ անձանց երկու լայն խմբերի մեջ՝ գեյ և լեսբի, քանի որ այս խմբերը հասարակության մեջ քիչ թե շատ ճանաչված խմբերն են ու ցանկացած դեպք ընդհանրացվում է այս կամ այն խմբի հետ՝ հիմնվելով այդ խմբերի ընդհանրական կարծրատիպային բնորոշիչների վրա:

Այս ենթադրությանը աջակցող փաստարկ է այն, որ ԼԳԲՏԻ անձանց հետ առնչություն ունեցող/ունեցած հարցվածների գերակշռող մեծամասնությունը՝ 3/4-ը (N=122) ԼԳԲՏԻ անձին/անձանց ներկայացրել է որպես ծանոթ: Դեպքերի մնացած 18-ը ներկայացվել է որպես ընկեր, 7-ը՝ կուրսեցի, 5-ը՝ հիվանդ/հաճախորդ, 4-ը՝ հարևան, 2-ը՝ ուսանող/աշակերտ, և միայն 1-ն է նշել, որ իր ազգականն է ԼԳԲՏԻ խմբի ներկայացուցիչ:

Հարցազրուցավարների հետ ֆոկուս խմբի ժամանակ ևս բարձրաձայնվեց այն մտավախությունը, որ հարցվածները «ծանոթ» կատեգորիայի տակ ներառել են նաև այն դեպքերը, երբ տվյալ անձի հետ անձնական որևէ շփում չեն ունեցել, այլ ԼԳԲՏԻ անձանց մասին տեղեկացել են հեռուստատեսությամբ կամ այլ տեղեկատվական աղբյուրներից: Հարցվածները ԼԳԲՏԻ անձանց ՍԿԳԻ մասին տեղեկացել են տարբեր ճանապարհներով: Նրանցից միայն 31%-ն է (N=51) անձամբ ԼԳԲՏԻ անձից տեղեկացել վերջինիս սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին: Մյուս դեպքերում, հարցվածներն այդ տեղեկությունը ստացել են երկրորդային ճանապարհով, օրինակ՝ ուրիշից են իմացել (41%, N=67), 17%-ը (N=27) միայն կասկածներ ունի, 10%-ը (N=16) հայտնել է, որ ինքն է պարզել այդ տեղեկությունը: Եվս 2 հոգի նշել են, որ համացանցից են իմացել իրենց ճանաչած ԼԳԲՏԻ անձանց ՍԿԳԻ մասին: Հարկ է նշել, որ երկրորդային աղբյուրները, մասնավորապես՝ այլ անձանց հայտնած կամ համացանցից ստացված տեղեկությունը, ինչպես նաև ենթադրությունները, կարող են լինել նաև թյուր կարծիքներ:

Պատահական չէ, որ ԼԳԲՏԻ ընկեր ունեցողների գերակշռող մեծամասնությունը՝ 78%-ը (N=49), իմացել է անձամբ իրենցից, իսկ ծանոթ ԼԳԲՏԻ անձ ունեցողների միայն 24.7%-ն է (N=79) անձամբ նրանցից իմացել նրանց ՍԿԳԻ մասին, 47%-ը (N=151) ուրիշներից է իմացել , 16%-ը (N=52)՝ կասկածներ ունի, իսկ 11%-ն (N=34) ինքն է պարզել: Տրամաբանական է նաև, որ հիվանդների/հաճախորդների մեծ մասը ևս ինքն է հայտնել սեփական ՍԿԳԻ մասին: Հետաքրքիր արդյունք է նաև այն, որ համակուրսեցիների՝ ԼԳԲՏԻ լինելու մասին հարցվածների մեծ մասը միայն կասկածներ ունի (77%, N=13) և որևէ աղբյուրից տեղեկության չի տիրապետում:

Գծապատկեր 8. ԼԳԲՏԻ անձանց հետ շփման առանձնահատկությունները



Անսպասելի էր դիտարկել, որ ԼԳԲՏԻ ընկերներ ունեցող հարցվածների ճնշող մեծամասնությունն ամիսը մի քանի անգամ ու ավելի հազվադեպ է շփվում նրանց հետ: Նրանցից միայն երկուսն են նշել, որ հանդիպում են ավելի հաճախ՝ շաբաթվա մեջ մի քանի անգամ կամ գրեթե ամեն օր: ԼԳԲՏԻ ծանոթների հետ հարցվածների հազվադեպ շփման փաստը տրամաբանական է:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ հարցվածները, իմանալով անձի ՍԿԳԻ մասին, դադարեցրել են նրանց հետ շփումը: Նման դեպքեր գրանցվել են հիմնականում ծանոթների շրջանում՝ 25 դեպք: 2 դեպք արձանագրվել է համակուրսեցիների և մեկը ազգականի հետ շփման պարագայում: Մասնագիտական աշխատանքի (ուսուցիչ, բժիշկ) ժամանակ անձի ՍԿԳԻ-ով պայմանավորված շփման

ընդհատում հարցվածների կողմից չի բարձրաձայնվել: ԼԳԲՏԻ անձանց հետ շփում ունեն հիմնականում իգական սեռի երիտասարդ ներկայացուցիչները: Նրանք հիմնականում ճանաչում են գեյերի: ԼԳԲՏԻ անձանց հետ ընկերական շփում ունենալու մասին ևս հիմնականում երիտասարդ կանայք են նշել: Նրանք իրենց ընկերական շրջապատում ունեն գեյ ընկերներ: Այն դեպքերում, երբ ԼԳԲՏԻ անձի հետ կապը սերտ է, նրա ՍԿԳԻ մասին հարցվածը իմացել է անձամբ այդ մարդուց: Հետևաբար, այս տեղեկությունը կարելի է նաև համարել առավել հավաստի:

Այն դեպքերում, երբ հարցվողը նշել է, որ ԼԳԲՏԻ անձը ուղղակի ծանոթ է, նրա ՍԿԳԻ մասին հարցվածը իմացել է ոչ անմիջական ճանապարհով՝ ուրիշից է իմացել կամ, ընդհանրապես, ենթադրում է: Հետևաբար, այս տեղեկությունը ոչ հավաստի է, կարող է հիմնված լինել ենթադրությունների կամ կարծրատիպերի վրա: Հետաքրքրական է, որ ենթադրությունների հիման վրա կամ անուղղակի ճանապարհով ձեռք բերված տեղեկությունը հիմնականում ԼԳԲՏԻ խմբի արական սեռի ներկայացուցիչների վերաբերյալ է, մասնավորապես՝ գեյերի և բիսեքսուալ տղամարդկանց մասին: Կարելի է ենթադրել, որ այստեղ գործում են արտաքին տեսքի հիման վրա արված ենթադրությունները: Ինչպես արդեն նշվել է կարծրատիպերին վերաբերող բաժնում, արական սեռի ներկայացուցիչների արտաքին տեսքի հիման վրա կառուցված կարծրատիպերն ավելի գործուն են: Հետևաբար, հնարավոր է, որ կարծրատիպային դիրքորոշումները զգալի դեր խաղան անձի սեռական կողմնորոշումը «գուշակելու» հարցում:

Ակնհայտ է, որ ԼԳԲՏԻ անձանց հետ շփումը անմիջականորեն ազդում է նրանց նկատմամբ ունեցած դիրքորոշումների ձևավորման կամ վերաձևավորման վրա: Շփման ինտենսիվությունը նվազեցնում է կարծրատիպերի և նախապաշարումների ազդեցության տիրույթը՝ իր տեղը զիջելով փորձի հիման վրա կառուցած գիտելիքին: Տրամաբանական է նաև այն հանգամանքը, որ հարցվածների դիրքորոշումները գերազանցապես կարծրատիպային բնույթ ունեն: Չէ՞ որ նրանց միայն 9%-ն է շփում ունեցել ԼԳԲՏԻ անձանց հետ, ավելին՝ այդ խմբերից մեկի կամ երկուսի ներկայացուցիչների հետ:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հաշվետվության նախորդ բաժիններում անդրադարձանք դիրքորոշման ձևավորումը պայմանավորող երկու կարևոր գործոնների՝ անձնական շփմանը և երևույթի մասին տեղեկացվածությանը: Նշեցինք, որ երևույթի շուրջ տեղեկատվության կամ գիտելիքի առկայությունը, ինչպես և անձնական շփումը, սահմանափակում են կարծրատիպային պատկերացումների ներգործությունը, կանխարգելում են նախապաշարված վերաբերմունքի ձևավորումը:

Այս բաժնում անդրադառնալու ենք ԼԳԲՏԻ նկատմամբ հարցվածների դիրքորոշմանը՝ տարբերակելով և առանձին ուշադրության արժանացնելով նույնասեռական և բիսեքսուալ կանանց և տղամարդկանց մասին դիրքորոշումներին, ինչպես նաև տրանսգենդեր անձանց շուրջ ձևավորված առասպելներին ու նրանց նկատմամբ հարցվածների վերաբերմունքին:

Ինչպես արդեն պարզեցինք, հարցվողների շփումը ԼԳԲՏԻ անձանց հետ խիստ սահմանափակ է: Ավելին, նրանց մոտ գերիշխում են ԼԳԲՏԻ մասին կարծրատիպային պատկերացումները: Հետևաբար, ակնկալելի է, որ ԼԳԲՏԻ նկատմամբ հարցվածների դիրքորոշումները, հիմքում ունենալով ոչ գիտելիքահեն, այլ կարծրատիպային պատկերացումներ, բացասական երանգ են կրելու:

Այժմ անդրադառնանք նույնասեռական, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց նկատմամբ հարցված բնակչության դիրքորոշումներին և վերաբերմունքին:

Նույնասեռական անձանց նկատմամբ դիրքորոշումները

Նույնասեռական անձինք՝ գեյերն ու լեսբիները, ԼԳԲՏԻ անձանցից հանրության մեջ առավել ճանաչված խմբերն են, քանի որ նրանց մասին հանրային քննարկումներն ավելի լայնածավալ են: Ավելին, ԼԳԲՏԻ անձանց հաճախ դասակարգում են երկու բևեռային խմբերի մեջ՝ կին և տղամարդ նույնասեռականներ: Սա իրազեկվածության ցածր մակարդակի արդյունք է, քա-

նի որ բիսեքսուալ և տրանսգենդեր հասկացությունները ավելի քիչ են բարձրաձայնվում հանրային քննարկումների ժամանակ ու անծանոթ են մարդկանց մեծ մասին: Հարցազրուցավարները ևս փաստում էին, որ հարցվածներն ավելի հեշտ էին ընկալում լեսբիներին և գեյերին, սակայն դժվարանում էին ընկալել բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց էությունը և տարբերությունը նույնասեռականներից: Այնուամենայնիվ, հետազոտության առանձնահատկություններից մեկն էլ կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս բացահայտելու ԼԳԲՏԻ տարբերխմբերի նկատմամբ տրամադրվածությունը և առանձնացնել տարբերությունները, եթե դրանք առկա են: Այս բաժնում կանդրադառնանք նույնասեռական անձանց նկատմամբ հանրային տրամադրվածությանը՝ ուշադրությունը բևեռելով լեսբի և գեյ անձանց նկատմամբ դիրքորոշումների միջև տարբերություններին: Նույնասեռական անձանց նկատմամբ հանրային դիրքորոշման ուսումնասիրության համար կիրառվել է Հերեկի (1980)[21] առաջարկած՝ գեյերի և լեսբիների նկատմամբ վերաբերմունքի չափման սանդղակը, որը լայնորեն օգտագործվում է տարբեր երկրներում նման հետազոտությունների համար: Այս հետազոտության շրջանակներում օգտագործվել է սանդղակի կարճ տարբերակը, որը իրենից ներկայացնում է 1-5 միջակայքային սանդղակի միջոցով գնահատվող դատողությունների շարք, որտեղ 5 բևեռը նույնասեռական անձանց նկատմամբ բացասական տրամադրվածության բարձրագույն աստիճանն է:

Հայրիշխանական հասարակություններում, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանը, գեյերի նկատմամբ ավելի բացասական վերաբերմունքը բացատրվում է գենդերային խուճապի տեսության շրջանակներում[22]: Ըստ այս տեսության, հայրիշխանական հասարակություններում, որտեղ տղամարդու դերը գերկարևոր է, որևէ շեղում՝ սահմանված գենդերային դերերից, սպառնալիք է դիտարկվում սահմանված նորմերին, հետևաբար նաև հասարակությանը:

Այժմ անդրադառնանք մեր հետազոտությանը: Ինչպիսի՞ տրամադրվածություն է առկա գեյերի և լեսբիների նկատմամբ, ի՞նչ տարբերություններ կարելի է առանձնացնել՝ ըստ հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների:

Ըստ Հերեկի սանդղակի, նույնասեռական անձանց նկատմամբ տրամադրվածության միջին ցուցանիշը հարցվածների շրջանում 3.6 է (N=608): Այս ցուցանիշը մոտ է բացասական տրամադրվածության բևեռին, ինչը նշանակում է, որ նույնասեռական անձանց նկատմամբ ընդհանուր տրամադրվածությունը բացասական է:

Սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներից բնակավայրի տեսակը, սեռը, կրթությունը, զբաղվածությունը, եկամտային չափը նշանակալի կապի մեջ են նույնասեռական անձանց նկատմամբ դիրքորոշումների հետ: Մասնավորապես՝ կրթական բարձր մակարդակ ունեցող հարցվողները ավելի մեղմ են տրամադրված նույնասեռական անձանց նկատմամբ, քան ցածր կրթական մակարդակ ունեցող հարցվածները: Նույն կերպ զբաղվածություն ունեցող հարցվածների տրամադրվածությունը նույնասեռական անձանց նկատմամբ ավելի հանդուրժող է, քան չաշխատող հարցվածների: Իրենց անհանդուրժողականությամբ աչքի են ընկնում նաև երևանաբնակ տղամարդ հարցվածները:

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, կարծրատիպերի և խտրականության նվազմանը առավելագույնս նպաստում է շփումը տվյալ խմբի ներկայացուցիչների հետ: Այս մասին են վկայում նաև մեր հետազոտության արդյունքները: Այն հարցվածները, որոնք անձնապես ճանաչում են ԼԳԲՏԻ անձանց, անհամեմատ ավելի հանդուրժող են, քան երևէ ԼԳԲՏԻ անձանց հետ շփում չունեցածները: Որքան մոտ է ԼԳԲՏԻ անձի հետ կապը (ընկեր, հարևան, ազգական), այնքան հարցվածների պատասխանները ձգտում են հանդուրժողականության բևեռին, և, հակառակը, որքան ԼԳԲՏԻ անձի հետ կապը թույլ է, օրինակ ծանոթ է, որի ՍԿԳԻ մասին ուրիշներից է լսել կամ ուղղակի ենթադրություններ է անում, այնքան բացասական է տրամադրվածությունը:

Գեյերի (M=3.66, N=608) և լեսբիների (M=3.62, N=608) նկատմամբ դիրքորոշումների չափումը ցույց է տալիս, որ տարբերությունն աննշան է: Ավելին, այս ցուցանիշների միջև խիստ նշանակալի կապ կա (r=.850, p<0.001). գեյերի նկատմամբ տրամադրվածության փոփոխությունը

21 Գեյերի և լեսբիների նկատմամբ վերաբերմունքի չափման սանդղակ http://psc.dss.ucdavis.edu/rainbow/html/atlg.html

22 Ադամ Բ.Դ., Տեսություններ հոմոֆոբիայի մասին, Սեռականություններ 1 (4), 387-404, 1998 http://sex.sagepub.com/content/1/4/387.abstract

ենթադրում է նույն բնույթի փոփոխություն նաև լեսբիների նկատմամբ տրամադրվածության մեջ և հակառակը:

Բիսեքսուալ անձանց նկատմամբ դիրքորոշումները

Եթե գեյ և լեսբի հանրույթների շուրջ քննարկումներն ավելի լայնածավալ են, ապա բիսեքսուալ անձանց անդրադարձ ավելի քիչ է արվում: Սակայն այս հանգամանքը ամենևին չի նշանակում, որ բիսեքսուալ անձինք արժանանում են հանդուրժողական վերաբերմունքի կամ բիսեքսուալ անձանց մասին չկան կարծրատիպեր և առասպելներ: Երկբևեռ մոտեցման տեսանկյունից նույնասեռական հարաբերություններն ավելի ընկալելի են: Բիսեքսուալ հարաբերությունները հաճախ ենթարկվում են աղճատման և յուրօրինակ դուրս մղվում սոցիալ-բարոյական նորմատիվ դաշտից: Բիսեքսուալ անձանց մասին ամենատարածված առասպելներից մեկը նրանց՝ միաժամանակ երկու սեռի մի քանի անհատների հետ էմոցիոնալ և սեռական կապի պահպանումն է: Բիսեքսուալ անձինք խարանման են ենթարկվում ոչ միայն հասարակության, այլև ԼԳԲՏԻ հանրույթի ներսում՝ պիտակվելով որպես «չկողմնորոշվածներ»: Այս առասպելները հաճախ նաև բիսեքսուալության մասին ընկալման ձևավորման մեխն են:

Սույն հետազոտության շրջանակներում բիսեքսուալ անձանց նկատմամբ հարցվածների դիրքորոշումները չափվել են առանձին սանդղակով: Մոհրի և Ռոխլենի (1999)[23] առաջարկած՝ կին և տղամարդ բիսեքսուալների նկատմամբ դիրքորոշումների չափման սանդղակը հնարավորություն է տալիս չափել բիսեքսուալ անձանց նկատմամբ ոչ միայն հետերոսեքսուալ, այլ նաև նույնասեռական հանրույթի դիրքորոշումը: Այն աշխատող գործիք է նաև բիսեքսուալ կանանց և տղամարդկանց նկատմամբ հանրային տրամադրվածության առանձնահատկությունները բացահայտելու համար: Գործիքը 1-5 միջակայքային աճող սանդղակ է, որտեղ 5-ը ամենաբարձր հակա-բիսեքսուալ տրամադրվածության գործակիցն է:

Ըստ հետազոտության արդյունքների, բիսեքսուալ անձանց նկատմամբ տրամադրվածության ցուցանիշը 3.5 է (M=3.5, N=321), որը մոտ է նույնասեռական անձանց նկատմամբ տրամադրվածության ցուցանիշին (M=3.6, N=608): Հարցվածներից միայն 6-ն են ճանաչում կամ երբևէ շփում են ունեցել/ունեն բիսեքսուալ մարդկանց հետ: Բիսեքսուալ անձանց նկատմամբ առավել հանդուրժող են երիտասարդները և չամուսնացած հարցվածները:

Բիսեքսուալ անձանց նկատմամբ դիրքորոշումների և հարցվածների սոցիալ-ժողովրդագրական որոշ բնութագրիչների միջև միայն սահմանային կապեր են գրանցվել, որոնք թույլ են: Այդ բնութագրիչները տարիքն ու ընտանեկան կարգավիճակն են: Տարիքի աճին զուգընթաց սաստկանում է բիսեքսուալ անձանց նկատմամբ բացասական դիրքորոշումը: Ըստ ընտանեկան կարգավիճակի, ամուսնացած հարցվածները ավելի բացասական տրամադրվածություն ունեն բիսեքսուալ անձանց նկատմամբ, քան չամուսնացած հարցվածները:

Բիսեքսուալ կանանց (M=3.4) և տղամարդկանց (M=3.7) նկատմամբ դիրքորոշումների միջև չնչին տարբերություն կա. տղամարդկանց դեպքում ավելի բացասական երանգով է:

Բիսեքսուալ կանանց և տղամարդկանց նկատմամբ հարցվածների դիրքորոշումների առանձին քննարկումը ցույց է տալիս, որ կանանց դեպքում նշանակալի կապ է գրանցվել հարցվածների ընտանեկան կարգավիճակի, եկամտի, բնակավայրի տեսակի և սեռի նկատմամբ: Մասնավորապես՝ ամուսնացած, 50000-120000 դրամ ամսական եկամուտ ունեցող, քաղաքաբնակ տղամարդ հարցվածները ավելի բացասական են տրամադրված բիսեքսուալ կանանց նկատմամբ: Տղամարդկանց դեպքում նշանակալի կապ կա հարցվածների՝ ԼԳԲՏԻ անձանց հետ շփման, ինչպես նաև ՍԿԳԻ ձևավորման հիմքերի մասին հարցվածների դիրքորոշումների միջև: ԼԳԲՏԻ անձանց ճանաչող հարցվածները ավելի հանդուրժող են տրամադրված բիսեքսուալ տղամարդկանց նկատմամբ, քան շփում չունեցող հարցվածները: Բարոյականության տիրույթում ՍԿԳԻ հիմքերը դիտարկող հարցվածները ավելի խիստ են վերաբերվում բիսեքսուալ տղամարդկանց:

23 Մոհր Ջ. և Ռոխլեն Ա. Չափելով գեյ և հետերոսեքսուալ բնակչության դիրքորոշումները բիսեքսուալության նկատմամբ, Խորհրդատվական հոգեբանության ամսագիր, 1999, 353-369 http://psycnet.apa.org/index.cfm?fa=buy.optionToBuy&id=1999-05850-007#

Տրանսգենդեր անձանց նկատմամբ դիրքորոշումները

Տրանսգենդեր անձինք ամենախոցելի կարգավիճակում են գտնվում: Նրանց էությունը խիստ է գնահատվում գենդերային դերերի ու հասարակական նորմերի և կարգի տեսանկյունից: Քանի որ հասարակական ընկալումներում գենդերը նույնականացվում է կենսաբանական սեռի հետ՝ կին-տղամարդ երկբևեռության տիրույթում, տրանսգենդեր անձանց էությունը պիտակվում է որպես «բնականից շեղում», հետևաբար ենթարկվում է խիստ քննադատության և մերժման:

Տրանսգենդեր անձանց նկատմամբ բացասական դիրքորոշումները, վախն ու զայրույթը, տրանսֆոբիան չափելու համար հետազոտողները օգտագործում են տարբեր սանդղակներ: Սույն հետազոտության շրջանակներում օգտագործվել է Հիլի և Ուիլոբիի (2005)[24] մշակած գենդերիզմի և տրանսֆորբիայի չափման համար նախատեսված սանդղակը: Այն օգտագործվում է գենդերային նորմերից շեղվող անձանց նկատմամբ վախը, ոտնձգություններն ու բռնությունը գնահատելու համար: Գենդերիզմը և տրանսֆոբիան չափող այս սանդղակը տրանս անձանց ուղղված բացասական վերաբերմունքն ու բռնության հակվածությունը չափող՝ 1-7 միջակայքային սանդղակ է, որտեղ 7-ը տրանսգենդերների նկատմամբ բացասական վերաբերմունքի գագաթնակետն է:

Ըստ ներկա հետազոտության տվյալների, հարցվածների գնահատականների միջին արժեքը 5.0 է (M=5.0, N=515), այսինքն, հարցվածների վերաբերմունքը տրանսգենդեր անձանց նկատմամբ միջինից բարձր, հակա-տրանս բևեռին ձգտող նիշ է:

Նշանակալի կապ է արձանագրվել տրանսգենդեր անձանց նկատմամբ վերաբերմունքի և հարցվածների սեռի, բնակավայրի տիպի, տարիքի, կրթական մակարդակի և եկամտային ցուցանիշների միջև:

Գյուղական համայնքներում ավելի խիստ դիրքորոշում են հայտնել տրանսգենդեր անձանց նկատմամբ, քան քաղաքներում: Ինչպես այլ չափումների ժամանակ, այս դեպքում էլ երևանաբնակները աչքի են ընկել իրենց ցածր ցուցանիշով:

Տարիքի աճին զուգընթաց սաստկանում է նաև տրանսգենդեր անձանց նկատմամբ տրամադրվածությունը, իսկ կրթական մակարդակի աճին զուգընթաց, այն նվազում է:

Ինչպես մյուս խմբերի պարագայում, տրանսգենդեր անձանց նկատմամբ ևս ավելի հանդուրժող են տրամադրված այն հարցվածները, որոնք շփում ունեն ԼԳԲՏԻ խմբի հետ:

Հետաքրքիր է, որ տրանսգենդեր անձանց նկատմամբ դիրքորոշումը պայմանավորված է նաև ՍԿԳԻ մասին հարցվածների ունեցած պատկերացումներով: Նման նշանակալի կապ չի արձանագրվել նույնասեռական և բիսեքսուալ անձանց դեպքում: Իրենց դիրքորոշման հարցում ավելի խիստ են նրանք, ովքեր ՍԿԳԻ հիմքերը տեսնում են բարոյական և հասարակական նորմերի տիրույթում, այսինքն՝ կարծում են, որ նույնասեռականությունը սխալ դաստիարակության, «գեյ պրոպագանդայի», սոցիալական և կրոնական բարոյականության մերժման արդյունք է: Իսկ այն հարցվածները, որոնք ՍԿԳԻ հիմքում տեսնում են կենսաբանական պատճառներ՝ սեռական հորմոնների ավելցուկ, գենետիկական գործոններ, ավելի մեղմ դիրքորոշում ունեն նույնասեռական անձանց նկատմամբ:

Գենդերիզմի և տրանսֆոբիայի չափման սանդղակը հնարավորություն է տալիս անդրադառնալ նաև տրանսգենդեր անձանց նկատմամբ դիրքորոշման մի շարք առանձնահատկություններին: Այն հնարավորություն է տալիս ուսումնասիրել տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնության հակվածությունը, տրանս անձանց՝ անբարոյական և անբնական լինելու շուրջ դիրքորոշումները, կանացի տղամարդկանց վերաբերյալ նախապաշարումները և գենդերիզմի նախադրյալները:

Անդրադառնանք յուրաքանչյուր գործոնին սույն հետազոտության արդյունքների շրջանակներում:

Կանացի տղամարդկանց վերաբերյալ նախապաշարումների չափումը ներառում է հարցեր կնոջ կարծրատիպացված կերպար ընդունած տղամարդկանց մասին նախապաշարումների մասին: Հարցվածների նախապաշարված վերաբերմունքն այս հարցում 1-7 միջակայքային սանդղակում 5.4 գործակիցն ունի (M=5.4, N=515): Սա նշանակում է, որ կանացի տղամարդկանց վերաբերյալ նախապաշարված վերաբերմունքը հարցվածների շրջանում ձգտում է բացասական վերաբեր-

24 Հիլ Դ. և Ուիլոբի Բ. (2005) Գենդերիզմի և տրանսֆոբիայի սանդղակի մշակումն ու վավերացումը, Vol. 53, 531-544

մունքի գագաթնակետին: Հարցվածների սեռից, բնակավայրի տեսակից, տարիքից, կրթական մակարդակից, զբաղվածությունից կախված այս վերաբերմունքը փոխվում է:

Հաջորդ գործոնը տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնության հակվածությունն է, որը, հետազոտության արդյունքների համաձայն, ստացել է 4.9 գործակիցը (M=4.9, SD=1.5, N=515): Այս գործոնի փոփոխականությունը կախված է հարցվածների սեռից, բնակավայրի տիպից և կրթական մակարդակից: Տրանսգենդեր անձանց անբնականության գործոնը գնահատվել է 4.7 (M=4.7, N=515): Այն փոփոխություն է կրում հարցվածների կրթական մակարդակի ազդեցությամբ:

Հարցվածներն ամենախիստ գնահատականներ են տվել տրանսգենդեր անձանց անբարոյական լինելու մասին դատողություններին (M=6.1, N=515), ինչը թույլ է տալիս ևս մեկ անգամ հավաստիանալ, որ բարոյականության և արժեքանորմատիվային սահմանները շատ խիստ կարևորվում են հարցվածների, ինչպես նաև հայ հասարակության կողմից:

Եվ վերջին գործոնը, որը վերաբերում է տրանսգենդեր անձանց և գենդերային դրսևորման նկատմամբ դիրքորոշումներին և դատողություններին, հարցվածների կողմից միջինում գնահատվել է 5.0 միավոր (M=5.0, N=515), ինչը ևս ցույց է տալիս հարցվածների ընդհանուր բացասական դիրքորոշումը տրանսգենդեր անձանց և նրանց գենդերային դրսևորումների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, բոլոր այս հինգ գործոնների փոփոխականությունը նշանակալիորեն կապված է հարցվածների սեռի, տարիքի, կրթական մակարդակի և արժեքային առաջնայնությունների հետ: Ինչպես ներկայացված է Աղյուսակ 11-ում, բոլոր գործոնների դեպքում էլ արական սեռի հարցվածների դիրքորոշումներն ավելի խիստ բացասական են, քան իգական սեռի հարցվածներինը, տարիքի աճին զուգընթաց բացասական դիրքորոշումները սաստկանում են, իսկ ընտանիքը՝ որպես արժեք կարևորող հարցվողները ավելի անհանդուրժող են գտնվել: ԼԳԲՏԻ անձանց հետ շփման փորձի առկայության գործոնը ևս նշանակալիորեն է ազդում տրանսգենդեր անձանց մասին դիրքորոշումների ձևավորման վրա:

Անդրադառնանք նաև առնական կանանց և կանացի տղամարդկանց նկատմամբ դիրքորոշումների միջև տարբերություններին: Տրանսֆոբիայի և գենդերիզմի չափման սանդղակում ընդգրկված մի շարք դատողություններ թույլ են տալիս ուսումնասիրել հարցվածների տրամադրվածությունը իրենց գենդերային դերով պայմանավորված կերպարից տարբերվող կանանց և տղամարդկանց նկատմամբ: Նախևառաջ պետք է նշել, որ առնական կանանց և կանացի տղամարդկանց նկատմամբ դիրքորոշումները խիստ փոխկապված են և մեկի փոփոխությունը ենթադրում է նման փոփոխություն մյուսի դեպքում (Աղյուսակ 12): Փոխկապվածության գործակիցները խիստ նշանակալի կապ են արձանագրում: Եվ այսպես, ընդհանուր առմամբ, առնական կանանց և կանացի տղամարդկանց նկատմամբ վերաբերմունքը համեմատաբար առավել մեղմ է արտահայտված: Առնական կանայք ավելի մեղմ քննադատության են արժանացել հարցվածների կողմից: Ավելին, կին հարցվածները և՛ առնական կանանց, և՛ կանացի տղամարդկանց նկատմամբ ավելի հանդուրժող են գտնվել, քան տղամարդիկ: Ամենացածր ցուցանիշներն են արձանագրվել առնական կանանց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական (ծաղր) բռնության կիրառման պարագայում: Հարցվածները բռնության տեսակներից նախընտրում են ոչ բռնի մեթոդները (ծաղր, արհամարհանք): Տղամարդ հարցվածներն իրենց ավելի անհարմար են զգում կանացի տղամարդկանց հետ:

ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումների և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները համակարգված տեսքով տեղ են գտել «Աղյուսակներ և գծապատկերներ» բաժնի Աղյուսակ 11-ում:

ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները և առասպելները

Անդրադառնանք նաև ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումների ձևավորման հարցում նույնասեռական անձանց մասին առասպելների նշանակությանը: Վերջիններիս վրա հիմնված դատողությունների և ԼԳԲՏԻ նկատմամբ վերաբերմունքի փոխկապվածությունը վկայում է նրանց մասին տրամադրվածության ստեղծման վրա առասպելների ներգործության ինտենսիվու-

թյան մասին: Աղյուսակ 13-ի տվյալները ցույց են տալիս, որ կապը ամենահնտենսիվն է «Նույնասեռականությունը չի հանդիպում կենդանիների կամ այլ կենդանի էակների մոտ» դատողության պարագայում (r=0.136, p<0.001): Դա կարելի է մեկնաբանել բնության հետ նույնասեռականության կապի ժխտողականության տեսանկյունից. որքան մերժվում է նույնասեռականության՝ «բնական» երևույթ լինելը, այնքան ինտենսիվանում է նույնասեռական անձանց նկատմամբ բացասական դիրքորոշումը: Նման, կապ է արձանագրվում նաև տրանսգենդեր անձանց պարագայում (r=0.097, p=0.021): Բիսեքսուալ անձանց դեպքում ինտենսիվ կապ է արձանագրվել «Նույնասեռականության նկատմամբ ամենուր և մշտապես գոյություն է ունեցել և գոյություն ունի բացասական վերաբերմունք» դատողության հետ (r=0.248, p<0.001):

Սեռականության դրսևորման արժեքային սահմանները

Ավանդապաշտ հասարակություններում, որտեղ արժեքային խիստ սահմաններ են ընդունված, որոնք համընդհանուր են հասարակության համար, և ենթադրվում է, որ համահավասար քննադատելի պետք է լինեն և՛ հետերոսեքսուալ, և՛ նույնասեռական անձինք: Սիրո հանրային դրսևորման երկու ձևերի օրինակով դիտարկենք, թե կա արդյոք սեռական կողմնորոշման հիմքով առանձնահատուկ դիրքորոշում, թե արժեքային սահմաններն առաջնային են բոլորի համար: Եվ այսպես, առաջին օրինակում հարցվածներին առաջարկվել է գնահատել փողոցում իրար ձեռք բռնելու ընդունելիությունը հետերոսեքսուալ, լեսբի և գեյ զույգերի համար: Երկրորդ օրինակում հարցվածների գնահատականին է հանձնվել հետերոսեքսուալ, լեսբի և գեյ զույգերի հրապարակայնորեն համբուրվելու վերաբերյալ դատողություն: Երկրորդ դատողությունն արժեքային խըստությամբ գերազանցում է առաջինին (Գծապատկեր 9):

Երկու դատողությունների դեպքում էլ նույնասեռական զույգերի նկատմամբ արժեքային դիրքորոշումները ամենայն խստությամբ են արտահայտված. հանրայնորեն և՛ իրար ձեռք բռնած զբոսնելը, և՛, առավել

Գծապատկեր 9. Սեռականության դրսևորման արժեքային սահմանները (%)



և.ս, համբուրվելը անընդունելի են համարում գրեթե բոլոր հարցվածները: Հետերոսեքսուալ զույգի դեպքում պատկերն այլ է. իրար ձեռք բռնած քայլելը անընդունելի է հարցվածների միայն 4.3%-ի (N=44) համար, մինչդեռ հանրայնորեն համբուրվելու հարցում կարծիքն այլ է: Հարցվածների կեսից ավելին (60.3%, N=613) անընդունելի է համարում նույնիսկ հետերոսեքսուալ զույգի հանրային համբույրը:

Այսպիսով, եթե նույնասեռական զույգի համար բոլոր դեպքերում արժեքային խիստ սահմաններ են ընդգծվում, ապա հետերոսեքսուալ զույգը վայելում է որոշակի ազատություն՝ բախվելով միայն արժեքային այն խոչընդոտներին, որոնք սահմանվում են հասարակության բոլոր անդամների համար: Սակայն նույնիսկ այդ դեպքում հասարակական ընդդիմությունը այնքան խիստ չէ, որքան նույնասեռական զույգերի դեպքում:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ԼԳԲՏԻ անձանց իրավունքների մասին ընկալումները

ՀՀ օրենսդրությունը ընդհանուր դրույթներով խըտրական մոտեցում չի ցուցաբերում ԼԳԲՏԻ մարդկանց նկատմամբ: Ըստ ՀՀ Սահմանադրության, բոլոր մարդիկ, անկախ իրենց բնութագրիչներից, հավասար են: Սակայն, ինչպես արդեն կարելի է եզրահանգել հետազոտության արդյունքների ներկայացումից, հարցվածները չեն կիսում օրենսդրության կողմից երաշխավորվող իրավունքներն ու ազատությունները: Նրանք հակված են սահմանափակել մարդկանց իրավունքները՝ հիմնվելով նրանց ՍԿԳԻ-ի վրա: Հարցվածների դիրքորոշումն ավելի խիստ բնույթ է կրում, երբ հարցը վերաբերում է երեխաներին ու ընտանիքին:

Այսպիսով, հարցվածների 52%-ը (N=532) կարծում է, որ Հայաստանում ԼԳԲՏԻ իրավունքները պաշտպանված չեն, սակայն միայն 7%-ն (N=94) է տեսնում ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների անհրաժեշտությունը Հայաստանում: Հետևաբար, ըստ հարցվածների, ԼԳԲՏԻ մարդկանց իրավունքները պաշտպանված չեն, անհրաժեշտ էլ չէ դրանք պաշտպանելու համար քայլեր ձեռնարկել:

Գծապատկեր 10. ԼԳԲՏԻ իրավունքներն ու դրանց պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների անհրաժեշտությունը (%)



Հարցվածները ոչ միայն դեմ են ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը, ավելին, նրանց 90%-ը (N=919) համաձայնել է այն մտքի հետ, որ նույնա-սեռականությունը պետք է արգելվի օրենքով (Գծապատկեր 11):

Գծապատկեր 11. Նույնասեռական հարաբերություններ



Ավելին, երբ հարցը վերաբերում է երեխաների և ԼԳԲՏԻ անձանց շփմանը, հարցվածներն ավելի կտրուկ են դառնում իրենց դիրքորոշումներում: Ամեն 10-ից 9-ը կարծում է, որ նույնասեռական կանանց և տղամարդկանց չպետք է թույլատրվի աշխատել երեխաների հետ, ինչպես նաև նույնասեռական անձինք երեխա որդեգրելու իրավունք չպետք է ունենան (Գծապատկեր 12): Կրկին բախվում ենք այն խնդրին, որ հարցվածներին պարուրում է նույնասեռականության տարածման վախը, մասնավորապես՝ աճող սերնդի «այլասերման» ճանապարհով:

Այստեղ գործում է այն համոզմունքը, որ ԼԳԲՏԻ անձինք չպետք է ցույց տան իրենց ՍԿԳԻ-ն: Այն որակվում է որպես «գեյ պրոպագանդա», հետևաբար խիստ քննադատվում է (Գծապատկեր 13):

Գծապատկեր 12. Նույնասեռականների և երեխաների շփման սահմանները (%)



Գծապատկեր 13. Վերաբերմունքը նույնասեռականներին



Այս մտքին օժանդակող ևս մի փաստարկ է ԼԳԲՏԻ շքերթների մերժումը. հարցվածների 84%-ը (N=896) կտրականապես մերժում է նման հանրային միջոցառումները, որոնք խթանում են ԼԳԲՏԻ տեսանելիությունը, հետևաբար նաև՝ հնարավոր տարածումը (Գծապատկեր 14):

Գծապատկեր 14. E4_ԼԳԲՏԻ շքերթները պետք է արգելվեն (%):



Հարկ է առանձնահատուկ ուշադրություն սևեռել երեխաների հարցին, քանի որ այն, կարծես, հարցվածների, ինչու չէ նաև ամբողջ հասարակության, աքիլեսյան գարշապարը լինի: Հետազոտության արդյունքները ամեն քայլի փաստարկում են, որ երեխաների ներգրավվածությամբ հարցերի դեպքում հարցվածների դիրքորոշումներն ավելի կտրուկ բացասական են:

Երեխաները՝ որպես հասարակության խոցելի խումբ

Հայ հասարակության մեջ ընտանիքը և, մասնավորապես, երեխաները առաջնային արժեք են ներկայացնում: Այս մասին են վկայում նաև ներկա հետազոտության արդյունքները: Հարցվածների մեծամասնությունը ընտանիքը դասակարգել է առաջին տեղում՝ դրանով իսկ ցույց տալով վերաբերմունքը այդ սոցիալական ինստիտուտի նկատմամբ: Հետևաբար, ընտանիքը նաև հայ հասարակության մեջ կարելի է ասել «աքիլեսյան գարշապարն» է՝ ամենախոցելի տեղը, որի նկատմամբ հնարավոր յուրաքանչյուր ոտնձգություն ավելի սուր արձագանք է գտնում հասարակության կողմից:

Անդրադառնալով հետազոտությանը՝ հարկ է նշել, որ ԼԳԲՏԻ-ն ընկալվում է որպես սպառնալիք ընտանիքի և աճող սերնդի համար: Պատահական չէ, որ երեխաներին վերաբերող հարցերում հարցվողները իրենց պատասխանների մեջ ավելի կատեգորիկ են եղել: Երեխաներին վերաբերող հարցերի արդյունքները դիտարկելիս, կարելի է նկատել, որ պատասխանները գրեթե միանշանակ են և սանդղակի բացասական բևեռին հարող: Մասնավորապես՝ երեխաների կրթության մեջ ԼԳԲ անձանց՝ որպես ուսուցանողի ներգրավվածության հարցում հարցվածների դիրքորոշումը միանշանակ բացասական է: 1-5 սանդղակում միջին ցուցանիշը 4.7 է, ինչը բացասական տրամադրվածության բևեռին է հարում: Այսինքն՝ «ԼԳԲ անձանց չպետք է թույլատրվի աշխատել երեխաների հետ» դիրքորոշման հետ միանշանակորեն համաձայնել են գրեթե բոլոր հարցվածները: Ավելին, նրանք որևէ տարբերություն չեն տեսնում գեյ, լեսբի, թե բիսեքսուալ դասավանդողի միջև, նրանց համար բոլորը միանշանակորեն անթույլատրելի են որպես ուսուցիչ (Աղյուսակ 14):

Նույն արմատականությունն է նկատվում նաև ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ կիրառելու հարցում: Այն դեպքում, երբ հարցը վերաբերում է երեխային, հարցվածների դիրքորոշումներն ավելի հստակ են և միաբևեռ: Մասնավորապես, «Եթե շրջազգեստ հագած և դիմահարդարված տղամարդ մոտենա իմ երեխային և խոսի նրա հետ սեթևեթ ձայնով՝ ֆիզիկական ուժով կկանգնեցնեմ նրան» դիրքորոշմանը կրկին միանշանակ դրական պատասխան է ստացվել (M = 6.2): Մինչդեռ

այլ պարագաներում ֆիզիկական ուժի գործածումը նույն արձագանքին չի արժանացել: Օրինակ՝ կանացի տղամարդկանց (M = 4.7) կամ առնական կանանց (M = 3.9) նկատմամբ ուժի գործադրման մասին դիրքորոշմանը հարցվածներն ավելի բազմազան պատասխաններ են տվել: Արդյունքները վկայում են, որ երեխաներին ուղղված սպառնալիքները ավելի սուր արձագանք են ստանում: Իսկ այս պարագայում, երբ ԼԳԲՏԻ միանշանակորեն ընկալվում է սպառնալիք աճող սերնդի նկատմամբ, հարցվածները հստակ հակա-ԼԳԲՏԻ դիրքորոշում են հայտնում, նույնիսկ պատրաստ են ֆիզիկական ուժ գործադրել «ձագին» պաշտպանելու համար:

ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումներն ու իրավունքների սահմանները

ԼԳԲՏԻ նկատմամբ հարցվածների դիրքորոշումներն անհրաժեշտ է դիտարկել նաև իրավունքների մասին ընկալումների տիրույթում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների պատկերացումները ԼԳԲՏԻ իրավունքների սահմանների մասին նշանակալիորեն կապված են նրանց նկատմամբ ունեցած դիրքորոշումների հետ: ԼԳԲՏԻ՝ հետերոսեքսուալ անձանց հետ համահավասար իրավունքներ ունենալու մասին դատողությունների և հարցվածների դիրքորոշումների միջև կա հակադարձ կապ, ինչը նշանակում է, որ որքան հարցվողը ԼԳԲՏԻ իրավունքներին աջակցող դիրքորոշում է հայտնել, այնքան հանդուրժողական է նաև նրա դիրքորոշումը ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ: Նույն կերպ, որքան մերժողական է հարցվածների դիրքորոշումը ԼԳԲՏԻ իրավունքների վերաբերյալ, այնքան բացասական է նաև տրամադրվածությունը նրանց նկատմամբ: Ամենաուժեղ դրական փոխկապվածությունը գոյություն ունի «Նույնասեռական հարաբերությունները պետք է արգելվեն օրենքով» դատողության և ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դիրքորոշումների միջև: Վերը նշված դատողության նկատմամբ դիրքորոշումն ավելի քան 40%-ով պայմանավորում է ԼԳԲՏԻ նկատմամբ վերաբերմունքը: Նման սերտ, սակայն բացասական կապ կա նաև «ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների գոյությունն անհրաժեշտություն է մեր երկրում» դատողության հետ: 24-45%-ով այս դատողությունը պայմանավորում է ԼԳԲՏԻ նկատմամբ վերաբերմունքը, մասնավորապես՝ այս դատողությանը դեմ արտահայտվածները բացասական վերաբերմունք են արտահայտել նաև ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ (Աղյուսակ 15):

Այսպիսով, ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները կարելի է դիտարկել ԼԳԲՏԻ իրավունքների սահմաններում: Հարցվածների ընդգծած սահմանները պայմանավորում են նրանց վերաբերմունքը ԼԳԲՏԻ նկատմամբ: Որքան սեղմանում են այդ սահմանները, այնքան խստություն է նկատվում դիրքորոշումների բացասականության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ցանկացած երկրում, Հայաստանում ևս ապրում են ԼԳԲՏԻ անձինք: Սակայն նրանք հասարակական խիստ անհանդուրժողական ալիքի են բախվում: Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնությունը դեմ է արտահայտվում ԼԳԲՏԻ անձանց: Այս ուսումնասիրությունն ուղղված էր համապարփակ վերլուծության ենթարկելու ԼԳԲՏԻ նկատմամբ հանրային վերաբերմունքը և նրա վրա ազդող գործոնները:

Հետազոտության արդյունքները ևս մեկ անգամ փաստում են Հայաստանում ԼԳԲՏԻ նկատմամբ բացասական տրամադրվածության առկայությունը: Այն պայմանավորված է սեռականության վերաբերյալ հարցվածների ցածր իրազեկվածությամբ, ինչպես նաև հանրային դիրքորոշումների ձևավորման գործում կարծրատիպերի և նախապաշարումների, արժեքային կողմնորոշումների զգալի ազդեցությամբ: Վերջիններիս ազդեցությունն էլ ավելի նշանակալի է ԼԳԲՏԻ անձանց հետ շփման բացակայության պատճառով:

Հետազոտության շրջանակներում հարցվածները, որոշակի վերապահումով, միակերպ են տրամադրված ԼԳԲՏԻ հարցերում, սակայն սեռային, տարիքային, բնակության վայրի և զբաղվածության առանձնահատկություններով պայմանավորված որոշակի փոփոխություններ նկատվում են դիրքորոշումների մեջ: Մասնավորապես՝ կանայք, քաղաքաբնակ, երիտասարդ, զբաղվածություն ունեցող հարցվածները համեմատաբար հանդուրժող են գտնվել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ, հետևաբար նաև ավելի քիչ են հակված աջակողմյան ավտորիտարիզմի և կրոնական արմատականության: Վերաբերմունքը խստանում է, երբ հարցն առնչվում է առաջնային արժեք համարվող ընտանիքին և երեխաներին:

ԼԳԲՏԻ հանրային դիսկուրսը Հայաստանում դեռևս գտնվում է սաղմնային, մակերեսային վիճակում, երբ հասարակության մեջ ԼԳԲՏԻ մասին ընդհանրական պատկերացումներ են գերիշխում: Սրա մասին են վկայում նաև հարցվածների կողմից ԼԳԲՏԻ խմբերի միջև տարբերությունները տեսնելու դժվարությունը: Հարցվածների կողմից ԼԳԲՏԻ խմբերի տարանջատման անկարողության պատճառով հետազոտության արդյունքներում զգալի թիվ են կազմում «Դժվարանում եմ պատասխանել» և «Չեզոք» տարբերակները:

Նման թեմաներով հետազոտություններն ավելի արդյունավետ կլինի իրականացնել այն ժամանակ, երբ թեման հասարակության կողմից ավելի հասուն քննարկումների կարժանանա, իսկ սեռականության մասին իրազեկվածությունն առավել բարձր մակարդակի վրա կլինի, որպեսզի հարցվողները կարողանան դիրքորոշում հայտնել ՍԿԳԻ հիմքով առանձնացվող խմբերի մասին: ԼԳԲՏԻ հանրային դիսկուրսի լիարժեք ձևավորման համար դեռևս ժամանակ է անհրաժեշտ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկներ պետությանը

- Ընդունել համընդգրկուն օրենսդրություն խտրականության դեմ, որը կդատապարտի խտրականությունը՝ հիմնված սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա
- ՀՀ Քրեական Օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ դասակարգելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունները որպես ծանրացուցիչ հանգամանքներ
- Հարգել և պաշտպանել իրավապաշտպանների իրավունքները և լրագրողներին, որպեսզի նրանք զբաղվեն իրենց աշխատանքով առանց վախենալու, որ իրենց կահաբեկեն, կենթարկեն քրեական պատասխանատվության կամ այլ ճնշումների
- Իրավապաշտպանների, լրագրողների կամ քաղաքացիական հասարակության ակտիվիստների դեմ հարձակումների կամ սպառնալիքների մասին բոլոր զեկույցները քննել արագ, արդյունավետ և անաչառորեն՝ գտնելով իրավախախտներին և նրանց պատասխանատվության ենթարկելով
- Միջոցներ ձեռնարկել սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիման վրա կատարված հանցանքները լիովին քննելու և, եթե կարիք կա, համապատասխան պատիժ սահմանելու համար
- Հարգել և պահպանել արտահայտվելու և խաղաղ հավաքների իրավունքը բոլորի համար
- Ընդունել ընտանեկան բռնության կանխարգելման օրենք
- Երաշխավորել, որ պաշտոնյաները՝ ներառյալ կառավարության ներկայացուցիչները, զերծ մնան բացասական հայտարարություններից, որոնք խթանում են ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականությունը
- Կազմակերպել և անցկացնել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին դասընթացներ և իրազեկվածության բարձրացման միջոցառումներ պետական պաշտոնյաների և աշխատակիցների համար, հատկապես նրանց, ովքեր ներգրավված են արդարադատության, պաշտպանության, ոստիկանության և առողջապահության ոլորտներում
- Իրականացնել ծրագրեր և միջոցառումներ, որոնք կկրթեն բնակչությանը ԼԳԲՏԻ խնդիրների վերաբերյալ՝ նպատակ ունենալով տարածել անխտրականություն և խթանել փոքրամասնական խմբերի հիմնարար իրավունքների իրացումը
- Ուսումնական ծրագրում ներառել սեռականության և հանդուրժողականության թեմաները, միևնույն ժամանակ հասցեագրել գենդերային դերերի ոչ համաչափ ներկայացման խնդիրը ուսումնական ձեռնարկներում:

Առաջարկներ ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին

- Սերտորեն համագործակցել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ կազմակերպությունների և իրավապաշտպանների հետ՝ ինստիտուցիոնալականացնելու և աջակցելու ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը և մշակելու խտրականության դեմ համընդգրկուն օրենքի անհրաժեշտության ազգային ջատագովության արշավ

- Արձանագրել և փաստաթղթավորել մարդու իրավունքների ոտնահարումների դեպքերը՝ որպես խտրականության դեպքերի առկայության ապացույց
- Ոչ-ֆորմալ կրթության շրջանակներում բարձրացնել ընդհանուր բնակչության տեղեկացվածությունը սեռականության և գենդերային ինքնության հարցերի շուրջ
- Մշտադիտարկել ՁԼՄ-ների հրապարակումները՝ հասկանալու և հասցեագրելու գենդերի և սեռականության մասին առկա հիմնական կարծրատիպերը:

Առաջարկներ Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակին

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, ժողովրդավարական հասարակությունում խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների մասին;
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության կոչերի և դրա քարոզչության հակաօրինականության մասին;
- Իրականացնել համապատասխան ջատագովություն Խտրականության դեմ արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:

Առաջարկներ ՁԼՄ-ներին

- Խթանել տեղեկատվական ծրագրերի հեռարձակումը, որոնք կարտացոլեն սեռականության մասին ժամանակակից մոտեցումները
- Տրամադրել գիտականորեն ճիշտ տեղեկատվություն նույնասեռականության մասին
- Բացառել ատելության խոսքը և ատելության քարոզչությունը
- Նվազեցնել բացասական կարծրատիպերի տարածումը ՁԼՄ-ներում, ինչպես նաև դրանց ազդեցությունը ԼԳԲՏԻ անձանց վրա՝ կանխարգելելու հասարակության խտրական վերաբերմունքը

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանում լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս (այսուհետ՝ ԼԳԲՏԻ) հանրույթին առնչվող ավելի վաղ արված հետազոտությունները փաստում են, որ հայ հասարակությունը ԼԳԲՏԻ նկատմամբ խիստ անհանդուրժող դիրքորոշում ունի (93-96%[25]): Թեև անկախության տարիներին որոշակի իրավական բարեփոխումների արդյունքում Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց կարգավիճակը փոխվել է, և ՀՀ իրավական դաշտը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (այսուհետ՝ ՍԿԳԻ) հիմքով խտրականությունից զերծ է, հանրային ընկալումների տեսանկյունից իրավիճակի փոփոխություն նկատելի չէ:

Սույն հետազոտությունն ուղղված է վերլուծելու սոցիալական, մշակութային, քաղաքական և այլ գործոնների ազդեցությունը հասարակության մեջ ընդհանուր հոմոֆոբ և տրանսոֆոբ միջավայրի ստեղծման վրա, գնահատելու ԼԳԲՏԻ անձանց վերաբերող հարցերի շուրջ հանրության իրազեկվածությունը, գիտելիքն ու դիրքորոշումները, ինչպես նաև ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ տրամադրվածությունն ու վերաբերմունքը Հայաստանում: Այն ոչ միայն գիտական նշանակություն ունի՝ նշանակալի տեղեկատվական սկզբնաղբյուր հանդիսանալով ԼԳԲՏԻ անձանց մասին հետագա հետազոտությունների համար, այլև կիրառական արժեք ունի և կարող են հիմք դառնալ շահերի և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքների համար:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են ՀՀ ողջ տարածքի 1017 տնային տնտեսություններում՝ 2015 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Կիրառվել է բազմաստիճան ստրատիֆիկացված ընտրանք, կլաստերները, տնային տնտեսությունները և հարցվողներն ընտրվել են պատահականության սկզբունքով:

Հարցումն իրականացվել է ստանդարտացված հարցաթերթի միջոցով, որը կառուցված է արժեքային կողմնորոշումներն ու ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումները չափող մի շարք սանդղակների հիման վրա:

Հետազոտությունն անդրադարձել է հարցված բնակչության՝ ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումներին՝ բացահայտելով այդ դիրքորոշումների ձևավորման վրա ազդող այնպիսի գործոններ, ինչպիսիք են ԼԳԲՏԻ անձանց հետ շփման ինտենսիվությունը, կարծրատիպերն ու նախապաշարումները, հարցվածների արժեքային կողմնորոշումները, ինչպես նաև նրանց ընկալումները՝ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների սահմանների վերաբերյալ:

Հետազոտության արդյունքները երկրորդում են ավելի վաղ արված հետազոտությունների արդյունքները ԼԳԲՏԻ նկատմամբ բացասական տրամադրվածության վերաբերյալ: ԼԳԲՏԻ նկատմամբ վերաբերմունքը միանման է բոլոր խմբերի համար և չի տարբերակվում ըստ ՍԿԳԻ տեսակի: Դիրքորոշումների նման միակերպության պատճառը, թերևս, հարցված բնակչության՝ ԼԳԲՏԻ տարբեր խմբերի միջև տարբերությունների ընկալման դժվարությունն է: ԼԳԲՏԻ անձինք երկբևեռ ընկալումների արդյունքում դասակարգվում են երկու խմբի՝ կին և տղամարդ նույնասեռականներ: Բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս հասկացությունները հարցվածների համար դժվարըմբռնելի են: ԼԳԲՏԻ խմբերի միջև տարբերակման դժվարությունը դրսևորվել է նաև հետազոտության արդյունքներում «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի առատությամբ:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է առանձնացնել ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումների ձևավորման կամ ամրապնդման վրա ներգործող մի շարք գործոններ:

ԼԳԲՏԻ նկատմամբ բացասական դիրքորոշումների պատճառներից մեկը հարցվածների շրջանում սեռականության մասին գիտելիքի սակավությունն է, ինչը կարծրատիպերի և առասպելների վրա հիմնված պատկերացումների գերիշխման տեղիք է տալիս: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ԼԳԲՏԻ մասին տարածված կարծրատիպերը և առասպելները լայն զանգվածայնություն են վայելում հարցվածների շրջանում: Մասնավորապես՝ բնակչությունը չի հանդուրժում ԼԳԲՏԻ անձանց հանրային տեսանելիությունը՝ առաջնորդվելով այն մտավախությամբ, որ ԼԳԲՏԻ-ն կարող է տարածվել և ազդեցություն ունենալ ապագա սերնդի սոցիալականացման վրա:

25 Համաշխարհային արժեքների հարցման կայքէջ՝ http://www.worldvaluessurvey.org/WVSOnline.jsp

Հետաքրքիր է նկատել, որ հարցվածների դիրքորոշումը ԼԳԲՏԻ նկատմամբ մեղմանում է այն դեպքում, երբ նրանք ՍԿԳԻ ձևավորման հիմքում տեսնում են անհատի ներգործությունից անկախ գործոններ, ինչպիսիք են, օրինակ, հորմոնների ավելցուկն ու գենետիկ տրամադրվածությունը: Իսկ ՍԿԳԻ ձևավորման հիմքում սխալ դաստիարակության կամ «գեյ պրոպագանդայի» ազդեցության մասին հավաստիացնողները խիստ են նաև իրենց գնահատականներում: Բարոյականության տիրույթի շահարկումը ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումների շեշտակի բացասականացման հիմք է:

Հարցվածների շրջանում գերիշխում է այն մտավախությունը, որ տեսանելիության պարագայում նույնասեռականությունը կարող է տարածվել և ԼԳԲՏԻ մարդկանց թիվն ավելանալ, հետևաբար անհրաժեշտ է անվերապահորեն հետևել հասարակական նորմերին ու արժեքներին և մերժել դրսից «ներմուծվող» նորը, որը սպառնալիք է դիտարկվում ավանդական արժեքների համար:

Այս համատեքստում երեխաների պաշտպանությունը շատ ավելի զգայուն թեմա է. ԼԳԲՏԻ գոյությունը սպառնալիք է դիտարկվում և՛ երեխաների սոցիալականացման տեսանկյունից, և՛ նույնասեռական անձանց՝ աճող սերնդի հաշվին շատանալու տեսանկյունից: Հետևաբար, յուրաքանչյուր հանգամանք, որը նպաստում է ԼԳԲՏԻ տեսանելիությանը, օրինակ՝ նույնասեռական զույգի փողոցում գտնվելը, գեյ շքերթները, նույնասեռականների՝ որպես ուսուցիչ աշխատելը, ուղղակիորեն ընկալվում է որպես սպառնալիք երեխայի, ընտանիքի և նույնիսկ երկրի համար:

Հարցվածների շրջանում այս մտավախություններն առկա են նաև ԼԳԲՏԻ անձանց հետ շփման բացակայության պատճառով: Հարցված բնակչության միայն 9%-ն է ճանաչել/ճանաչում ԼԳԲՏԻ անձի, որոնց մեծամասնությունը ծանոթի կարգավիճակ ունի, նրանց հետ շփումը սահմանափակ է: Որքան հարցվածի շփումը ԼԳԲՏԻ անձանց հետ ինտենսիվ է, այնքան հանդուրժողական է նրա դիրքորոշումը, իսկ կարծրատիպերի և նախապաշարումների ներգործությունը խիստ չէ:

ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշումների ձևավորման հիմքում ընկած են նաև հարցվածների արժեքային կողմնորոշումները, որոնք արտահայտվում են մի շարք գործոնների միջոցով:

Հարցված բնակչության արժեքային կողմնորոշումները կարելի է բնութագրել աջակողմյան ավտորիտարիզմին և կրոնական արմատականությանը հակվածությամբ. իշխանություն և հեղինակություն վայելողների նկատմամբ լոյալությունը, հասարակության մեջ հաստատված նորմերին և կանոններին աներկբա հետևելը, դրանցից շեղվող որևէ երևույթի նկատմամբ անհանդուրժողականությունը զուգորդվում են ԼԳԲՏԻ նկատմամբ բացասական տրամադրվածության հետ: Հետազոտությունը փաստում է, որ հարցվածները խիստ կարևորում են հասարակական նորմերն ու արժեքները, և որևէ շեղում այդ արժեքներից, ներառյալ ԼԳԲՏԻ-ն, քննադատաբար է ընդունվում կամ մերժվում է հասարակության կողմից:

Մասնավորապես՝ հարցվածների հիմնական արժեքային առաջնայնությունները ընտանիքը, հայրենիքն ու կրոնն են, իսկ ժողովրդավարության կարևոր բաղադրիչներ մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունները քիչ են կարևորվել: Հարցվածների աշխարհաքաղաքական նախընտրությունները վերահաստատում են նրանց արժեքային կողմնորոշումները: Մասնավորապես՝ ՌԴ-ի նախընտրությունը՝ որպես Հայաստանի հիմնական գործընկերոջ, իսկ ԱՄՆ-ի և Եվրոմիության հետ կապերի սահմանափակման նախընտրությունը ևս խոսում է հարցվածների արժեքային նախապատվությունների մասին: Ավելին, արևմուտքը ներկայանում է որպես նույնասեռականության «բազմացման օրրան», որտեղ հասարակության կողմից այդքան կարևորվող արժեքները՝ ընտանիքը, կրոնը, ավանդույթները, իրենց տեղը զիջում են մարդու իրավունքների գերակայությանը՝ անկախ անձի ՍԿԳԻ առանձնահայտկություններից: Այս պարագայում հարցվածների կողմից ԼԳԲՏԻ իրավունքների մերժումը, ավելին՝ իրավունքներից նրանց զրկելու դիրքորոշումը ակնհայտ է: Հարցվածների 90%-ը համաձայն է այն մտքի հետ, որ նույնասեռականությունը պետք է արգելվի օրենքով:

ԼԳԲՏԻ նկատմամբ հանրային դիրքորոշումները պայմանավորող գործոնները փոխկապված են: Մասնավորապես՝ արժեքային տիրույթում սեռականության թեմայի քննարկման մերժումը սահմանափակում է գիտելիքահեն տեղեկատվության տարածման հնարավորությունները, ինչը նպաստում է կարծրատիպերի և նախապաշարում-

ների ձևավորմանն ու ամրապնդմանը: Վերջինս պատճառ է ԼԳԲՏԻ անձանց կողմից սեփական ՍԿԳԻ մասին չբարձրաձայնելու համար: Սա էլ իր հերթին պայմանավորում է ԼԳԲՏԻ անձանց հետ սահմանափակ շփումը՝ պարարտ հող ստեղծելով կարծրատիպային պատկերացումների ձևավորման և ամրապնդման համար:

Այսպիսով, հետազոտության շրջանակներում հարցվածները, որոշակի վերապահումով նաև հայ հասարակությունը, միակերպ են տրամադրված ԼԳԲՏԻ հարցերում, սակայն սեռային, տարիքային, բնակության վայրի և զբաղվածության առանձնահատկություններով պայմանավորված որոշակի փոփոխություններ նկատվում են դիրքորոշումների մեջ: Մասնավորապես՝ կանայք, քաղաքաբնակ, երիտասարդ, զբաղվածություն ունեցող հարցվածները համեմատաբար հանդուրժող են գտնվել ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ, հետևաբար նաև ավելի քիչ են հակված աջակողմյան ավտորիտարիզմի և կրոնական արմատականության: Վերաբերմունքն էլ ավելի է խստանում, երբ հարցն առնչվում է առաջնային արժեք համարվող ընտանիքին և երեխաներին:

ԼԳԲՏԻ նկատմամբ բացասական դիրքորոշումները պայմանավորված են հարցվածների ընտանիքակենտրոն և ավանդական արժեքային կողմնորոշումներով, ԼԳԲՏԻ անձանց հետ շփման բացակայությամբ ու կարծրատիպերի և նախապաշարումների ինտենսիվ ներգործությամբ:

ԼԳԲՏԻ հանրային դիսկուրսը Հայաստանում դեռևս գտնվում է սաղմնային, մակերեսային վիճակում, երբ հասարակության մեջ ԼԳԲՏԻ մասին ընդհանրական պատկերացումներ են գերիշխում: Սրա մասին են վկայում նաև հարցվածների կողմից՝ ԼԳԲՏԻ խմբերի միջև տարբերությունները տեսնելու դժվարությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Որակական հետազոտությունը վերանայած փորձագետների ցանկ

Անուն Ազգանուն	Կազմակերպություն	Պաշտոն
Նվարդ Մարգարյան	Փինք Արմենիա	Նախագահ
Մամիկոն Հովսեփյան	Փինք Արմենիա	Հիմնադիր
Նիոլայ Հովհաննիսյան	Փինք Արմենիա	Ծրագրերի համակարգող
Հովհաննես Մադոյան	Իրական աշխարհ, իրական մարդիկ	Հիմնադիր
Արփինե Փորսուղյան	Անկախ ուսումնասիրող	

Հավելված 2. Աղյուսակներ և գծապատկերներ

ԱՂՅՈՒՍԱԿ NRR

Մարզ	Արված հարցումներ	Հրաժարում		Փակ դուռ		Կապ չի հաստատվել		Համապատասխան տարիքի մարդ չկա		
		Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	
ք. Երևան	359		168		184		45		37	434
Արագածոտն	59	12	17	9	12	7	5	12	6	80
Արարատ	75	17	24	10	15	16	13	10	4	109
Արմավիր	105	22	18	12	6	8	5	6	6	83
Գեղարքունիք	75	15	12	10	14	5	4	2	14	76
Լոռի	63	9	15	16	19	5	6	3	8	81
Կոտայք	73	12	9	17	22	11	4	7	4	86
Շիրակ	90	12	11	17	55	5	8	11	19	138
Սյունիք	45	9	5	8	12	6	9	5	9	63
Վայոց Ձոր	28	4	2	13	9	2	2	2	4	38
Տավուշ	45	8	6	6	6	3	6	2	4	41
	1017	120	287					60	115	1229
			407							

	Հրաժարում	Փակ դուռ	Կապ չի հաստատվել	Համապատասխան տարիքի մարդ չկա	
Երևան	168	184	45	37	
Այլ քաղաք	119	170	62	78	
Գյուղ	120	118	68	60	
	407	472	175	175	1229

ԱՂՅՈՒՍԱԿ 1. Հարցվողների սեռատարիքային բաշխվածությունը

		D1_Սեռը				Ընդամենը	
		Իգական	%	Արական	%		
D2_Տարիքը	18-25	83	58.5%	59	41.5%	142	100.0%
	26-35	161	69.7%	70	30.3%	231	100.0%
	36-45	122	72.2%	47	27.8%	169	100.0%
	46-55	144	64.3%	80	35.7%	224	100.0%
	56-65	160	72.1%	62	27.9%	222	100.0%
Ընդամենը		**670**	**67.8%**	**318**	**32.2%**	**988**	**100.0%**

ԱՂՅՈՒՍԱԿ 2. Հարցվողների սեռային պատկերի համադրումը մարդահամարի (2011) տվյալների հետ

	Սեռ	
	Արական (%)	Իգական (%)
Հարցման տվյալներ	32	68
Մարդահամարի տվյալներ	46	54

ԱՂՅՈՒՍԱԿ 3. Հարցվողների բաշխվածությունը՝ ըստ ընտանեկան կարգավիճակի

	N	%
Ամուսնացած	655	64.4
Ամուսնացած՝ ոչ պաշտոնական գրանցմամբ	32	3.1
Չամուսնացած	182	17.9
Ամուսնալուծված	42	4.1
Այրի	77	7.6
Միայնակ ծնող	5	0 .5
Այլ	2	0.2
Հրաժարվում եմ պատասխանել	1	0.1
Հարցազրուցավարի սխալ	21	2.1
Ընդհամենը	**1017**	**100.0**

ԱՂՅՈՒՍԱԿ 4. Հարցվողների բաշխվածությունը՝ ըստ կրթության մակարդակի

	N	%
Հիմնական	41	4.0
Միջնակարգ	370	36.4
Միջին մասնագիտական	238	23.4
Տեխնիկական	18	1.8
Թերի բարձրագույն	30	2.9
Բարձրագույն	311	30.6
Ուսանող/դիմորդ/աշակերտ	7	0.7
Հետբուհական	1	0.1
Հարցազրուցավարի սխալ	1	0.1
Ընդամենը	**1017**	**100.0**

ԱՂՅՈՒՍԱԿ 5. Հարցվողների կրոնական և ազգային պատկանելության մասին տվյալների համադրումը մարդահամարի (2011) տվյալների հետ

	Հարցման տվյալներ	Մարդահամարի տվյալներ
Կրոնական պատկանելություն (%)	96	93
Ազգություն (%)	98	98

ԱՂՅՈՒՍԱԿ 6. Հարցվողների բաշխվածությունն՝ ըստ զբաղվածության

	N	%
Հանրային/պետական ոլորտի աշխատող	175	17.2
Մասնավոր ոլորտի աշխատող	107	10.5
Ինքնազբաղված	106	10.4
Անհատ ձեռներեց	9	0.9
Զինծառայող	13	1.3
Ֆերմեր	3	0.3
Կենսաթոշակառու	63	6.2
Ուսանող	47	4.6
Գործազուրկ	166	16.3
Տնային տնտեսուհի (ոչ կենսաթոշակային տարիքի)	311	30.6
Հասարակական կազմակերպություն	3	0.3
Հրաժարվում եմ պատասխանել	1	0.1
Հարցազրուցավարի սխալ	13	1.3
Ընդամենը	**1017**	**100.0**

ԱՂՅՈՒՍԱԿ 7. Աջակողմյան ավտորիտարիզմի և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները

N	Valid	1014
	Missing	3
Mean		6.5871
Median		6.6500
Mode		6.65
Std. Deviation		0.93147

տարիքը($p<0.001$, $R^2=0.034$)

D2_Տարիքը	M	N	SD
18-25	6.37	142.00	0.99
26-35	6.37	230.00	1.00
36-45	6.56	168.00	0.96
46-55	6.75	224.00	0.84
56-65	6.78	221.00	0.86
Ընդամենը	**6.58**	**985.00**	**0.94**

միջին ամսական եկամուտը($p<0.001$, $R^2=0.022$)

D_11 Ամսական եկամուտ	M	N	SD
մինչև 24000	6.63	215.00	0.87
24001-50000	6.81	130.00	0.82
50001-120000	6.70	340.00	0.92
120001-250000	6.47	248.00	0.84
250001-500000	6.11	71.00	1.17
500001-1000000	5.24	8.00	1.96
1500000ից ավել	6.29	2.00	0.70
Ընդամենը	**6.59**	**1014.00**	**0.93**

բնակավայրի տիպը ($p<0.001$, $R^2=0.116$)
հարցվողների սեռը($p<0.001$, $R^2=0.015$)

Բնակավայրի տիպը		**M**	**N**	**SD**
Երևան	Իգական	6.11	275.00	0.98
	Արական	6.45	98.00	0.86
	Ընդամենը	6.20	373.00	0.96
Այլ քաղաք	Իգական	6.65	220.00	0.79
	Արական	6.66	80.00	0.85
	Ընդամենը	6.65	300.00	0.80
Գյուղ	Իգական	6.92	195.00	0.86
	Արական	7.00	146.00	0.82
	Ընդամենը	6.95	341.00	0.84
Ընդամենը	Իգական	6.51	690.00	0.95
	Արական	6.75	324.00	0.87
	Ընդամենը	6.59	1014.00	0.93

կրթությունը($p=0.042$, $R^2=0.004$)

D8_Կրթությունը	M	N	SD
Հիմնական	6.98	41.00	0.79
Միջնակարգ	6.83	369.00	0.84
Միջին մասնագիտական	6.69	236.00	0.82
Տեխնիկական	6.50	18.00	0.63
Թերի բարձրագույն	6.50	30.00	0.95
Բարձրագույն	6.21	311.00	1.00
Ուսանող/դիմորդ/աշակերտ	6.17	7.00	0.56
Հետբուհական	2.90	1.00	
Հարցազրուցավարի սխալ	5.35	1.00	
Ընդամենը	**6.59**	**1014.00**	**0.93**

ԱՂՅՈՒՍԱԿ 8. Սոցիալական գերիշխանության և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները

N	Valid	1014
	Missing	3
Mean		3.11
Median		3.00
Mode		3.00
Std. Deviation		0.75

Տարիքը **(p=0.026, R²=0.005)**	M	N	SD
18-25	3.19	142.00	0.76
26-35	3.13	230.00	0.71
36-45	3.11	168.00	0.78
46-55	3.13	224.00	0.79
56-65	3.03	221.00	0.74
Ընդամենը	**3.11**	**985.00**	**0.75**

բնակավայրի տիպ (p<0.001, R²=0.020)		**M**	**N**	**SD**
Երևան	Իգական	3.21	275.00	0.74
	Արական	3.36	98.00	0.86
	Ընդամենը	3.25	373.00	0.78
Այլ քաղաք	Իգական	3.07	220.00	0.69
	Արական	3.14	80.00	0.73
	Ընդամենը	3.09	300.00	0.70
Գյուղ	Իգական	2.96	195.00	0.76
	Արական	3.04	146.00	0.75
	Ընդամենը	3.00	341.00	0.75
Ընդամենը	Իգական	3.09	690.00	0.73
	Արական	3.16	324.00	0.79
	Ընդամենը	3.11	1014.00	0.75

D12_Ինչպե՞ս կգնահատեիք Ձեր ընտանիքի տնտեսական վիճակը	M	N	SD
Ծանր տնտեսական վիճակում ենք: Գումարը բավարար չէ նույնիսկ սննդի համար	3.06	303.00	0.74
Գումարը բավարարում է սննդին, սակայն չի բավարարում հագուստ գնելուն	3.07	370.00	0.74
Մեր եկամուտը բավարար է սննդի և հագուստի համար, սակայն չենք կարող մեզ թույլ տալ թանկարժեք իրեր	3.19	246.00	0.75
Մենք կարող ենք գնել երկարաժամկետ գործածման ապրանքներ, սակայն չենք կարող մեզ թույլ տալ անշարժ գույք	3.28	81.00	0.79
Մենք կարող ենք մեզ թույլ տալ նաև անշարժ գույքի ձեռք բերում (բնակարան, ամառանոց):	3.14	7.00	0.92
Հրաժարվում եմ պատասխանել	2.86	5.00	0.94
Հարցազրուցավարի սխալ	3.58	2.00	0.59
Ընդամենը	**3.11**	**1014.00**	**0.75**

ԱՂՅՈՒՍԱԿ 9. Կրոնական արմատականության և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները

N	Valid	1014
	Missing	3
Mean		5.61
Median		5.67
Mode		5.00
Std. Deviation		1.29

բնակավայրի տիպ (p=0.047, R^2=0.004)	Mean	N	Std. Deviation
Երևան	5.55	373	1.33
այլ քաղաք	5.54	300	1.28
գյուղ	5.75	341	1.27
Ընդամենը	**5.61**	**1014**	**1.29**

Տարիքը (p=0.002, R^2=0.010)	M	N	SD
18-25	5.47	142	1.36
26-35	5.37	230	1.23
36-45	5.69	168	1.27
46-55	5.81	224	1.25
56-65	5.67	221	1.35
Ընդամենը	**5.60**	**985**	**1.30**

ընտանիքի ամսական եկամտի արժեքը(p=0.040, R^2=0.004)

D11_Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի միջին ամսական եկամուտը	M	N	SD
մինչև 24000	5.59	215	1.30
24001-50000	5.72	130	1.39
50001-120000	5.75	340	1.23
120001-250000	5.51	248	1.24
250001-500000	5.35	71	1.47
500001-1000000	4.27	8	1.02
1500000ից ավել	5.06	2	0.98
Միջինը	**6.59**	**1014.00**	**0.93**

ԱՂՅՈՒՍԱԿ 10. Արժեքային կողմնորոշումների և աշխարհաքաղաքական նախապատվությունների փոխկապվածությունը

		ԱՄՆ	ԵՄ	ՌԴ	ԵՏՄ
A8_Աջակողմյան ավտորիտարիզմ	Ավելի սերտ	6.34	6.28	6.70	6.76
	Ավելի սահմանափակ	6.78	6.81	5.64	6.08
	Այնպես, ինչպես կա	6.64	6.69	6.30	6.44
A9_Սոցիալական գերիշխանություն	Ավելի սերտ	3.02	3.08	3.11	3.13
	Ավելի սահմանափակ	3.13	3.18	3.21	3.13
	Այնպես, ինչպես կա	3.18	3.16	3.16	3.16
A10_Կրոնական արմատականություն	Ավելի սերտ	5.44	5.46	5.73	5.71
	Ավելի սահմանափակ	5.72	5.76	4.72	5.24
	Այնպես, ինչպես կա	5.63	5.62	5.26	5.54

ԱՂՅՈՒՍԱԿ 11. ԼԳԲՏԻ նկատմամբ դիրքորոշման և հարցված բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների փոխկապվածության ցուցանիշները

Դիրքորոշում													
D1_Սեռը		Նույնասեռական անձանց նկատմամբ	Գեյերի նկատմամբ	Լեսբիների նկատմամբ	Բիսեքսուալ անձանց նկատմամբ	Բիսեքսուալ կանանց նկատմամբ	Բիսեքսուալ տղամարդկանց նկատմամբ	Տրանսգենդեր անձանց նկատմամբ	Կնաբարո տղամարդկանց վերաբերյալ նախապաշարմունքներ	Տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնություն	Տրանսգենդեր անձանց անբնականության մասին	Տրանսգենդեր անձանց անբարոյական լինելու մասին	Տրանսգենդեր անձանց և գենդերային դրսևորման նկատմամբ
Իգական	Mean	4.38	4.35	4.40	3.97	3.86	4.07	5.28	5.19	4.04	6.21	6.06	4.89
	Median	4.60	4.60	4.60	4.00	3.89	4.11	5.37	5.25	4.00	6.25	6.50	5.00
	Std. Deviation	0.71	0.74	0.74	0.59	0.65	0.65	0.95	1.15	1.73	0.78	1.23	1.04
	N	687	687	686	688	687	678	689	689	688	689	685	689
Արական	Mean	4.55	4.55	4.55	4.06	3.93	4.19	5.72	5.70	4.90	6.29	6.36	5.35
	Median	4.70	4.75	4.80	4.11	4.00	4.17	5.82	5.88	5.25	6.50	7.00	5.44
	Std. Deviation	0.56	0.57	0.62	0.54	0.62	0.61	0.81	0.98	1.70	0.72	0.98	0.95
	N	320	320	318	320	320	315	320	320	320	320	319	320
Ընդհանուր	Mean	4.43	4.42	4.45	4.00	3.88	4.11	5.42	5.35	4.31	6.23	6.16	5.03
	Median	4.60	4.60	4.60	4.05	3.89	4.11	5.54	5.43	4.25	6.25	6.50	5.11
	Std. Deviation	0.67	0.70	0.70	0.58	0.64	0.64	0.93	1.13	1.77	0.76	1.16	1.04
	N	1007	1007	1004	1008	1007	993	1009	1009	1008	1009	1004	1009

Նշանակալի կապեր սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների հետ

Նույնասեռական անձանց նկատմամբ դիրքորոշում

Սեռ $p<0.001$, $R^2=0.014$
Մասնագիտություն $p<0.01$, $R^2=0.006$
Եկամուտ $p<0.001$, $R^2=0.004$

Բիսեքսուալ անձանց նկատմամբ դիրքորոշում

Սեռ $p=0.017$, $R^2=0.006$
Մասնագիտություն $p<0.001$, $R^2=0.014$
Եկամուտ $p<0.001$, $R^2=0.062$

Տրանսգենդեր անձանց նկատմամբ դիրքորոշում

Սեռ $p<0.001$, $R^2=0.048$
Մասնագիտություն $p<0.001$, $R^2=0.012$
Եկամուտ $p<0.001$, $R^2=0.024$
Բնակավայրի տիպ $p<0.001$, $R^2=0.091$
Արժեքային առաջնայնություն $p<0.001$, $R^2=0.016$

ԱՂՅՈՒՍԱԿ 12. Առնական կանանց և կանացի տղամարդկանց նկատմամբ դիրքորոշումները և փոխկապվածությունը

D1_Սեռը		E3_Առնական կնոջ հետ ագրեսիվորեն կվարվեի:	E3_Կանացի տղամարդկանց ագրեսիվորեն կվերաբերվեի:	E3_Կանացի վարքագիծ ու արտաքին ունեցող տղամարդուն կարհամարհեի:	E3_Տղամարդու կեցվածք ունեցող կանանց կծաղրեի:	E3_Կանացի տղամարդկանց հետ ինձ անհարմարավետ եմ զգում:	E3_Առնական կանանց հետ անհարմար եմ զգում:
Իգական	Mean	3.66	4.18	5.40	3.56	5.44	4.81
	Median	4.00	4.00	6.00	4.00	6.00	5.00
	Std. Deviation	1.948	2.064	1.849	2.012	1.688	1.857
	N	673	669	676	679	632	635
Արական	Mean	4.54	5.05	6.16	4.42	5.98	5.33
	Median	4.00	6.00	7.00	4.00	7.00	6.00
	Std. Deviation	2.027	1.980	1.375	2.063	1.393	1.711
	N	312	311	315	315	291	302
Ընդհանուր	Mean	3.94	4.46	5.64	3.83	5.61	4.98
	Median	4.00	4.00	6.00	4.00	6.00	5.00
	Std. Deviation	2.014	2.076	1.747	2.067	1.620	1.827
	N	985	980	991	994	923	937

		E3_Առնական կնոջ հետ ագրեսիվորեն կվարվեի:	E3_Կանացի տղամարդկանց ագրեսիվորեն կվերաբերվեի:	E3_Կանացի վարքագիծ ու արտաքին ունեցող տղամարդուն կարհամարհեի:	E3_Տղամարդու կեցվածք ունեցող կանանց կծաղրեի:	E3_Կանացի տղամարդկանց հետ ինձ անհարմարավետ եմ զգում:	E3_Առնական կանանց հետ անհարմար եմ զգում:
E3_Առնական կնոջ հետ ագրեսիվորեն կվարվեի:	Pearson Correlation		0.579**				
	Sig. (2-tailed)		0.000				
	N		959				
E3_Կանացի վարքագիծ ու արտաքին ունեցող տղամարդուն կարհամարհեի:	Pearson Correlation				0.387**		
	Sig. (2-tailed)				0.000		
	N				978		
E3_Կանացի տղամարդկանց հետ ինձ անհարմարավետ եմ զգում:	Pearson Correlation						0.559**
	Sig. (2-tailed)						0.000
	N						892

ԱՂՅՈՒՍԱԿ 13. ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դիրքորոշման և առասպելների փոխկապվածությունը

		Դիրքորոշում ... անձանց նկատմամբ		
		E1_ Նույնասեռական	E2_ Բիսեքսուալ	E3_ Տրանսգենդեր
B3_Նույնասեռականների թիվը կավելանա, եթե հանրությունը չպնդի, որ հետերոսեքսուալությունը հարաբերությունների միակ ճիշտ ձևն է:	Pearson Correlation	-0.009	0.040	-0.076*
	Sig. (2-tailed)	0.777	0.206	0.016
	N	1007	1008	1009
B3_Նույնասեռականության նկատմամբ ամենուր եւ մշտապես գոյություն է ունեցել և գոյություն ունի բացասական վերաբերմունք:	Pearson Correlation	0.016	0.071*	-0.029
	Sig. (2-tailed)	0.604	0.024	0.354
	N	1007	1008	1009
B3_Նույնասեռականությունը չի հանդիպում կենդանիների կամ այլ կենդանի էակների մոտ:	Pearson Correlation	0.125**	0.169**	0.057
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.069
	N	1007	1008	1009
B3_Այն երեխան, որը մեծանում է նույնասեռական ընտանիքում, միանշանակ նույնասեռական կլինի:	Pearson Correlation	0.073*	0.070*	0.012
	Sig. (2-tailed)	0.020	0.025	0.701
	N	1007	1008	1009
B3_Հայաստանում ապրող նույնասեռականներն իրենց սեռական կողմնորոշումը փոխել են «արևմտյան արժեքների» ազդեցության տակ:	Pearson Correlation	0.076*	0.188**	0.036
	Sig. (2-tailed)	0.017	0.000	0.247
	N	1007	1008	1009
B3_Եվրամիությանը միանալու համար Հայաստանը պետք է օրինականացնի նույնասեռ ամուսնությունները:	Pearson Correlation	-0.001	0.046	0.001
	Sig. (2-tailed)	0.963	0.148	0.978
	N	1007	1008	1009

**. Correlation is significant at the 0.01 level (2-tailed). *. Correlation is significant at the 0.05 level (2-tailed).

ԱՂՅՈՒՍԱԿ 14. ԼԲՏ անձանց ժխտումը՝ որպես ուսուցիչ

		E4_Լեսբիներին չպետք է թույլատրվի աշխատել երեխաների հետ (օրինակ՝ որպես ուսուցչուհի):	E4_Գեյերին չպետք է թույլատրվի աշխատել երեխաների հետ (օրինակ՝ որպես ուսուցիչ):	E2_Բիսեքսուալ տղամարդը չպետք է դասավանդի դպրոցում:
N	Valid	1003	1004	982
	Missing	14	13	35
Mean		4.72	4.72	4.77
Median		5.00	5.00	5.00
Mode		5	5	5
Std. Deviation		0.950	0.951	0.783
Minimum		1	1	1
Maximum		5	5	5

ԱՂՅՈՒՍԱԿ 15. ԼԳԲՏԻ իրավունքների և նրանց նկատմամբ դիրքորոշումների փոխկապվածություն

		Դիրքորոշում ... անձանց նկատմամբ		
		E1_Նույնասեռական	E2_Բիսեքսուալ	E3_Տրանսգենդեր
E4_Մեր երկրում ԼԳԲՏԻ անձանց իրավունքները պաշտպանված են:	Pearson Correlation	0.054	-0.091**	0.078*
	Sig. (2-tailed)	0.121	0.009	0.026
	N	811	810	811
E4_ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների գոյությունն անհրաժեշտություն է մեր երկրում:	Pearson Correlation	-0.448**	-0.241**	-0.434**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	979	979	980
E4_Օրենքը պետք է թույլատրի նույնասեռ ամուսնությունները:	Pearson Correlation	-0.335**	-0.189**	-0.280**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	1003	1004	1005
E4_Նույնասեռական հարաբերությունները պետք է արգելվեն օրենքով:	Pearson Correlation	0.413**	0.236**	0.338**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	997	998	999
E4_Լեսբիներին չպետք է թույլատրվի աշխատել երեխաների հետ (օրինակ՝ որպես ուսուցչուհի):	Pearson Correlation	0.350**	0.238**	0.284**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	1000	1001	1002
E4_Գեյերին չպետք է թույլատրվի աշխատել երեխաների հետ (օրինակ՝ որպես ուսուցիչ):	Pearson Correlation	0.322**	0.231**	0.271**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	1001	1002	1003
E4_Լեսբի զույգը, ինչպես հետերոսեքսուալ զույգը, պետք է երեխա որդեգրելու իրավունք ունենա:	Pearson Correlation	-0.320**	-0.151**	-0.287**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	980	981	982
E4_Գեյ զույգը, ինչպես հետերոսեքսուալ զույգը, պետք է երեխա որդեգրելու իրավունք ունենա:	Pearson Correlation	-0.335**	-0.151**	-0.294**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	985	986	987
E4_ԼԳԲՏԻ շքերթները պետք է արգելվեն:	Pearson Correlation	0.218**	0.130**	0.262**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	986	987	988
E4_ԼԳԲՏԻ անձինք, որոնք բացահայտել են իրենց սեռական կողմնորոշումը, արժանի են հիացմունքի իրենց քաջության համար:	Pearson Correlation	-0.372**	-0.290**	-0.343**
	Sig. (2-tailed)	0.000	0.000	0.000
	N	987	988	989
E4_Լեսբի/գեյ մարդիկ պետք է դադարեն իրենց ապրելակերպը դիմացինի վզին փաթաթել:	Pearson Correlation	0.109**	0.119**	0.135**
	Sig. (2-tailed)	0.001	0.000	0.000
	N	986	987	988

*. Correlation is significant at the 0.05 level (2-tailed). **. Correlation is significant at the 0.01 level (2-tailed).

Օգտագործված գրականության ցանկ

Սոցիոսկոպ և Փինք Արմենիա (2012). ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում,
https://issuu.com/pinkarmenia/docs/lgbtsurvey/1?e=3748946/4344443

Սոցիոսկոպ և Փինք Արմենիա (2015). ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա,
https://issuu.com/pinkarmenia/docs/lgbtemigration

Փինք Արմենիա. (2010). «Մենք և մեր իրավունքները» (2010) ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության և իրավական վերլուծության համառոտ նկարագիր,
https://issuu.com/pinkarmenia/docs/waor/1?e=3748946/10690319

Փինք Արմենիա. (2011). ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2011,
http://www.pinkarmenia.org/2012/02/lgbtreport2011/

Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ (2013),
http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtmonitoringarm/1?e=3748946/10677801

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. (2015). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015,
http://armstat.am/am/?nid=82&id=1718

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում (2012),
http://hcav.am/wp-content/uploads/2013/02/Report-Armenian1.pdf

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնություն և Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ (2016). 2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց,
http://hcav.am/wp-content/uploads/2016/02/CONST_observation-report_arm.pdf

Amnesty International. (2013). Armenia: No space for difference.Retrieved from,
https://www.amnesty.org/en/documents/eur54/002/2013/en/

Asian Development Bank. (2014). Asian development outlook 2014.

Armenian NGOs Coalition/HRHF (2014). The status of human rights of women and lesbian, gay, bisexual, transgender people in the Republic of Armenia,
http://www.pinkarmenia.org/publication/UPR2014Armenia.pdf

Carroll, A. & Quinn, S. (2009). Forced out: LGBT people in Armenia. Report on ILGA-Europe/COC fact-finding mission,
http://www.ilga-europe.org/sites/default/files/Attachments/forcedoutarmenia.pdf

Caucasus Research Resource Centers/CRRC. (2013). Attitudes towards homosexuality in the South Caucasus,
http://crrc-caucasus.blogspot.am/2013/07/attitudes-towards-homosexuality-in.html

Caucasus Research Resource Centers/CRRC. (2014). Caucasus barometer: Public perceptions on political, social, and economic issues in South Caucasus countries,
http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2013/CB2013_public%20presentation_English.pdf

Council of Europe. (2011). Discrimination on grounds of sexual orientation and gender identity in Europe,
http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/LGBTStudy2011_en.pdf

Economist Intelligence Unit. (2014.) Armenia country report.

Freedom House. (2015).Freedom in the world: Armenia,
https://freedomhouse.org/report/freedom-world/2015/armenia

Human Rights House Yerevan. (2015). Follow up report: Concluding observations adopted by the Human Rights Committee at its 105th session, 9-27 July 2012

Human Rights Watch. (2016). World report,
https://www.hrw.org/sites/default/files/world_report_download/wr2016_web.pdf

ILGA (2006). LGBT world legal wrap up survey. International Lesbian and Gay Association,
http://www.rfsl.se/public/ilga_worldlegalsurvey_2006.pdf

ILGA-Europe. (2014). Annual review of the human rights situation of lesbian, gay, bisexual, trans and intersex people in Europe,
http://www.ilga-europe.org/sites/default/files/Attachments/annual_review_2014_web_version.pdf

Institute for War & Peace Reporting. (2009). Armenian gays face long walk to freedom,
http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?docid=49c0ae641e

New Generation NGO. (2012). Human side of LGBT issues in Armenia,
http://www.msmgf.org/files/msmgf//Advocacy/Human_Side_of_LGBT_Issues_in_Armenia1.pdf

OSCE (2012). Retrieved hate crimes in the OSCE region: Incidents and responses: Annual report 2011,
http://www.report-it.org.uk/files/osce_odihr_2011_hate_crime_report_full_version.pdf

Pew Research Center. (2013). The global divide on homosexuality,
http://www.pewglobal.org/2013/06/04/the-global-divide-on-homosexuality

PINK Armenia et al. (2012). Human rights violations of lesbian, gay, bisexual, and transgender (LGBT) people in Armenia: A shadow report,
http://www2.ohchr.org/english/bodies/hrc/docs/ngos/LGBT_Armenia_HRC105.pdf

PINK Armenia. (2015). Short commentary on human rights situation of LGBT people in Armenia.

Saghumyan, L. (2012). Fear of loss: Stigmatization of homosexual people in Armenia,
http://www.crrc.am/hosting/file/_static_content/fellows/fellowship12/Final%20Paper_Lusine%20Saghumyan.pdf

The Danish Institute for Human Rights. (2010). Study on homophobia, transphobia and discrimination on grounds of sexual orientation and gender identity,
http://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/ArmeniaSociological_E.pdf

Tsaturyan, R. (2012). Gender roles in primary school textbooks.

United Nations. (2015). Ending violence and discrimination against lesbian, gay, bisexual, transgender and intersex people,
http://www.ohchr.org/Documents/Issues/Discrimination/Joint_LGBTI_Statement_ENG.PDF

United Nations Armenia. (2015). Need to address discrimination and intimidation against any group,
http://un.am/en/news/348#sthash.4kcr0YfV.dpuf

United Nations Development Programme (2014). Human development report: Armenia,
http://hdr.undp.org/sites/all/themes/hdr_theme/country-notes/ARM.pdf

United Nations General Assembly. (2015). Draft report of the Working Group on the Universal Periodic Review: Armenia,
www.ohchr.org/EN/HRBodies/HRC/.../A_HRC_29_11_ENG.doc

World Bank Group. (2014). Supporting equality between women and men.

Շապիկի նկարը՝ Լ. Գիորգաձե

Շապիկի դիզայնը՝ Ա. Աղաջանով

Թարգմանիչներ՝ Ա. Շահնազարյան, Լ. Հակոբյան

Սրբագրիչներ՝ Ն. Մարգարյան, Գ. Խանդիկեան, Հ. Իշխանյան, Է. Մարտիրոսյան,

Տպագրող՝ «Մաստեր Պրինտ» ՍՊԸ

Փինք Արմենիան շնորհակալություն է հայտնում Հենրիխ Բյոլ հիմնադրամի աշխատազմին՝ աշխատության մեջ ունեցած ներդրման համար: Փինք Արմենիան նաև իր երախտագիտությունն է հայտնում Լուսինե Սաղումյանին՝ անգնահատելի աշխատանքի համար:

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ն հիմնադրվել և գրանցվել է 2007 թվականին Հայաստանում:
Գործունեության առաջին իսկ օրվանից Փինք Արմենիան իրականացնում է միջոցառումներ սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ: Կազմակերպության գործունեության սկզբից կարճ ժամանակ անց՝ կազմակերպության կողմից իրականացվող գործողություններն ընդլայնվեցին. մարդու իրավունքների պաշտպանությունը և գենդերային հիմնախնդիրները ներառվեցին կազմակերպության օրակարգում: Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Փինք Արմենիան խթանում է հավասարության, ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի բնակչության և ԼԳԲՏ անձանց ընդունման գաղափարները: Փինքը ցանկանում է արժևորել և ընդունելի դարձնել բազմազանությունը մեր հասարակությունում մշակութային զգայունության խրախուսման և ցանկացած տեսակի խտրականության վերացման միջոցով: Փինքը ցանկանում է ԼԳԲՏ անձանց համար ապահով միջավայր ստեղծել՝ առաջարկելով իրավաբանական, հոգեբանական, սոցիալական պաշտպանվածություն և բարօրություն:
Կազմակերպության աշխատանքի և գործունեության մասին ավելի մանրամասն տեղեկություն հնարավոր է ստանալ Փինք Արմենիայի պաշտոնական կայքից՝ pinkarmenia.org